



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Uspenskij

v

274

II 3
8

2002

2003

ԱՐ

առաջութեան ու ապահով առաջարկութեան
ու ապահով առաջութեան առաջարկութեան
առաջութեան առաջարկութեան ապահով
ապահով ապահով ապահով ապահով
ապահով ապահով ապահով ապահով
ապահով ապահով ապահով ապահով ապահով

Ա. Ե. Բ.

ՆՈՐ

ՏԱՐՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ՆՈՐ

ՏԱՐՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ի ՊԵՏՍ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱԿԱՑՈՅ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

Հ. ՊԱԻՂՈՍ Վ. ԳԱՖԹԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԵՆ

ՀԱՏՈՐ Բ

ԳՈՐԾԱՐԱՆԱՆՈՐ ՏԱՐՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ԴԱԶԱՐ

1891

15437

ՆՈՐ

ՏԱՐՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱՐԱՆԱԿՈՐ



ԳՅՈՒԽԵ Ա.Ա.ՋԻՆ

Նախնական ծանօթութիւնք

գործարանաւոր բաղադրութիւնք . — չիւլէականութիւն .
— չամարմութիւն . — զերլուծութիւն գործարանաւոր . —
ջուգամասութիւն :

1. Առենօք Գործարանաւոր տարրաբանութիւն ըսելով
կ'իմանային՝ ի բուսոց կամ՝ ի կենդանեաց ստացուած
տարրաբանական տեսակաց (espèces chimiques) գի-
տութիւնը . սակայն հիմակ որ այսպիսի բաղադրու-
թիւններ արուեստիւ հանգերէ ևս կը ստացուին, Գործա-
րանաւոր տարրաբանութիւն ըսելով կը հասկնան՝ բնածինյ
բաղադրութեանց զիտուրիւնք : Վասն զի բնածուխը ամե-
նայն գործարանաւոր մարմնոց բաղադրութեանց մէջ կը
մտնէ : Քանի մի գեռ-անլոյծ մարմնոց հետ միանալով,
ինչպէս ջրածնի, թթուածնի կամ բորակածնի, զանազան
քանակութեամբ և զանազան զրիւք, կը կազմէ գրեթէ
ամբողջութիւնը գործարանաւոր բաղադրութեանց : Դար-
ձեալ՝ ծծումք, լուսածին, գրեթէ ամենայն մետաղակերպ
մարմինք, նոյն իսկ մետաղք, կը միանան բնածինյ հետ և
կը կազմեն շատ մը տարրաբանական տեսակներ, որք
կամ արդէն իսկ բնութեան մէջ կը գտնուին և կամ ա-
րուեստիւ կը պատրաստուին :

Կարևոր է գիտնալ միանգամայն գործարանաւոր (organique) և գործարանաւորնալ գոյացուրեանց (substance organisée) մէջ եղած տարբերութիւնը : Առաջինք՝ առան-

4373
41



ձին տարրաբանական տեսակներ են և որոշեալ բաղադրութիւն մ'ունին. կը պատրաստուին կամ կը ստացուին 'ի կենդանեաց և 'ի բուսոց. ինչպէս են թթվանջական (oxalique), գոթորական (gallique), կիտրական (citrrique) թթուուտները, բնամիզիտ (uréée), և այլն. բայց այսօր արուեստիւ պատրաստուածներուն թիւը շատ աւելի է քան զգտնուածներն 'ի բնութեան: իսկ յետինք, որ են գործարանառեալ գոյացորիչեր, են բաղադրեալ խառնուրդներ, և կը ձեանան գործարաններէ կամ գործարանաց բեկորներէ՝ որք կեանք մ'ունեցեր են, ինչպէս տերեք, մաչկք, կեղեք, արին, և այլն: Ասոնց տարրաբանական բաղադրութիւնը չի գիտցուիր և չէ հնար զանոնք առուեստիւ պատրաստել:

2. չիւլէալիանութիւն (atomicité). — Արդէն իսկ մեր Անդործարանաւոր տարրաբանութեան մէջ (§ 189) ըսինք թէ պարզ մարմնոց իւրաքանչիւրին հիւլէներն իրենց յատուկ հիւլէականութեան զօրութիւն մ'ունին: Յիշենք արդ հոս նոյն ծանօթութիւններն՝ ընդարձակելով զանոնք բնածխոյ կազմած բաղադրութեանց ուսման նկատմամբ:

Հիւլէ մի ջրածնի և հիւլէ մի քլորի կը բաղակցին՝ կազմելու համար մասնիկ մը քլորաջրածնական թթուուտ Փ. Զ. թէ ջրածնի և թէ քլոր կը յագենան փոփոխակի, որ է ըսել՝ մի և նոյն հիւլէականութիւնն ունին: Եթէ առանք թթուածինը և դիտենք զայն մասնիկ մի ջրոյ մէջ Զ² թէ, պիտի տեսնենք որ Զ հիւլէ ջրածնի հետ կը միանայ, կամ թէ ըսենք՝ երկհիւլէական է, մինչդեռ քլորը միահիւլէական է: Բորակածինը՝ աւշակի բաղադրութեան մէջ Բ Զ⁵ եռահիւլէական է. իսկ բնածուխը, ինչպէս կը տեսնենք մօրից կազի (gaz des marais) թէ Զ⁴ նշանացոյցէն՝ քառահիւլէական է. և այս վերոյիշեալ (թէ Զ⁴) բաղադրութեան մէջ կը տեսնենք միանդամայն թէ յագեալ և բնաւ ուրիշ տարեր մի հետ չի կրնար միանալ. նոյնպէս յագեալ է՝ երբ ջրածինը փոխանակուի մի և նոյն զօրութիւնն ունեցող հիւլէից հետ, ինչպէս են մօրից կազէ յառաջ եկող քլորեալ բաղադրութիւնք թէ Զ⁵. Փ. թէ Զ² Փ², թէ Զ Փ⁵, թէ Փ⁴, որ ամենքն ալ յագեալ են:

Ասոնցմէ զատ, բնածուխը կը յագենայ միանդամայն բաղմահիւլէական տարրներով. զոր օրինակ, թթուուկաքլոր:

բուկ բնածխոյ (oxychlorure de carbone) մէջ թէ Թ. Փ²՝ քառահիւլէական բնածուխը միացած է երկու հիւլէ միահիւլէական գլորի և հիւլէ մի երկհիւլէական թթուածնի հետ:

Սակայն, ըսելով թէ բնածուխը քառահիւլէական տարր մ'է, կը հասկնանք իւր ունեցած բարձրագոյն կարողութիւնը բաղակցութեանց մէջ. վասն զի կան մասնիկներ որոց մէջ բնածուխը յագեալ չէ, և իբր երկհիւլէական տարր կը գործէ. ինչպէս 'ի թթուուկն բնածխոյ (oxyde d'é-carbone) թէ Թ. Ասկայն այս մարմնոյս մէջ ալ կը պահէ գարձեալ իւր բաղակցութեան կարողութիւնը, և կը նայ միանալ կամ երկու միահիւլէական տարերց հետ, ինչպէս ընդ քլորի, տալով թթուուկաքլորուկ բնածխոյ թէ Թ. Փ², կամ երկհիւլէական տարեր մի հետ, ինչպէս ընդ թթուածնի, և կը կազմէ զթթուուտ բնածխական (acide carbonique) թէ Թ. Թ. — թէ Թ. թէ:


Գալով բորակածնի, երբ կ'ըսենք թէ եռահիւլէական տարր մ'է, կը հասկնանք միայն իւր յագենալու կարողութիւնը՝ բաղդատութեամբ ջրածնի. վասն զի կը նայ միանալ ուրիշ տարերց հետ ալ և գործել իբր հնդահիւլէական. ինչպէս քլորաջրածնատ աւշակի (chlorhydrate d'ammoniaque) թէ Զ⁴ Փ. մէջ կը յագենայ հինգ միահիւլէական տարրներով: Մի և նոյնն է ըսել նաև լուսածնի որ կը գործէ իբր եռահիւլէական՝ լուսածնեալ ջրածնի (hidrogène phosphoré) Լ. Զ⁵ մէջ, եռաքլորուկ լուսածնի (trichlorure de phosphore) Լ. Ք⁵ մէջ, և հնդահիւլէական 'ի հնդաքլորուկն Լ. Ք⁵, 'ի թթուուկաքլորուկն Լ. Թ. Ք⁵:

Համառօտելով ըսածնիս, ջրածնի, քլոր, ժահին, մանիչ են միահիւլէականք. թթուածնին, ծծումք՝ երկհիւլէականք. բորակածին, լուսածին, զառիկ, ծարիք՝ երբեմն եռահիւլէականք, երբեմն հնդահիւլէականք. բնածուխը որ քառահիւլէական է, կը գործէ երբեմն նաև իբր երկհիւլէական: Արդ այն տարերը որ այսպէս կրկին հիւլէականութիւնք ունին, իբենց այս զօրութիւնքը չեն կը նար բնաւ փոփոխիլ. այսինքն է, չենք գտներ գործարանաւոր բաղակցութիւն մը՝ որոյ մէջ բորակածինն ըլլայ երկհիւլէական կամ քառահիւլէական, և կամ բնածուխը՝ եռահիւլէական:

Մինչեւ հոս տալով շամբակաց հիւլէականութեան կարսոր համարուող ծանօթութիւնները նկատմամբ դեռանդոյժ մարմոց, անցնինք արդ գործարանաւոր բաղադրութեանց մէջ գտնուող արմատներու (radical) կամ տարեց խումբերու:

Յ. Առնունք մեզ իբր օրինակ միաքլորուկ մօրից կաղը (gaz des marais monochloré) կամ քլորուկ մեղիլածնին (chlorure de méthyle) Բն Զ³ Փ. Նկատմամբ քլորի միահիւլէական հիւլէին, զինքը յագեցնող Բն Զ³ խումբն ալ հաւասարապէս միահիւլէական է, վասն զի Բն Զ³ Փ. մասնիկը յագեալ է: Եւ եթէ դիտենք, կը տեսնենք որ Բն Զ³ խումբը կը բաղկանայ հիւլէ մի քառահիւլէական բնածուխէ, և միայն երեք հիւլէ ջրածնէ. որով բնածխոյ հիւլէականութեանց մին դատարկ կը մնայ. այս պատճառաւ Բն Զ³ խումբը կը յագենայ հիւլէ մի միահիւլէական քլորէ՝ ի քլորուկն մեղիլածնին Բն Զ³ Փ.:

Եթէ այս քլորուկ մեղիլածնին վրայ Բն Զ³ Փ. կալիոն ազդել տանք, կունենանք.



Կը տեսնենք որ քլորուկ մեղիլածնին քլորը միացաւ կալոյ հետ և կաղմեց քլորուկ կալոյ. իսկ կալիոնի մէջ թթուածինը յագեալ էր հիւլէ մի կալով և հիւլէ մի ջրածնիւ. կորոնցներով արդ կալոյ հիւլէն՝ այլ ևս յագեալ չէ. որով կ'երթայ կը միանայ Բն Զ³ միահիւլէական խումբին հետ և կը կազմէ Բն Զ³, Թ. Զ մեղիլածնական ալքոհոլը (alcool méthylique), և հօն կը յագենայ հիւլէ մի ջրածնիւ և Բն Զ³ միահիւլէական խմբով: Որով Բն Զ³ խումբը տեղափոխեցաւ Կլ Զ Թ. մասնը կան մէջ փոխանակելով զկալին: Բազմաթիւ հակաղղեցութեանց մէջ կը տեսնենք այսպիսի ջրաբնածիւեալ խումբեր (groupes hydrocarbonés), որք ամբողջութեամբ կը փոխադրուին մասնը կանց մէջ և կու տան անոնց հասարակաց բնադրոշմ մը. օրինակ իմն, Բն Զ³ խումբը՝ մեղիլածնական շարքին (série

méthylique) նշանակն է: Այս խումբերը արմատականք (radical) կը սույն:

4. Գործարանաւոր տարրաբանութեան մէջ կան երկու տեսակ նշանացոյցք. մին կ'ըսուի կազմակերպութեան (formule de constitution), ինչպէս մեղիլածնական ալքոհուի Բն Զ³, Թ. Զ նշանացոյցը կը ներկայացնէ երկու միահիւլէական խումբեր որք վերոյիշեալ մարմինը կազմելու համար լրարու հետ միացած են: Միւսը կ'ըսուի բաղադրութեան (composition), երբ ներկայացունենք մեղիլածնական ալքոհուլը Բն Զ⁴ Թ. խառն նշանացուցիւ, այսինքն է, զինքը կազմող տարրերց նշանացոյցներովն և իւրաքանչիւրին հիւլէներուն թուուվը:

Պարզ մասնիկներն որք իրենց մէջ բնածխոյ սակաւաթիւ հիւլէներ կը բավարակին, անոնց կազմակերպութեան նշանացոյցքն գտնենլը դիւրին է. իսկ բաղադրեալ մասնը կանցը՝ դժուար:

5. Այս արմատականքս, ինչպէս մեղիլածին Բն Զ³, չէղոքացած չեն և անհնարին է չէղոքացնել. այլ կը փոխադրուին մասնը կանց մէջ, և իրենց հիւլէականութեանցը վրայ խորհրդածելով կ'ըմբռնենք՝ թէ բնածուխը ինչպէս կը միանայ ինքն իրեն և ջրածնի հետ՝ ջրաբնածխուկներ (hydrocarbure) յառաջ բերելու, որոցմով կը ձեւանան բոլոր գործարանաւոր գոյացութիւնք:

Արդ գտնուելով՝ ի բնութեան բաղադրութիւն մը Բն Զ⁴ նշանացուցիւ, որ է կազմօրից կամ ջրածխուկ մեղիլածնի (hydrure de méthyle), կրնաց գտնուիլ նաև բնածխուկ մը Բն Զ³ նշանացուցիւ. ոչ, վասն զի բնածուխը Բն Զ⁴ մասնը կան մէջ յագեալ ըլլալով, երկու մասնիկ Բն Զ⁴ չեն կը ընար իւրարու հետ բազակցիլ. հետևաբար միւս յագեալ ջրաբնածխուկըն տարրեր կերպով կը կազմուին:

Առնունք, օրինակ իմն, զմանշուկ մեղիլածնին (iodure de méthyle) Բն Զ³ Ա, և ազդել տանք վրան նատր. կը քին մասնը կունք Բն Զ³ Ա մարմիոյն կորսնցնելով իրենց մանիւլը՝ կը կազմեն մանշուկ նատրիի. որով ազատ կը մը նաև կրկին միահիւլէական խումբեր Բն Զ³, որք կը միանան իւրարու հետ և կու տան հետևեալ նշանացոյցն ունեցող բնածխուկը Բն Զ³, Բն Զ³ = Բն Զ⁶.

$$\begin{array}{rcl}
 \text{Բն } \mathfrak{Q}^3 \text{ Ա} & + & \text{Բն } \mathfrak{Q}^3 \text{ Ա} \\
 \text{մաթշուկ } \text{մե}_{\text{ւ}} & & \text{մաթշուկ } \text{մե}_{\text{ւ}} \\
 \text{դիլածմի} & & \text{դիլածմի} \\
 \\
 = & \text{Բն } \mathfrak{Q}^3, \text{ Բն } \mathfrak{Q}^3 & + \quad 2 \text{ Նմ } \text{ Ա} \\
 \text{ջրածմուկ} & & \text{մաթշուկ} \\
 \text{եթիլածմի} & & \text{մաթրի} \\
 \end{array}$$

Որով կը տեսնենք թէ ջրածնուկ եթիլածնիի (hydrure d'éthyle) $\text{մէջ } \mathfrak{Q}^3 = \text{Բն}^2 \mathfrak{Q}^6$, բնածխոյ իւրաքանչիւր հիւլէին չորս հիւլէականութիւնքն ալ յագեալ են. երեքը ջրածնիւ, չորրորդը՝ բնածխոյ միւս հիւլէիւ։
 Նոյնպէս, եթէ մանշուկ եթիլածնի (iodure d'éthyle) $\text{Բն } \mathfrak{Q}^3$ և մանշուկ մեղիլածնի $\text{Բն } \mathfrak{Q}^5 \text{ Ա}$ խառնրդեան վրայ ազդել տանք նատր, կ'ունենանք.

$$\begin{array}{rcl}
 \text{Բն } \mathfrak{Q}^3 & & \text{Բն } \mathfrak{Q}^3 \\
 \text{Բն } \mathfrak{Q}^2 \text{ Ա} & + & \text{Բն } \mathfrak{Q}^3 \text{ Ա} + 2 \text{ Նմ } \text{ Ա} = 2 \text{ Նմ } \text{ Ա} + \text{Բն } \mathfrak{Q}^2 \\
 \text{մաթշուկ} & \text{մաթշուկ } \text{մե}_{\text{ւ}} & \text{մաթրի} \\
 \text{եթիլածմի} & \text{դիլածմի} & \text{եթիլածմի} \\
 \end{array}$$

և այս բաղադրութիւնը

$$\begin{array}{l}
 \text{Բն } \mathfrak{Q}^3 \\
 \text{Բն } \mathfrak{Q}^2 = \text{Բն}^3 \mathfrak{Q}^8 \\
 \text{Բն } \mathfrak{Q}^3
 \end{array}$$

է հաւասարապէս յագեալ ջրաբնածխուկ մը։ Այս կերպով կրնան յառաջ գալ բարձրագոյն ջրաբնածխուկներն են, որը իրենց մէջ բնածխոյ բազմաթիւ հիւլէներ կը բովանդակեն. և մենք սոյն օրինակներէն կրնանք հասկնալ թէ բնածուխը ինչ սկզբանք կը խմբուի մասնըկանց մէջ ինքն իրեն հետ կցելով։

6. Համարմութիւն (Homologie). — Շարք համարուն կերպաց (série de termes homologues) կ'ըսուին, գործա-

րանաւոր բաղադրութեանց այն խումբերը՝ որք տարրաբանական մի և նոյն պաշտօնը կը կատարեն, և որոց մէջ բնածխոյ և ջրածնի քանակը եղբէ մը առ միւս եղր ին \mathfrak{Q}^2 նշանացուցիւ կը տարբերի։ Հետևաբար իւրաքանչիւր շարք իրեն յատուկ ընդհանուր նշանացոյց մ'ունի. օրինակ իմն, միազօր արմատական ալքոհոներու համաբուն եղեցաց շարքին ընդհանուր նշանացոյցն է Բն⁷ \mathfrak{Q}^{2+2} թ.

Բն \mathfrak{Q}^4 թ = մեղիլածմակամ ալքոհ (alcool méthylique).

Բն² \mathfrak{Q}^6 թ = եթիլածմակամ ալքոհ (alcool éthylique).

Բն³ \mathfrak{Q}^8 թ = պրոփիլածմակամ ալքոհ (alcool propylique)

և այլն։

Եթերներու ընդհանուր նշանացոյցն է Բն⁷ \mathfrak{Q}^{2+2} թ

Բն² \mathfrak{Q}^6 թ = մեղիլածմակամ եթեր (éther méthylique).

Բն⁴ \mathfrak{Q}^{10} թ = եթիլածմակամ եթեր (éther éthylique).

Բն⁶ \mathfrak{Q}^{14} թ = պրոփիլածմակամ եթեր (éther propylique)

և այլն։

Թթուուտներու ընդհանուր նշանացոյցն է Բն⁷ \mathfrak{Q}^{2+2}

Բն³ \mathfrak{Q}^2 թ² = մրջմակամ թթուուտ (acide formique).

Բն² \mathfrak{Q}^4 թ² = քացախակամ թթուուտ (acide acétique).

Բն³ \mathfrak{Q}^6 թ² = պրոպիոնակամ թթուուտ (acide propionique)


և այլն։

Բնաբանական յատկութեանց յարաբերութիւն մի կը նկատենք՝ մի և նոյն համարուն եղերաց շարքին վերաբերող այս մարմնոց մէջ, և Բն² նշանացոյցն առ իւրաքանչիւր եղր աստիճանաբար կ'աճի. և իւր աճելով կ'աճի միանդամայն իրենց եսացման բարեխառնութիւնը, տեսակաբար կշիռն, և այլն։


7. Վելլուծութիւն զործարմանաւոր (Analyse organique). — Կարևոր եղած այս սկզբունքներս տալէ վերջ, գեռ չի սկսած գործարնաւոր բաղադրութեանց պատմութիւնը, օգտակար կը համարինք համառօտ գաղափար մի տալ թէ ինչպէս կը գտնեն այս մարմնոց հարիւրուգական բաղադրութիւնը և իրենց մասնըկանց կշիռը։

Գործարանաւոր վերլուծութիւնը այս սկզբանն վրայ հիմնեալ է. ամենայն մարմին կը բովանդակէ իւր մէջ բըն-

ածուխ և ջրածին. երբ տաքցունենք զասոնք բարձր բարեխառնութեամբ մը ընդ թթուուկի պղընձոյ և այրենք ամբողջովին, բնածուխը կը փոխարկի 'ի թթուուտ բընածխական, իսկ ջրածինն ի չուր: Հետևաբար երբ գիտենք առաջուց գործարանաւոր մարմոյն կշիռը, և յետոյ կ'իմանանք ջրոյ և բնածխական թթուուտի կշիռներն, ասոցմէ կը հետևցնենք նոյն գոյացութեան կշայն մէջ գտնուող բնածխոյ և ջրածնի քանակքն. որով պարզ համեմատութեամբ կ'իմանանք թէ նոյն գոյացութիւնը իւր մէջ որչափ առ հարիւր բնածուխ կը բովանդակէ և որչափ ջրածին:



Ձև 1. Խողովակ վերլուժման



Ձև 2. Նոյն խողովակը արուրի երիտով շրջապատուծ

Թթուածնի քանակը տարբերութեամբ կը հասկնանք. իսկ բորակածնի համար յատուկ գործողութիւն մի կատարելու է:

Բնածխոյ և ջրածնի քանակքն կշռելու համար, կ'առնունք ապակեայ դժուարահալ խողովակ մը՝ 60-70 հարիւրորդամեղը երկայնութեամբ (Ձև 1), և ծայրը բաց, ո ծայրը սուր և գոց. և խողովակին երկայնութիւնը կը շըլապատենք արուրի նուրբ երիտով մը (Ձև 2) որպէս զի կարենայ անվտանգ դիմանալ ջերմութեան աղդեցու-

թեան: Կախ կը լնունք խողովակը 40 հարիւրորդամեղը երկայնութեամբ՝ դեռ նոր հրակիղեալ պղընձոյ թթուուկիւ. յետոյ կը դնենք գործարանաւոր նիւթը՝ որ լաւ մը չորցած և թթուուկ պղընձոյ հետ խառնուած ըլլայ. հուսկուեմն, խողովակին մնացորդ մասը կը լեցնենք զուտ թթուուկ պղընձով: Այս գործողութիւնը լմնալէ վերջ, կը դնենք խողովակիը երկայնաձեւ հնոցի մը վրայ, և իւր բաց ծայրը կը հաղորդենք Ո ձեռվ խողովակի մը հետ որ առաջուց կշամած ենք և ծծմբական թթուուտի մէջ թաթխուած չեշաքարամբք, և կը ծառայէ ջրեղէն գուրուշեաց փարբիկ քանակքն իրեն ձգելու՝ որք կը բարձրանան կալիոնի լուծմանէն երբ ջերմ օդոյ հոսանքն վրայէն անցնի: Գործին այսպէս պատրաստելէ վերջ, կը սկսինք յաջորդաբար տաքցնել խողովակը, սկսելով այն ծայրէն՝ որ Ո ձեռվ խողովակին հետ հաղորդած է, ջանալով որ ամբողջ երկայնութեամբ կարմրանայ: Գործարանաւոր նիւթը կ'այրի, ձեռացած ջուրը կը հաւաքի Ո ձեռվ խողովակին մէջ, իսկ բնածխական թթուուտը՝ կալիոնիւ լեցուն խողովակին մէջ: Գործողութիւնը աւարտելէ վերջ, վերլուծման խողովակին (tube à analyse) սուրծայրը կը խորտակենք, և առաձգական խիմէ խողովակաւ մը կը հաղորդենք զայն թթուածնիւ լի կազաչափի մը հետ: Վերլուծման խողովակը կարմրացած մնալով, գործարանաւոր նիւթոյն յետին մնացորդքն որք թթուուկ պղընձոյ հետ կից չեն գտնուած և չեն կրցած անոր աղդեցութիւնը կրել, թթուածնի հոսանքին մէջ կ'այրին ամբողջովին և կը փոխարկին իջուր և ի թթուուկ բնածխական:

Ո ձեռվ խողովակին և կիպիկի գնդակաւոր կազմածին կշռոց առաւելութիւնը, կը ցուցնեն ջրոյ և բնածխական թթուուտի քանակքն՝ որ գործածուած նիւթոյն կշռքէն յառաջեկած են: Գիտնալով որ բնածխական թթուուտը իւր մէջ 27, 27 առ 100 բնածուխ կը բովանդակէ, ջուրը 14, 14 առ 100 ջրածին, կ'իմանանք այսպէսով այրած գոյացութեան կշռոյն մէջ բովանդակուած՝ սոյն երկու տա-

բերց համեմատութիւնն, և պարզ հաշտով մը կը հետեւցը-նենք իւր հարիւրորդական բաղադրութիւնը:

Չոր օրինակ, ունենանք գոյացութիւն մը որ տայ 40 առ 100 բնածուխ և 6, 67 ջրածին. իմանալնէս վերջ թէ այս գոյացութիւնը իւր մէջ չի բովանդակեր բորակածին, քլոր, ժահին, և այլն, այն ատեն 46, 67 և 100 թուոց մէջ եղած տարբերութիւնը դժուածին կը ներկայացնէ, ու բոյ կշիռը միշտ անուղղակի կերպով կ'ունենանք. և այս գոյացութեամ ամբողջական բաղադրութիւնը կ'ըլլայ.


$$\begin{array}{rcl} \text{Բ} & = & 40,00 \\ \text{Զ} & = & 6,67 \\ \text{Թ} & = & 53,33 \\ \hline & & 100,00 \end{array}$$

Բայց պէտք է գիտնալ որ եթէ թթուածնեալ գոյացութիւն մը բովանդակէ նաև բորակածին, քլոր, ժահին կամ ուրիշ տարբեր, այն ատեն թթուածնի քանակը չենք կրնար տարբերութեամբ գտնել, մինչև որ բոլոր միւս տարբերց համեմատութիւնն առաջնուց չորոշենք:

Գործարանաւոր նիւթոյ մի մէջ բովանդակուող բորակածնի քանակը գտնելու զանազան կուող բորակածնի քանակը գտնելու զանազան եղանակներ կան: Սառնցմէ մին հետեւեալն է. այսինքն, այնպէս մը տարրաբաշխելու է նիւթոյ որ կարենանք ժողվել իւր ազատ բորակածներ, չափել անոր տարածոցը և հետեւեալ տարածոցին կշիռը: Գործողութիւնը սոյն ըսկըքան վրայ հիմնեալ է. ամենայն բորակածնեալ նիւթ այլեւով թթուուկ պղընձոյ հետ, բորակածնոյն մի մասը ազատ կը թողու, միւս մասը կը փոխարկի յերկթթուուկ բորակածնի, որ անցնելով կարմիր չերմութեամբ տաքցած մետաղական պղընձոյ վրայէն՝ թթուածինը կը կորսնցունէ և կը փոխարկի զուտ բորակածնի:

Գործողութիւնը կատարելու համար կ'առ նունք վերլուծման խողովակ մը և կը լունք շատակը կերկնածխատ նատրի (Ձկ 3), յետոյ դուլակ կեզ ման յատակը երկրնածխատ նատրի (Ձկ 3), յետոյ թթուուկ պղընձոյ՝ խառն գործարանաւոր նիւթ թոյն հետ՝ զոր առաջնուց խնամօք կշուած ենք.


Վրան թթուուկ պղընձոյ, և հուսկ՝ ուրեմն մետաղական պղինձ: Այսպէս պատրաստեէ վերջ, կիզման խողովակին մի ծայրը կը փակենք, իսկ միւսը՝ կորածայր խողովակաւ (Ձկ 4) կը հաղորդենք մնդկի տաշտի մը հետ, և կը տաքցունենք երկրնածխատ նատրի մի մասն, որ արձըկելով թթուուտ բնածխական՝ գործւոյն մէջ բովանդակուող օդը կ'արտաքսէ: Երբ խողովակին մէջ ամենելն օդ չშար, որ դիւրաւ կը հասկցուի երբ ձևացած կազերը կալիոնէն




Ձկ 4. Փորձանակ բորակածնի տարածոցն չափելու

ամբողջապէս կը ծծուին, կ'արգելունք բնածխական թթուուտի ձևանալն, և մնդկի տաշտին վրայ մնդկալից փորձանակ մը գլխիվայր կը շրջենք, կը սկսինք տաքցնել յաջորդաբար վերլուծման խողովակը, չանալով հասցնել կարմիր չերմութեան՝ նախ մետաղական պղինձը, ապա գործարանաւոր նիւթոյն հետ խառն գտնուող թթուուկ պղըն-

ձոյն: Գործարանաւոր նիւթը ամբողջապէս այրելէ վերջ, երբ չի հասնիր այլ ևս բորակածին մնդկի վրայ գտնուող փորձանակին մէջ, նորէն կը տաքցունենք զերկենածխատ նատրին՝ որոյ բնածխական թթուուտը՝ կ'արտաքսէ խողովակին մէջ գտնուող բորակածինը և կը հաւաքէ փորձանաշկին մէջ: Այսպէսով փորձանակը կը բովանդակէ խառնուրդ մի բորակածին և բնածխական թթուուտի. կը մըտցունենք փորձանակին մէջ կալիոն՝ որ կը ծծէ զթթուուտ բնածխական, իսկ միացած կազը գործարանաւոր դոյա-



ՁԿ. 5. Ջերմասենեակ բորակածին մարմարական մասունքով:



ՁԿ. 6. Ջանդակ չորացուցման:

ցութեան բորակածինն է միայն: Կը չափենք դայն աստիճանաւորեալ զանգակով, և իւր տարածոցէն կը հետեւցնենք իւր կշիռը:

Թէ գործարանաւոր և թէ անգործարանաւոր մարմար վերլուծութեանց համար կը գործածուին տարրաբանական գործատանց մէջ զանազան ձեւերով գործիներ՝ մարմինները չորացունելու և չոր պահելու նպատակաւ: Գաղափար մի տալու համար կը դնենք հոս սոյն երկու պատկերներս (ՁԿ. 5, 6):

8. Որոշումն մասնըկան գործարանաւոր վերլուծութեամբ կ'իմանանք միայն մարմար հարիւրոդական բաղադրութիւնը, առանց ունենալու անոնց նշանացոյցքն և մասնըկական կշիռներն: Օրինակ իմըն, գտած ըլլանք թթուուտի մը հետևեալ բաղադրութիւնն:

$$\text{Բ} = 40,00$$

$$\text{Զ} = 6,67$$

$$\text{Թ} = 53,33$$

$$\underline{100,00}$$

Ջանազան համեմատութեանց ձեռօք պիտի գտնենք որ այս թիւերը կրնան ներկայացուիլ (բնածխոյ հիւէական կշիռն ըլլալով 12, ջրածնի 1, և թթուածնի 16) 2 հիւէ ըընածխով, և ջրածնիւ, և 2 թթուածնիւ. կամ թէ ըսենք թէ² թէ³ նշանացուցիւ. բայց այս թթուուտը կրնայ ունենալ միանգամայն թէ⁴ թէ⁵ նշանացոյցն, կամ ասոր բազմապատիկներէն մին նոյն մնալով իւր հարիւրորդական բաղադրութիւնը. ուրեմն այս նշանացոյցներէն ո՞րը պիտի ընտրենք, կամ թէ ինչ է իւր մասնըկական կշիռը:

Մեր Անգործարանաւոր տարրաբանութեան մէջ մարմար մասնըկական կշոյն վլայ խօսած ատեննիս ըսկինք միայնգամայն, որ եթէ ցնդական մարմին մը ըլլայ որոյ մասնըկական կշիռն կը փնտանք, պէտք է բազմապատկեւ իւր գործինաց խուրիւնն ընդ 28, 88 թուով, և կ'ունենանք անոր մասնըկական կշիռն (Հատ. Ա. § 52).

$$\text{ԽՊ.} \times 28, 88 = \text{ՄԿ.}$$

Արդ, մեր վերոյիշեալ օրինակին մէջ, մարմար գոլորշեաց խստութիւնն է 2, 077. որով կ'ունենանք

$$2, 077 \times 28, 88 = 60:$$

Ուրեմն ըսել է թէ ասոր մասնըկական կշիռն է 60:

Գտնելով ուրեմն այս մարմարո (քացախական թթուուտի) մասնըկական կշիռն և հարիւրորդական բաղադրութիւնը, որպէս զի կարենանք գտնել միանգամայն իւր նշանացոյցը, պէտք է ցնենք հոս հետևեալ համեմատութիւնները, որոցմէ պիտի հետևցնենք թէ 60 կշռող մասնըկան մէջ որչափ բնածուխ, որչափ թթուածին և որչափ ջրածին կը գտնուի.

$$\begin{array}{lll} 100: 40, 00 = & 60: \text{m} & 8 \\ 100: 6, 67 = & 60: \text{r} & \\ 100: 53, 33 = & 60: \text{s} & \end{array}$$

Հաշիւներն ընելով կը գտնենք որ $m = 24, r = 4, s = 32$. այսինքն, քացախական թթուուտի 60 կշռող մասնիկը՝ կը բովանդակի իւր մէջ ՚ի կշռո՞ 24 բնածուիս, և ՚ըրածին և 32 թթուածին։ Որդ 24 բնածուիս՝ է 2 հիւէք բնածիոյ (հիւէն կշռելով 12), և ջրածին կը ներկայացնէ 4 հիւէք ջրածնի, և 52 թթուածին՝ կը ներկայացնէ կրկին հիւէք թթուածնի։ Ուրեմն, քացախական թթուուտի մասնիկը կը ներկայացնի Բն² Զ⁴ Թ² նշանացուցիւ։

9. Չուզամասնութիւն (Isométrie). — Երբ երկու տարրեր մարմինք ունենան մի և նոյն հարիւրորդական բաղադրութիւնը, կ'ըսենք թէ զորգամատնիք (isomères) են։

Եթէ զորգամասն մարմոց իւրաքանչիւրին մասնըկանց կիւներն իրարմէ տարրեր ըլլան, բազմամասնորեամբ զորգամատնիք (isomères par polymérie) կ'ըսուին. այսպէս, Բն⁴ Զ⁴ բնածիուկը (carbure) որ Բն² Զ⁴ բնածիուկին հետ մի և նոյն հարիւրորդական բաղադրութիւնն ունի, առաջնորդ յետնոյն բազմամատնն է։

Ընդ հակառակն երբ մի և նոյն մասնըկական կիւներն ունենան և իրենց յատկութեամբք միայն իրարմէ տարրերին, կիսամասնորեամբ զորգամատնիք (isomères par métamétrie) կ'ըլլան։ Այս կիսամասնութիւնը, որ աւելի պարզ խօսելով զորգամասնորիշեն կ'ըսուի, գործարանաւոր տարրաբանութեան մէջ ստէպ կը պատահի և ամենակարենոր է գիտնալ զայն։

Չուզամասն մարմինք երբեմն տարրեր պաշտօնենք կը կատարեն. ինչպէս սովորական ալքոհօլը և թթուուկն մեդիւածնի (oxyde de méthyle) որոց բազագրութեան նըշանացոյցն է Բն² Զ⁶ Թ¹. Երբեմն ալ մի և նոյն պաշտօնը կը կատարեն. այսպէս, կան երկու բուտիլածնական ալքոհօլեր Բն¹ Զ¹⁰ Թ¹, որք թթուուկելով կու տան զորգամասն կոգեկան (butyrique) թթուուտներ Բն¹ Զ⁸ Թ²։

Մի և նոյն հարիւրորդական բաղադրութիւնն և մասնըկական կշռուն ունենալը զորգամասն մարմոց, իրենց հիւէներուն մասնըկան մէջ զանազան դիրքով շարուենէն կը

կախուի, և մենք կը ներկայացնենք զայն կազմակերպութեան նշանացուցիւ. այսպէս, եթիլածնական ալքոհօլի և թթուուկ մեդիլածնի զուգամասնութիւնը՝ հետևեալ կերպով կը բացատրենք։

Բն Զ³ — Բն Զ² — Թ Զ
եթիլածնական թթուուկ մեծ գիւղուն

Բն Զ³ — Թ — Բն Զ³
թթուուկ մեծ գիւղուն

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԱԲԱՆԱԿՈՐ ՏԱՐՐԱԲԵՅ ՈՒԹԵԱՆ

Սլքողիք. — թթուուտք. — Պարզ եթերք. — բաղադրեալ եթերք. — Սլքողիտք. — Բաղադրեալ աւշակը կամ աւշակուտք։

40. Գործարանաւոր տարրաբանութեան մէջ կան բազագրեալ արմատներ որք կը բաղկանան բնածուին և ջրածնէ, և կը գործեն իբր աղկազմք. այսպէս են։

Բն Զ³ = մեդիլածին (méthyle) Բն⁴ Զ⁹ = բուտիլածին
(butyle)

Բն² Զ⁵ = եթիլածին (éthyle) Բն⁵ Զ¹¹ = ամիլածին
(amyle)


Բն³ Զ⁷ = պրոպիլածին (propyle) Բն⁶ Զ¹³ = էքոլիլածին
(hexyle), և այլ։

Այսոնք միաղկազմ արմատներ կ'ըսուին, և իրարմէ Բն Զ² նշանացուցիւ կը տարրերին։

41. Սլքողիմերը՝ արմատոց ջրաթթուուկներն (hydroxyde կամ օքիդրիլ) են. ինչպէս Բն Զ⁵, Թ Զ (մեդիլածնական ալքոհօլ), Բն Զ⁵ մեդիլածին արմատոյն ջրաթթուուկն է. Բն² Զ³, Թ Զ (եթիլածնական կամ սովորական ալքոհօլ), Բն² Զ⁵ եթիլածին արմատոյն ջրաթթուուկն է. և այլն։

42. Միաղկազմ թթուուտները (acides monobasiques)

միազօր արմատ ունեցող ալքոհոլերու թթուուկացմանէն
յառաջ կու գան. այսպէս.



13. Պարզ եթերներն (Ether simple) արմատոց անջուր
թթուուկներն են. օրինակ իմն, ($\text{Բն } \mathfrak{Q}^3$)² Թ. կամ
 $\text{Բն } \mathfrak{Q}^5 - \text{Թ. } - \text{Բն } \mathfrak{Q}^5$, է մեղիլածնական եթեր: Վասն զի
Բն \mathfrak{Q}^3 (մեղիլածին), ըլլալով միազօր արմատ, և թթուա-
ծինը երկազօր, պէտք է երկու մասնիկ առնուլ այս ար-
մատէն, որպէս զի երկազօր տարեր մի հետ կարենայ
միանալ:


14. Բաղադրեալ եթերը (Ether composé) աղեր են որք
գործարանաւոր թթուուտէ մը կը ծագին և ալքոհոլա-
կան արմատ մ'ունին. այսպէս մեղիլմիջնական եթերը
Բն \mathfrak{Q} Թ., Թ., Բն \mathfrak{Q}^5 աղ մ'է, որ միանգամայն մրջնատ
մեղիլի (formiate de méthyle) կ'ըսուի, և յառաջ կու գայ
մեղիլածնական ալքոհլէ և մըջնական թթուուտէ, այսպէս.

$\text{Բն } \mathfrak{Q}$ Թ., Թ. $\mathfrak{Q} =$ մըջնական թթուուտ (acide formique)

$\text{Բն } \mathfrak{Q}^3$, Թ. $\mathfrak{Q} =$ մեղիլածնական ալքոհլ (alcool méthylique)

$\text{Բն } \mathfrak{Q}$ Թ., Թ., Բն $\mathfrak{Q}^3 =$ մեղիլմիջնական եթեր (éther méthyl-
formique):

15. Ալդեհիդ (Aldéhyde) ալքոհոլերու անկատար թթ-
ուուկացմանէն կը ծագին.



16. Բաղադրեալ աւշակը կամ աւշակուտք (Ammoniaques
composées կամ amines) աւշակէ յառաջ կու գան. այս-
ինքն, աւշակի ջրածնոյն մի կամ աւելի հիւէներն՝ ալքոհ-
լական արմատի մի կամ աւելի մասնըկանց հետ կը փոխա-
նակուին: Ոյսպէս օրինակ իմն, գիտնալով որ աւշակի նը-
շանացոյցն է Բ. \mathfrak{Q}^5 , կ'ունենանաք.

Բն \mathfrak{Q}^3 , Բ. $\mathfrak{Q}^2 =$ մեղիլաւշակուտ (méthylamine)

Բն² \mathfrak{Q}^5 , Բ. $\mathfrak{Q}^2 =$ հթիլաւշակուտ (éthylamine)

(Բն \mathfrak{Q}^3)², Բ. $\mathfrak{Q} =$ երկմիզիլաւշակուտ (diméthylamine)

(Բն² \mathfrak{Q}^5)², Բ. $\mathfrak{Q} =$ երկեթիլաւշակուտ (diéthylamine)

(Բն \mathfrak{Q}^3)³, Բ. = եռամեղիլաւշակուտ (triméthylamine)

(Բն² \mathfrak{Q}^5)³, Բ. = եռաեթիլաւշակուտ (triéthylamine)

Եւ կամ աւշակի ջրածնոյն մի կամ աւելի հիւէներն՝
զանազան մեղիլական արմատներու հետ կը միանան,
ինչպէս.

Բն \mathfrak{Q}^3 , Բն² \mathfrak{Q}^5 , Բ. $\mathfrak{Q} =$ մեղիլեթիլաւշակուտ (méthyléthy-
lamine)

Բն \mathfrak{Q}^3 , Բն³, Զ⁷, Բն⁵ \mathfrak{Q}^{11} , Բ. = մեղիլպրոփիլամիլաւշակուտ
(methylpropylamylamine), և այլ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴԻ

ՅԱԳԵԱԼ ԶԲԱԲՆԱԾԽՈՒԱԿԱՔ. — ՄԵԴԻԼԱԽՆԱԿԱՑ ԱԼՔՈՀԼ
ԵՒ ԴՐՄԸ ԶԱՌ-Զ ԵԿԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Յագեալ ջրաբաժինուկք. — Քարիւդ. — Մօրից կազ կամ
ջրածնուկ մեղիլածներ. — Մեղիլածնական ալքոհլ. —
Մեղիլածնական եթեր. — Քլորակերպ:


17. Յագեալ ջրաբաժինուկք (Hydrocarbures saturés) =
Բն² $\mathfrak{Q}^{2\tau} + 2$. — Յագեալ ջրաբաժնածխուկք՝ որոց առաջնին
է մօրից կազը Բն \mathfrak{Q}^4 , կը կազմեն համարուն (homologue) մարմնոց շարք մը՝ զորոնք Բն² $\mathfrak{Q}^{2\tau} + 2$ ընդ-
հանուր նշանացուցիւ կը ներկայացնենք, և իւրաքանչիւր
եզր իւրամէ ու Բն \mathfrak{Q}^2 նշանացուցիւ կը տարբերին: Զանա-
զան յատկութեամքք իւրարու շատ կը մերձենան. հակազ-
գակներէ (réactif) քիչ կը յարուին. բնաւ տարր մը ու-
ղակի իւրենց չեն ձգեր՝ վասն զի յագեալք են. եթէ քլորի
յարակից գտնուին՝ փոխանակութեամք բաղադրութիւնն-
ներ յառաջ կը բերեն: Այսոնց առաջնին եզերքն (termes)
ի սովորական բարեխառնութեան կազայինք են. հինգ-
երորդէն սկսեալ, որ է ջրածնուկ ամիլածնի (hydrure

դ'ամյլե) Բնէ Զ¹², հեղուկ վիճակ ունին. յետինս կ'եռայ յ30°ի, և երթալով քանի որ մասնը կունք աւելի ևս կը բազագրին՝ իրենց եռացման կէտն և խտութիւնն ևս կը բարձրանայ: Այլ և այլ եղանակօք կը պատրաստուին. գլխաւորաբար կը գտնուին՝ ի բնութեան և իրենց խառնրդեամբ զբարիչ կը կազմեն, ուսկից հանած են տարրաբանք այս համաբուն մարմնոց բոլոր շաբքը՝ սկսեալ ջրածնուկ բուտիւածնէ (hydrure de butyle) Բնէ Զ¹⁰ որ կ'եռայ՝ ի 0°ի, մինչև ցհնդետասաններորդ եղը Բնէ Զ⁵² որ կ'եռայ 255—260° աց մէջ:

48. Քարիւլ (Pétrole). — Քարիւլը թէ և հնուց՝ ի վեր ծանօթ մարմին մ'եղած է, և նոյն ժամանակներու մէջ զանազան տեսակ գործածութիւններ ունեցած, սակայն այլ և այլ անսպատեհութեանցը պատճառաւ երկար տաեն զրեթէ բոլորովին երեսէ ձգուած էր: Ներկայ դարուս մէջ նոր վերածնութիւն մի ստացաւ, և այսօրս լուսաւորութեան ծառայող մարմնոց գլխաւորներէն մին է:

Կը գտնուի ի մասնաւորի յԱմերիկա, ուր կան անթիւ աղբիւրներ որ այս իւղը կը բղիան. կան նաև զանազան ջրհորներ՝ ի Պարսկաստան,՝ ի Հնդկաստան,՝ ի Ռուսաստան, յիտալիա, և այլն: Այս ջրհորները բացած միջոցնին հանքային իւղոյն մէջ խտացեալ կազերն այն աստիճանի կը միշտ հեղանիւթը որ շատ բարձրութեամբ վեր կը ցայտէ (Զե 7) և այս վիճակիս մէջ բոլորովին անզուտ ըլլալով՝ զանազան գոյններ ալ կ'ունենայ, ինչպէս սեաւ, կարմիր, գեղին կամ կանաչ: Կը գտեն թորեցնելով 45—40(0) աց մէջ, կ'ունենան հինգ տեսակ արյիշենքներ, որք են նար (naphte) կամ խինորին քարիւլոյ (essence de pétrole), կարածիք (կérosène) և լասարեր (photogène) որք աւելի սովորական անուամբ իշղը բարիւլոյ կ'ըսուին, բանձր իշղը (huiles lourdes), խոշեայար (paraffine), և բոք՝ իր մեացորդ:

Ասոնք զանազան տեսակ գործածութիւններ ունին. քարիւլոյ խինորինը կը ծառայէ չրդեղոց (verniss) պատրաստութեան, սետինելորդ (résine) և առաձգական խիժերը (gomme élastique) լուծելու, իւղային բիծերը չնշելու, և այլն: Թանձնի իշղերով կ'օծեն մեքենաները: Խոշեայարը կը գործածեն մոմեր շինելու. խառնուրդ մէտ




Զե 7. Քարիւլի հոսութ ի Ջրհորէ

հաստատուն բնածխուկներու որք Բ.ԵԴ ջ²⁷⁺² նշանացոյցն ունին. կը հալի 50—60⁰ աց մէջ. անլուծական է՝ ի ջուր, լուծական յալքով և յեռացեալ եթեր, ՚ի կնդրիտ (benzine), և այլն: Լուծելով զասիկայ ցնդական իւղոյ մի մէջ կը քսեն պատերու, որոց վրայ անթափանցիկ խաւ մի կազմելով՝ կը պաշտպանէ զանննիք խոնաւութենէ:

Վերջերս կրցան զքարիւղը հաստատուն մարմնոյ ևս վերածել և իւր փոխադրութիւնը մեծապէս դիւրացը ներ:

19. Քարիւղի ծագման վրայ զանազան կարծիքներ կան. Ըստ ոմանց քարիւղը բրածոյ ածուխներու թորեցմանէն յառաջ կու գայ. ասոնց հակառակ այլք՝ ածուխը այլափոխութիւն կրած քարիւղ կը համարին. և բայ կողմանց ենթադրութիւնքն ալ անհիմն են:



Զե. 8. Հաւաքութ մօրից կավ

Հատ մը գիտնականք կը համարին թէ այս հանքային իւղը բոյսերէ ձևացած ըլլայ որք դարերով առաջ աշխարհիս վրայ եղած յեղաշրջութեամբք երկրիս տակ թաղուելով դանդաղ և յարաւել տարրաբաշխութեան ենթարկուած ըլլան: Ասոնց խորհրդածութիւնը բանաւոր և ընդունելի կ'երեւէ:

Կան և այլք որք կը կարծեն թէ քարիւղը պարզապէս հանքային մարմիններէ յառաջ գայ, բնածուխ և ջրածին երկրիս ծոցը իրարու հետ բաղակցելով՝ զքարիւղ կազմեն: Այս ենթադրութիւնս ալ անհիմն չէ, վասն զի կը տեսնենք որ տար արանական գործատանց մէջ հանքային

մարմիններով միայն՝ բնածխոյ և ջրածնի բաղակցութիւնք կը ստանանք:


20. Ջրածնով մեղիլածնի կամ մօրից կազ (gaz de mairais) = Բ.Է ջ¹. — Այս կազը կը գտնուի ճահիճներու տղմոցը մէջ, և գործարանաւոր նիւթոց ապականութենէն կը ձևանայ: Կրնան ժողվել զայն ապակեայ ջրալից ցի մէջ շրջելով զլիսիվայր նոյն վլը տիղմերուն վրայ (ջկ 8): Այն դիւրաբորքը կազն է՝ որ շատ մը երկիրներէ կ'ելնէ, ինչպէս, օրինակ իմն, Հնդկաստանէ, Չինաստանէ, կասպից ծովու եղերքներէն, և այլն. կը բղիք առատութեամբ նաև Ամերիկոյ և Գանաստայի քարիւղոյ աղբիւրներէն: Ցածախ առատութեամբ կը ժողվի հանածիոյ (Lille) բովկերուն մէջ:

Կը պատրաստեն՝ տաքցունելով եղջեր մի մէջ խառնուրդ մը 2 մասն բիւրեղացեալ քացախատի կալոյ, 2 մասն այրեցական կալոյ և 3 մասն կենդանի կրոյ, ձևացած կազը կը հաւաքեն սնդկի տաշտի վրայ.


$$\text{Բ.Է}^2 \text{ թ.}^2 \text{ կ.լ.} + \text{ կ.լ. ջ. թ.} = \text{ Բ.Է}^3 \text{ կ.լ}^2 + \text{ Բ.Է}^4 \\ \text{քացախատ} \quad \text{կալիոմ} \quad \text{բնածխատ} \quad \text{ջրածնով} \\ \text{կալոյ} \quad \text{կալոյ} \quad \text{մեղիլածնի}$$

21. Ջրածնուկն մեղիլածնի անգոյն կազ մէ, անհոտ, քիչ լուծական ջրոյ մէջ, և իւր խոտութիւնն է 0, 5576: Շնչառութեան չի գար, սակայն թունաւոր ալ չէ. տըժոցն բոցով մը օդոյ առնե կը վառի. և եթէ խառն ըլլայ օդոյ հետ՝ վառած ատեն զօրաւոր կերպով կը պայթի: Այս գէպքս յաճախ աղիտալից կերպով կը պատահի հանածիոյ բովուց մէջ ուր երբ կը մոնեն գործաւորք ձեռքերնին ճրագ՝ որպէս զի կարենան տեսնել, մօրից կազը շառաչմամբ կը պայթի և գործաւորաց շատերը թշուառ վերջ մի կ'ունենան: Տէվի այս անպատեհութեանս գէմն առնելու համար հնարեց իւր ապահովորեան լավտերը որ սովորական լավտեր մ'է՝ մետաղեայ ցանցով շրջապատած և հետեւեալ սկզբան վրայ հիմեալ. մօրից կազը մոնելով լավտերին մէջ կը պայթի. բայց որովհետեւ մետաղեայ ցանցով մը բաժնուած է արտաքին օդէն, այս ցանցին պաղութիւնը կ'արգելու որ վառած կաղին բոցը

գուրս չանցնի, և հետեւաբար աղիտալից արկածին դէմը կ'առնու: Ներկայ ձես (Ձև 9) կը ցուցնէ մետաղեայ ցանցին ունեցած ազդեցութիւնը բոցոյն վրայ. այս ցան-



Ձև 9. Մետաղեայ ցանցին ազդեցութիւնը բոցոյն վրայ




Ձև 10. Բոցոյն անցնիլը մետաղեայ ցանցէն

ցը սաստիկ տաքնալով՝ բոցը կընայ անցնիլ դէպ 'ի միւս երեսը (Ձև 10):

22. Մեղիլածնական ալքոհիլ (Alcool méthylique) = $\text{Բ}^2 \text{ Թ}^3$. — Կը պատրաստեն փայտերէ՛ թորեցնելով զանոնք այլ և այլ անգամն կտելով կրոյ վրայ. կ'ըսուի միանցամայն ողի փայտի կամ ջրածնաւ մեղիլածնի (hydrate de méthyle):

Զուտ վիճակի մէջ անգոյն հեղանիւթ մէ, շարժուն և ոգելից հոտ մ'ունի. Ջրէ նուազ խտութեամբ և կ'եռաց 'ի 660 ի: Դիւրաբորբոք է և աժգոյն բոցով մը կը վառի. կը լուծուի ջրոյ, ալքոհիլ և եթերի մէջ. և կը լուծէ պարարտ իւղերը, իսկութիւննըն, շատ տեսակ ռետինները:


23. Թթուուկ մեղիլածնի (oxyde de méthyle) = $(\text{Բ}^2 \text{ Զ}^3)^2 \text{ Թ}^3$. — Այս մարմինս որ կ'ըսուի միանցամայն մեղիլածնական երեր, կը ստացուի տաքցունելով մեղիլածնական ալքոհուլը՝ բարկ ծամբական թթուուտի հետ.



Որով կը տեսնենք թէ պէտք է անջրատել զջրատն մեղիլածնին:

Անգոյն կազ մ'է և սաստիկ ցրտութեամբ 'ի հեղուկ կը դառնայ: Լուծական է յալքոհիլ, յեթեր և 'ի ջուր:

24. Քլորակերպ (Chloroforme) = $\text{Բ}^2 \text{ Զ}^3 \text{ Գ}^5$. — Կ'ունենանք այս մարմինը՝ եթէ ազդել տանք սովորական ալքոհուլ քլորուկ կրածնի վրայ: Հակազդեցութեան միջոց քլորուկ կրածնոյն ազատ թողած քլորը՝ կը փոխարկէ զալքոհիլ 'ի քլորան (chloral) $\text{Բ}^2 \text{ Զ}^3 \text{ Թ}^3$, և այս առաջ կրոյ ազդեցութեամբ կը կրկնաբաշխի 'ի քլորակերպ և 'ի մընական բրուռուտ:



Եւ որովհետեւ քլորուկ կրածնին՝ է միանցամայն թթուուկիչ, կ'եղծանէ մընական թթուուտը և կը փոխարկէ ի թթուուտ բնածխական.

$$\begin{array}{rcl} \text{Բն } \mathfrak{Q}^2 \theta^2 & + & \theta = \text{Բն } \theta^2 & + & \mathfrak{Q}^2 \theta \\ \text{մրջակամ} & & \text{թթուածիմ} & & \text{բմածխակամ} \\ & & & & \text{չուր} \\ \text{թթուուտ} & & & & \text{թթուուտ} \end{array}$$

Ուրեմն, ալքոհօլին վերջնական փոխարկութիւնը՝ ի քլորակերպ և՝ ի բնածխական թթուուտ՝ հետևեալ հաւասարութեամբ կը ներկայացուի.

$$\begin{array}{rcl} \text{Բն}^2 \mathfrak{Q}^6 \theta & + & \theta^6 & + & \theta^2 = \text{Բն } \mathfrak{Q}^3 & + \\ \text{ալքոհիլ} & & \text{քլոր} & & \text{թթուածիմ} & \text{քլորակերպ} \end{array}$$

$$\begin{array}{rcl} + & \text{Բն } \theta^2 & + & 3 \mathfrak{Q} \theta & + & \mathfrak{Q}^2 \theta \\ \text{բմածխակամ} & & \text{քլորազրածմակամ} & & \text{չուր} \\ \text{թթուուտ} & & \text{թթուուտ} & & & \end{array}$$

որ կը ցուցնէ քլորուկ կրածնոյն կատարած պաշտօնը՝ տաւով ամէն անգամ քլոր և թթուուտին:

Գործողութիւնը կը կատարուի թորեցմամբ, և թորեալ հեղանիւթը երկու կարգէ կը բաղկանայ՝ յորոց սոորիննէ անգուտ քլորակերպ: Կը բաժնեն զայն, կը լուան նախ ջրով և ապա բնածխատ կալւոյ լուժմամբ. կը զտեն յետոյ քլորուկ կրածնի վրայ:

25. Անդոյն և ամենաշարժուն հեղանիւթ մ'է. Եթե քային յատուկ և ախորժելի հոտ մ'ունի. խտութիւնն է 1, 48. Կ'եռայ 600 ի: Լուցկեաւ կամ ճրագով չի բորբքիր: Ջրոյ մէջ ամենաքիչ լուծականն է, սակայն դիւրաւ կը լուծուի յալքոն և յեթեր: Կը լուծէ իւր մէջ ծծումբ, լուսածին, մանիչ, պարարտ մարմիններ, ուետինք, բազմաթիւ կալաքարներ, և սովորաբար գործարանաւոր գոյացութիւնն որբ առատ բնածուխ կը բովանդակեն:

26. Քլորակերպը կ'ազդէ իրը զրդուիլ լորջնաթաղանթիւ և մորթոյ վրայ, սաստիկ կակծեցնելով, կարմրացնելով և պալարեցնելով զայն: Եթէ ջրախառն գործածուիր կը ծառայէ իրը անզգայացուցիչ: Խմելով՝ կը գինովցնէ. շնչելով՝ կը թունարքէ և բուրրովին կ'անզգայացնէ:

27. Խոզարկութիւն քլորակելով յարեամ. — Քլորակերպով թունարքեալ կենդանեաց գործարանները՝ քլորակերպ կը հոտին չարաչար, երբ այս հակագդակը չափա-

զանց քանակութեամբ գործածուած ըլլայ. իսկ երբ քիչ դժոնուի արեան մէջ, իւր գոյութիւնը իմանալու համար կը գործադրեն հետևեալ եղանակը՝ որ ապահովագոյնն է: Կը լուսն արիւնը փամիշտի մը մէջ և կը տաքցունեն 400 բարեխառնութեամբ մարեմայ բաղանեաց վրայ, շանալով հասցունել օդոյ հոսանքը նոյն փամիշտին մէջ փրոյ մի ձեռօք, որ անցնելով հեղանիւթոյն վրայէն՝ կ'առնու քլորակերպին գոլորշին և կ'անցնի հնորին վրայ գտնուող կարմրացնեալ խողովակին մէջէն (Զե 44): Այն բարեխառնութեան մէջ քլորակերպին գոլորշիքը կը տարրաբաշխին և կու տան թթուուտ քլորաջրածնական, որ կ'երթայ կը հաւաքի բորակատ արծաթոյ բովանդակոյ գաւաթի մը մէջ: Եթէ սկսի ձեւանալ գտաթին յատակը վայրահոսում մի քլորուկի արծաթոյ, սափիկայ նշանն է քլորաջրածնական թթուուտի գոյութեանը յարեան՝ և հետևաբար քլորակերպի:

Գ.Լ.ՈՒԽ ԵՐՐՈՐԴԻ

ԵԹԻԿԱԾՆԱԿԱՆ ԱԼՔՈՀԼ


Ճրածնուկ եթիլածնի. — Ալքոհլ. — Խմորումն. — Խըմորեալ ըմպելիք. — Ալքոհլաչափութիւն:

28. Ճրածնուկ եթիլածնի (Hydrure d'éthyle) = $\text{Բն}^2 \mathfrak{Q}^6$. — Կը պատրաստեն այս կազը՝ զինկ-եթիլածնի (zinc-éthyle) վրայ ջուր աղդել տալով.

$$\begin{array}{rcl} (\text{Բն}^2 \mathfrak{Q}^5)^2 \text{ Զն} & + & \mathfrak{Q}^2 \theta = 2 \text{ Բն}^2 \mathfrak{Q}^6 & + & \text{Զն } \theta \\ \text{զինկ-եթիլ} & & \text{չուր} & & \text{ճրածնուկ եթիլ} \\ \text{լածիմ} & & & & \text{թթուուտ} \\ & & & & \text{լածնի} & \text{զըմկոյ} \end{array}$$

Անդոյն կազ մ'է և վառած ատեն պայծառ լոյս մ'ունի: թեթէ կապտագոյն:


29. Ալքոհլ = $\text{Բն}^2 \mathfrak{Q}^6 \theta$. — Կ'ըսուի միանգամայն ջրածնատ կրիածնի (hydrate d'éthyle) կամ ալքոհլ կրիածնական (alcool éthylique):



ՁԼ 11. Պատրակիութեան քաղցրակերպություն

Աւքոհլը շաքարային հեղանիւթոց խմորմանէն յառաջ կու գայ, "ոք կը բավանդակիեն իրենց մէջ կամ արդէն իսկ լուծեալ քաղցրանիւթ (glucose), և կամ շաքար մը՝ որ կրնայ փոխարկի քաղցրանիւթոյ:

Կը պատրաստեն արուեստից մէջ թորեցնելով խմորեալ հեղանիւթերը, ինչպէս զինին, ճակնդեղաց խմորեալ ծուծը, փեկոզներու (fécule) կամ ցորենոյ հատերու շաքարացմանէն ստացուած և խմորման ենթարկուած քաղցուն:




ՁԼ 12. Աւքոհլական խմորություն

Շաքարային հիւթը խմորմանք (fermentation) կը փոխարկի յալքոհլական հեղանիւթ. իւր զիխաւոր աղղակն է բուսական գործարանաւորեալ էակ մը որ կ'ըսուի փրփրփոր կամ լորձե գարեջրոյ (levure de bière). ասիկայ խմորման միջոց իրեն կարեւոր եղած տարեցքն ընդունելով քաղցրանիւթէն՝ կը ձևանայ և կը ծնանի. որով քաղցրանիւթը կատարեալ տարրաբաշխութիւն մի կը կրէ և՝ ի մասնաւորի յառաջ կը բերէ թթուուտ բնածխական և աւքոհլ:

Այսպէս, եթէ ապակեայ զի մը մէջ (ՁԼ 12) դնենք ալքոհլ, շաքար և փրփուր գարեջրոյ, փակենք զին բերանը պարզման խողովակ ունեցող խցանով մը, և թողունք զայն

ինքն իրեն տաք տեղւոյ մի մէջ, կը տեսնենք որ հեղուկը իսկոյն կը պղտորի, կազային բազմաթիւ գնդակներ ձեանալով կը կազմեն առատ փրփուր մը։ Այս փրփուրն է թթուուտ բնածխական որ կրնայ հաւաքիլ սնդկի վրայ շրջած փորձանակի մը մէջ։ Երբ խմորումը աւարտի կը տեսնենք որ հեղանիւթը կորսնցուցեր է իւր շաքարային համը և կը բովանդակէ ալքոհօլ։




Ձև 13. Լօժիէի գործին՝ խմորեալ հեղանիւթոց թորեցման համար

Արդի ժամանակներս արուեստից մէջ ալքոհօլի թորեցման ծառայող կազմարանք այն աստիճանի կատարելուած թեան հասած են, որ նոյն խկ մի միայն թորեցմամբ։ 930ի ալքոհօլ կ'ունենանք։ Ասոնցմէ մին է Լօժիէի գործին որ կը ծառայէ գինուոյ թորեցման, և կը բաղկանայ երկու կաթսաներէ, վերաթորեցուցիչ գործիէ մը և օձապտոյտէ (Ձև 15)։

Առաջին կաթսան՝ որոյ մէջն է թորեցնելիք հեղուկը՝

կը տաքնայ հնոցի մը ջերմութեամբ, և կը հաղորդակցի խոզովակաւ և ստորին ծորակով մը երկրորդ կաթսային հետ որ



Ձև 14. Սալվալի գործին՝ հատերէ, օլարակներէ, ճակնդեղներէ ալքոհօլ պատրաստելու

նոյնպէս լիէ հեղուկով. յետինս կը տաքնայ հնոցէն ելած կա-

զերով և նախընթաց կաթսայէն թորած գոլորշեօք: Երկրորդ կաթսային կը յաջորդէ վերաթորիչ մը, ուր բոլորովին զըտուելով ալքոհոլ իւր ջրային մասէն՝ կու գայ կը խտանայ օձապտոյտին մէջ: Այսպէսով ալքոհային հեղանիւթը վերաթորիչ դործւոյն մէջ երկուքի կը բաժնուի. յալքոհոլ որ կ'երթայ կը խտանայ օձապտոյտին մէջ, և ջրային մասանց՝ որ նորէն երկրորդ կաթսային մէջ կը գառնայ խոզովակի մը ձեռօք, ուսկից դարձեալ կ'անցնի առաջն կաթսային մէջ և կրկին անդամ մի և նոյն դործողութեան ենթարկուելով կը մերկանայ բոլորովին իւր ալքոհային մասէն: Խակ գործողութիւնը շարունակելու համար կարևոր եղած ալքոհային հեղուկը՝ հակառակ ճամբէ մը կու գայ, այն է գործւոյն ձախակրղմը գտնուող բարձրագոյն ծորակէ մը և անցնելով կարգաւ օձապտոյտէն, վերաթորիչէն, մինչև որ համար առաջին կաթսային մէջ արդէն իսկ կը տաքնայ. այսպէսով սոյն գործւոյն մէջ կիզանելի նիւթոյ ևս մեծ խընացողութիւն կ'ըլլցուի:

Կայ դարձեալ Սավալի գործին՝ պատրաստելու համար ալքոհոլ հատերէ, զիրստերէ (mélasses), ճակնդեղներէ: Այս գործւոյն մէջ ալ (Զև 44) թորելիք հեղանիւթը շարունակեալ կերպով կ'ինչնէ վերէն դէպ 'ի վար, մինչդեռ դոլորին վարէն դէպ 'ի վեր կը բարձրանայ:

30. Ալքոհոլ՝ անգոյն շարժուն և ոգեղէն ախորժելի համեկուսում կառու ունեցող հեղանիւթ մ'է. 0օի իւր խտութիւննէ 0, 8093. սովորական ճնշմամբ կ'եռայ 780ի: Զրոյ և եթերի հետ ամենայն համեմատութեամբ կը խառնուի: Մնալով բացօթեայ՝ կը ծծէ օգոյ խոնաւութիւնը: Կը լուծէ իւր մէջ շատ մը կազեր, հեղանիւթներ և հաստատուն մարմիններ, ինչպէս են թթուածին, խաժածին (cyanogenene), բնածխական թթուուտ, մանիչ, ժահին, ուսկերպական թթուուտ, լուսածնական թթուուտ, գործարանաւոր թթուուտներ, կալիոն, նատրոն, աւշակ, բազմաթիւ կալաքարածե (alcaloïdes) մարմիններ, աղեր, բորականեր, իսկութիւնք, և այլն:

Ալքոհոլ գոլորչիքն անցնելով կարմբացեալ յախճապաշեայ խողովակէ մը՝ կը տարրաբաշխին և կու տան թթուուկ բնածխոյ, մօրից կաղ և ջրածին.

$$\text{Բն Զ}^6 \text{ թ.} = \text{Բն թ.} + \text{Բն Զ}^4 + \text{Զ}^2 \\ \text{ալքոհոլ} \qquad \text{թթուուկ} \qquad \text{մօրից կազ} \qquad \text{չըածին} \\ \text{բնածխոյ}$$

Մերձեցնելով ալքոհոլի վառած մարմին մը՝ կապտագոյն և տկար բոցով կը վառի: Ի սովորական բարեխանութեան կը թթուուկի. առատ թթուումին բովանդակող մարմիններէ, ինչպէս են քլորական և քրոմական թթուուտներն: Այսպէս, եթէ քրոմական թթուուտի բիւրեղներուն վրայ լեցնենք ալքոհոլ, սաստիկ թթուուկելով խորոշ կը բռնկի:

31. Ալքոհոլ կը գործածուի իրը կիզանելի նիւթ կանթեղաց մէջ, պատրաստելու համար քլորակերպը (chloroform), կոլոնիական ջուրը (eau de Cologne), և ուրիշ շատ մը նիւթեր: Տարրաբանական գործատանց և զեղատանց մէջ իրը լուծէ կը գործածուի. կը ծառայէ նաև անդամական մարմիններն անփուտ պահելու:

Դեղսկան նիւթոց լուծումները յատուկ անուամբ կ'ըսուին ադրոնլական ներկոյտք (teintures alcooliques): Ալքոհոլով կը պատրաստեն նաև շատ տեսակ ըմպելիքներ:

32. Խմիրեալ լլմպելիք (Boissons fermentées). — Գինի. — Գինին խաղողի ծուծին խմորմանէն կը ստացուի: Կը պատրաստեն զայն ճմիկուլի խաղողը, և քաղցուն խմորման ենթարկելով 45° բարեխառնութիւն ունեցող տեղոյ մի մէջ, Խմորմանէ վերջ գինին կամաց կամաց կը պայծառանայ, և զինքը պղտորող օտար նիւթերը յատակը կը հանգչեցունէ որը մրուր կ'ըսուին: Գինին մրուրէն կը զատեն և քիչ վերջ սուսնձման (collage) կ'ենթարկեն, աւելցընելով վրան հաւկթոյ սպիտակուց կամ դոնդողիս (gelatine). զրած նիւթերնին մակարդելով աղալին (taupin) ներկայութեամբ՝ իւր հետ կը ծծէ հեղանիւթոյն մէջ գեռ առ կախ մնացած սպիտակերպ (albumeinoïde) մարմիններն և կը կազմէ անլուծական վայրահասում մի նման տարափոյ ձեան:

Գինին իւր կարմբութիւնը կճեպէն կը ստանայ. վասն զի խաղողը ճմիկէ վերջ երբ կը ձգեն քաղցուն կճեպներուն հետ օրպէս զի խմորման ենթարկուի, ձևացած ալքոհոլը կը լուծէ իւր մէջ կ'ենթապներուն գունաւորիչ նիւթերը:

Գինին բաց 'ի ջրէ և ալքոհոլէ, կը բովանդակէ իւր մէջ

նաև բորակածնեալ (azoté) և սպիտակերպ նիւթեր, գունաւորիչ և պարարտ (grasse) նիւթեր, քաղցրիտ (glycéritine), սաթական թթուուտ (acide succinique), սեր գինեմիրոյ (crème de tartre), հանքային աղեր, քլորուկը, լուսածնատք, ծմբատք, աղաղ (tannin), և այլն. ասոնցմէ զատ, ցնդական զյացութիւնք՝ յորոց ոմանք կու տան ամէն տեսակ գինիներու յատուկ հոս մը, այլք յատուկ անուշահոտութիւն մը՝ և այսու կը տարբերին իրամէ իւրաքանչիւր գինիներու: Գինիներուն բովանդակած ալքոհին՝ համեմատութիւնը փոփոխական է, և որպէս զի գինի մը կարենայ գիմանալ, առ նուազն պէտք է բովանդակէ իւր մէջ 12 առ 100 ալքոհոլ:

33. Օղիք (Eaux-de-vie.) — կը պատրաստեն օղիւները՝ թորեցնելով խմորեալ քաղցուն: Օղիք կը բովանդակակեն իրենց մէջ 40—50 առ 100 դուս ալքոհոլ. բաց ասկից, կը բովանդակեն նաև զանազան տեսակ ցնդական սկզբունքներ, բայց այնշափ քիչ քանակութեամբ՝ դրոնք չեն բաժնել. և ասոնք կու տան իւրաքանչիւր օղիներու եղական յատկութիւններ:

Կ'ունենանք զանազան տեսակ օղիներ՝ թորեցնելով այլ և այլ տեսակ զյացութիւնք. ինչպէս են զինի, խնձորանուր, ճակնդեղ, արմտեաց հատեր, գետնախնձոր, շագանակ, և այլն:

34. Գարեջուր. — Գարին շաքարային սկզբունքներ չունի, բայց ծելերով կը ձեւանայ իւր մէջ տիտաղ (diastase) անուանեալ յատուկ սկզբունք մը՝ որ անկերպարան է, անլուծական յալքոհոլ, և ասոր ազգեցութեամբ գարւոյն օսլան (amidon) կրնայ փոխարկիլ 'ի քաղցրանիւթ (glucose):

Գարեջուր պատրաստելու համար կը ձգեն նախ որ գարին ջրոյ մէջ մելանով կակլանայ և ուռի, և ապա կը տարածեն զայն տախտակի վրայ քիչ բարձրութեամբ՝ գրեթէ 150 բարեխառնութիւն ունեցող տեղոյ մի մէջ. այսպէսով գարին կը սկսի ծլլի, և գործողութիւնը կասկումն (maltagage) կ'ըսուի:

Որովհետև կասկման կարևոր եղած խոնաւութիւնը և բարեխառնութիւնը զլխաւորաբար գարնանային եղանակի մէջ է, անոր համար այս եղանակիս պատրաստուած գա-


բէջրերն ընտրելագոյնք են և կ'ըսուին մարտի գարեջուրը:

Երբ բողը կատին 2/3-ը երկայնութիւնն ունենայ կը գագրեցնեն բողը ումը՝ դնելով հատերը ընդմասնեկի մը մէջ. յետոյ կը վերածեն խոշոր փուրոյ մը, կը թրմեն 600 ի ջրոյ մէջ ուր տիտաղին ազգեցութեամբ օսլան կը փոխարկի 'ի քաղցրանիւթ: Գործողութիւնը աւարտելէ վերջ, այս շաքարեալ ծուծը կամ թէ ըսենք քաղցուն կ'եռացնեն հմուլիւ (houblon) որ կը հաղորդէ ասոր ոչ միայն իւր դառն համը և քաղցրահոտութիւնը, այլ կը ծառայէ միանդամյն երկար ատեն զինքը պահելու: Երբ հմուլեալ (houblonné) քաղցուն պաղի, կ'աւելցնեն վասն գարեջոյ փրփուր որպէս զի սկսի խմորիլ: Խմորումը աւարտելէ վերջ կ'ենէ ընտիր գարեջուրը:

Գարեջուրը կը բովանդակէ իւր մէջ չուր, ալքոհոլ, բնածխական թթուուտ, աղիտ (dextrose), չի խմորուած քաղցրանիւթ (glucose), բորակածնեալ սպիտակերպ (albuminoïde) նիւթ մը, և հանքային աղեր. քիչ ալքոհոլ կը բովանդակէ, գրեթէ 5 առ 100: Գարեջոյ լուծական մասերը կ'ըսուին մուզ կասկի (extrait de malt) սոկից կը գըտնուի իւր մէջ 5—8 առ 100:

35. Ալքոհլաքափութիւն (Alcoométrie). — Երբ հեղանիւթ մը բովանդակէ իւր մէջ չուր և ալքոհոլ, բովանդակած ալքոհին քանակն իմանալու համար՝ հեղկաչափ (aréomètre) գործով կ'առնուն իւր խտութիւնը: Կէյ-Լիւափ հնարեց հեղկաչափ մը, կամ թէ ըսենք ալքոհլաչափ (alcoomètre) մը (Զկ 45) որ հարիւր աստիճան կը բաժնուի, և այս աստիճանաց իւրաքանչիւրը կը ցուցնէ իսկոյն հեղանիւթոյն մէջ առ 100 բովանդակուած զրուտ ալքոհլին տարածոցը: Օրինակ

Զկ 45. Ալքոհոլ մի, իթէ ալքոհլաչափը ընկրմենք 150 բաքուաչափ կէյ ընկաննութիւն ունեցող ալքոհլական հեղանիւթուի: Նիւթոյ մի մէջ, և տեսնենք որ մինչև 85°



Կ'ընկդմի հեղանիւթոյն մէջ, ասկից կը հետևյնենք որ նոյն հեղանիւթը կը բովանդակէ 85 առ 100 'ի տարածոցի զուտ ալբոն: Ալբոնաչափին ցուցած աստիճանները՝ 15^o բարեխառնութեամբ միայն ամենածիշտ են՝ նոյն բարեխառնութեան մէջ աստիճանաւորուած ըլլալով. բայց որովհետև դժուար է որ հեղանիւթը միշտ նոյն աստիճանի մէջ գտնուի, անոր համար կան յատուկ ցուցակներ որք կը ցուցնեն ճշտիւ հեղանիւթոյն բովանդակած ալբոնին քանակը՝ յայս ինչ աստիճանի բարեխառնութեան և յայս ինչ աստիճանի ալբոնաչափին:

ԳԼՈՒԽ ԶՈՐԻՌՈՐԴ

ԵԹԻԼՍԾՆԾԿԱՆ ԵԹԵՐՔ. — ԱԼԲՈՆՀՔ. — ԳՈՐԾԱԲԱ. — ՆԱՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՐՄԱՏՔ


Սովորական եթեր. — Տեսութիւն եթերացման. — Մամշուկ եթիլածմի. — Ալբոնհք. — Կիտածմական ալբոնի կամ եթալ. — Սպիտակուց կիտի. — Մոմք. — Գործարանական բաղադրութիւնը:

56. Սովորական եթեր (*ρρուուկ եթիլածնի*) = $\text{Բ}^{\text{հ}} \text{ Զ}^{10}$ թ. — Այս բաղադրութիւնը սիսալ անսուամբ առ հասարակ ծրծրական եթեր (*éther sulfurique*) կը կոչուի. կը բաղկանայ մասնիկ մի ջրէ՝ որոյ ջրածնոյն 2 հիւլչներն փոխանակուած են կրկին անգամ եթիլածնական արմատէ (radical éthyle) $\text{Բ}^{\text{հ}} \text{ Զ}^3$.

$$\begin{array}{c} \text{Բ}^{\text{հ}} \text{ Զ}^3 \\ \text{ջուր} \quad \text{Բ}^{\text{հ}} \text{ Զ}^3 \end{array} \left\{ \begin{array}{l} \text{թ.} = \text{Բ}^{\text{հ}} \text{ Զ}^{10} \text{ թ.} \\ \text{եթեր} \end{array} \right.$$

Պատրաստելու համար հակագել կու տան ծծմբական թթուուտը ալբոնի վրայ՝ 140^o բարեխառնութեամբ: Գործողութիւնը կը կատարուի ապակեայ եղչեր մի մէջ, տաքունելով ծծմբական թթուուտը ալբոնի հետ. մինչ-

դեռ միւս կողմանէ կը հասնի ալբոնի անընդհատ հոսանք մը նոյն խառնրդեան մէջ (Ձկ 46) բարձր գտնուող անօթէ մը. իսկ ձեացած եթերը խառն ընդ ջրոյ և քիչ մը ալբոնի, կ'երթայ կը հաւաքի եղչեր հետ հաղորդակցութիւն ունեցող և խնամքը պաղեցուցած ապակեայ փամիշտի մը մէջ: Կ'առնուն զայն, կ'աման, կը լուան որպէս զի ծծմբային




Ձկ 46. Պատրաստելուն սովորական եթերի


թթուուտէ մաքրուի, յետոյ դարձեալ կը լուան զուտ ըլլալով, և հուսկ ապա կը վերաթորեցնեն զանազան անդամ մարեմայ բաղանեօք՝ անցնելով քլորուկ կրածնի վրայէն:

Մասնիկ մի եթերի բովանդակելով $\text{Բ}^{\text{հ}} \text{ Զ}^{10}$ թ., և մաս-


նիկ մի ալքոհիլի Բն² ջ⁶ թ., կը տեսնենք որ եթերը կը ձևանայ՝ երկու մասնիկ ալքոհիլն մասնիկ մի ջուրը արտաքսելով.



Վկյլիմասն կը համարի թէ եթերացումը կրկին գործող թեամբք կը կատարուի. նախ կը ձևանայ եթիլծմբական թթուուտ (acide éthylsulfurique).




Երկրորդ գործողութեան միջոց եթիլծմբական թթուուտը տաքնալով 440° բարեխառնութեամբ առատ ալքոհիլ հետ, կը կրկնարաշի և կու տայ ծծմբական թթուուտ և եթեր.



Իսկ ազատ մնացած ծծմբական թթուուտը կը հակազէ եղչեր մէջ հասնող ալքոհիլի վրայ, ուսկից կը ձևանայ գարձեալ նոր եթիլծմբական թթուուտ, որ ներկայութեամբ առատ ալքոհիլի կու տայ եթեր և ազատ կը թողու զթթուուտ ծծմբական. յետինա կ'ազդէ ալքոհիլի վրայ և այսպէսով կը շարունակուի գործողութիւնը:

37. Ջուտ եթերը անգոյն հեղանիւթ մէշ ամենաշարժուն, յատուկ հոտով, ջրէ աւելի թեթև, զովացուցիչ և խընկալէտ համ մ'ունի. իւր խոռութիւնն է 0.725. երբ բարեխառնութիւնն ըլլայ 420. կ'եռայ 550 ի. բոլորովին զուտ եղած ատեն՝ որ և է բարեխառնութեամբ հաստատուն մարմնոյ չի վերածուիր. Սաստիկ ցնդական է, ձեռաց վրայ քանի մի կաթիլ լեցնելով կը ցնդի բոլորովին և նոյն մասը կը պաղեցնէ չարաչար. Ջրոյ մէջ քիչ կը լուծուի. ամենայն

համեմատութեամբ կը խառնուի ալքոհիլի և փայտի ոգույն (esprit de bois) հետ. Կը լուծէ պարարտ մարմինները (corps gras), իւղերը, ուետինքը (résine), մանչը (iode), ժահինը (brome), հանքային աղերը, ինչպէս են քլորուկք երկաթոյ, ոսկոյ, և այլն. Սաստիկ դիւրավառ է և պայծառ բոցով կը բորբռքի. իւր գոլորշիկն խառնուելով օդոյ կամ թթուուծնի հետ՝ զօրաւոր կերպով կը պայթին:



Հա. 47. Պատրաստութիւն մանչով եթիւածնի

Եթէ առնունք եթեր բովանդակող գաւաթ մը և մէջ լնկղմնիք լսնոսկեայ ոլորած և տաքցած թել մը, այնպէս որ թելին ստորին ծայրը մերձենայ գրեթէ հեղանիւթոյն մակերեւութիւն, կը տեսնենք որ ոլորած թելը մեկէն կը կարմրի և միշտ նոյն վիճակի մէջ կը մնայ:

Այս երկոյթիս պատճառը եթերի գոլորշիացումն է, ու-

բոյ գոլորշիքն օդոյ հետ խառնուելով՝ լանոսկւոյն ներկա-
յութեամբ դանդաղ կրցման կ'ենթարկին:

38. Եթերի գոլորշիքն 'ի սկզբան կը գինովյնեն ըզ-
մարդ և ապա կը թմբեցնեն բոլորպին. այս պատճառաւ
վիրաբոյք կը գործածեն զայն յաճախ:

39. Մանջուկ եթիլածնի (Iodure d'éthyle) = Բէ՛ ԶՅ Ա.
— Կ'ըսուի միանգամայն մաեփարանուական երեր (éther iodhydrique): Կը պատրաստեն հակաղելէ տալով ալքոհո-
լէ՝ մանջոյ և լուսածնի վրայ: Գործողութիւնը կը կատա-
րուի տաքցունելով մարեմայ բաղանեաց վրայ ապակեայ
փամփուտ մը՝ որ կը բովանդակէ լուսածին և ալքոհու (Զւ 47): Այս փամփուշով կը հաղորդակցի երկայնորդի (allonge) մը հետ որոյ մէջ կայ մանիչ՝ խառն ապակւոյ
կտորներով. նոյն երկայնորդը ցրտացուցի (réfrigérant) մը
հետ միացած է, և յետինս այնպիսի դիրքով կեցած՝
յորում խտացած գոլորշիքն դարձեալ ապակեայ փամփուշ-
տին մէջ կը կաթին: Արդ, կը սկսին տաքցնել գործին.
ալքոհօլը գոլորշիանալով կ'անցնի երկայնորդին մէջ, կը
լուծէ քիչ մը մանիչ, կը խտանայ և կը վերադառնայ յա-
պակեայ փամփուշով. հոն հանդիպելով ալքոհու և լուսա-
ծնի, կը փոխարկի 'ի մանշուկ եթիլածնի: Գործողու-
թիւնը աւարտելէ վերջ, կը թորեցնեն հեղանիւթը մարե-
մայ բաղանեաց վրայ, կը ժողվեն մանշուկ եթիլածնին,
կը լուսն ջրով և կը չորցնեն քլորուկ կրածնի վրայ:

ի սկզբան անդոյն հեղանիւթ մ'է՝ եթերային հոտով,
բայց յետոյ կ'ըլլայ թիսագոյն. դրեթէ կրկին անդամ ջրէն
աւելի խիտ է, ըլլալով իւր խտութիւնը 1, 975. կ'եռայ
720ի: Ներկայութեամբ՝ արծաթոյ բաղմաթիւ աղերուն և
մետաղաց՝ կը տարրաբաշխի և կը կազմէ մանշուկներ:

40. Ալքոհօլ = Բէ՛ ԶՅ²⁺ Թ. — Ջրածնուկ մեղիլածնի
(hydrure de méthyle), համարուն ջրաբնածխուկներուն
(hydrocarbures homologues), ինչպէս են

Բն ԶՅ, Զ
ջրածնուկ մեղիլածնի

Բն³ ԶԴ, Զ
ջրածնուկ պրոփիլածնի, և -ըն

Բն² ԶՅ, Զ
ջրածնուկ եթիլածնի

Բն³ ԶԴ, Զ
ջրածնուկ պրոփիլածնի

կը համապատասխանեն ջրածնատ մեղիլածնի Բն Զ⁴ Թ.
համարուն ալքոհուները.

Բն ԶՅ, Թ Զ
մեղիլածնական ալքոհու

Բն² ԶՅ, Թ Զ
եթիլածնական ալքոհու

Բն³ ԶԴ, Թ Զ
պրոփիլածնական ալքոհու, և -ըն

որոց ընդհանուր նշանացոցն է Բն^τ Զ^{2τ+2} Թ. և իւրա-
քանչիւր եզր կը տարրերի իւր յաջորդէն Բն Զ² նշանա-
ցուցիւ:

Այս ընդհանուր նշանացուցին համապատասխանող շատ
մը ալքոհուներ սոլորպական ալքոհուի հետ մէկտեղ կը գտն-
ուին զանազան օղիներու մէջ, ինչպէս ճակնդեղաց, ճա-
տերու, գետնախնձորներու, և այլն. և ամենան ալ անծա-
նօթ խմորմանէ յառաջ կու դան: Այս շարքէն են շատ մը
ալքոհուներ, որոցմէ քանի մի կարևորագոյնքն յիշենք:

41. Ալքոհու ալիլածնական կում ջրածնատ ամիլածնի
(Alcool amylique) = Բն³ Զ¹² Թ. — Կը գտնուի տու-
տութեամբ՝ ճակնդեղաց և գետնախնձորներու իւղոյն մէջ.
կ'եռայ 1320ի. անախորժ հոտ մ'ունի և անլուծական է 'ի
ջուր: Թթուուկացմամբ՝ կու տայ թթուուտ մրուանական
(valérique) Բն³ Զ¹⁰ Թ², որ նոյն է մրուանի (va-
láriane) արմատէն ելած թթուուտին հետ: Կան դեռ ու-
րիշ երեք ամիլածնական ալքոհուներ որը թթուուկացմամբ
կու տան Բն³ Զ¹⁰ Թ² նշանացուցիւ թթուուկաներ, և ե-
րեքն ալ զուգամասունք (isomère) են առաջնոյն:

42. էկզիլածնական ալքոհու (Alcool hexylique) =
Բն³ Զ¹⁴ Թ. — Խալողի չեչէն կ'ելլէ. կ'եռայ 1550ի և
թթուուկացմամբ կը փոխարկի 'ի թթուուտ այծենական
(caproïque) Բն³ Զ¹² Թ²:

43. Եթիլածնական ալքոհու (Alcool heptylique) =
Բն⁷ Զ¹⁶ Թ. — Կախլնթացին նման խալողի չեչէն կ'ելլէ.
կ'եռայ 1650ի և թթուուկելով կը փոխարկի 'ի թթուուտ
գինելական (oenanthylie) Բն⁷ Զ¹⁴ Թ²:

Այս ալքոհուները անախորժ հոտ և համ մի կը հաղոր-
դեն զանազան տեսակ նիւթերէ ելնող օղիներու, ինչպէս

Են խաղողի չեղբէն, հատերէն, գետնախնձորներէն եւ լածներն, և այլն։

44. Կիտածնական ալքոհիլ կամ եթալ (Alcool cétylique կամ éthal) = $\beta_{\text{h}}^{16} \mathfrak{D}^{34}$ թ. — Կը գտնուի կիտի սպիտակոցին (blanc de baleine) մէջ՝ արմաւական եթերի (éther palmitique) կերպարանոք։ Կիտի սպիտակոցին բարդարութիւնն ըլլալով $\beta_{\text{h}}^{16} \mathfrak{D}^{64}$ թ.՝ եթէ հալեցնենք կալիոնի հետ կը կրկնաբաշխի յալքուհի կիտածնական և յարմաւատ կալոյ։

$$\beta_{\text{h}}^{32} \mathfrak{D}^{64} \text{թ.}^2 + \text{կ.} \mathfrak{D} \text{թ.} = \beta_{\text{h}}^{16} \mathfrak{D}^{34} \text{թ.} + \beta_{\text{h}}^{16} \mathfrak{D}^{31} \text{թ.}^2 \text{ կ.} \\ \begin{matrix} \text{արմաւատ} & \text{կալիոն} & \text{կիտածնական} & \text{արմաւատ} \\ \text{կիտածնական} & \text{ալքոհիլ} & \text{կալոյ} & \end{matrix}$$

Եթալը կամ թէ ըսենք կիտածնական ալքոհիլ՝ հաստատուն մարմին մ'է, սպիտակ, բիւրեղեայ, անհոտ, անհամե հալական 48°ի։ Սովորական թթուուկիչ ազդակներով դը ուար կը թթուուկի. սակայն երբ տաքցունենք կալով 250° բարեխառնութեամբ, միւս ալքոհիներու նման կը փոխանակէ կրկին հիւլէ ջրածնի. հիւլէ մի թթուածնոյ հետ, և կու տայ թթուուտ արմաւատական։

$$\beta_{\text{h}}^{16} \mathfrak{D}^{34} \text{թ.} + \text{կ.} \mathfrak{D} \text{թ.} = \beta_{\text{h}}^{16} \mathfrak{D}^{31} \text{թ.}^2 \text{ կ.} + \mathfrak{D}^4 \\ \begin{matrix} \text{եթալ} & \text{կալիոն} & \text{արմաւատ} & \text{ջրածին} \\ \text{կալոյ} & & & \end{matrix}$$

Թթուուտներու աղեցութեամբ կը ծնանին եթերներ։ Արմաւական եթերը կամ արմաւատ կիտածնին (palmitate de cétyle) $\beta_{\text{h}}^{155} \mathfrak{D}^{64}$ թ.² = $\beta_{\text{h}}^{16} \mathfrak{D}^{31} \text{թ.}^2$, $\beta_{\text{h}}^{16} \mathfrak{D}^{55}$. է սպիտակոց կիտի կամ անյատուկ առմամբ սերմն կիտի (spermaceti) ըսուածն։

45. Կիտի սպիտակուցն պարարտ և հաստատուն մարմին մ'է որ կ'ենէ կիտաղղիներէ և գլխաւորաբար վլշապ ձը կէն։ Կենդանին ողջ եղած միջոց հեղուկ վիճակ մ'ունի և կը լնու ոսկերացը մէջ գտնուող խոռոչները և յատուկ անցքերը՝ սկսեալ գլխին մինչեւ պոչը, ցրուած մարմնոյն և զիրուցին մէջ։ Եւ որովհետև իւղ կիտի սպիտակոցին (huile de blanc de balein)՝ ըսուած՝ պարարտ հեղանիթոյն մէջ

լուծուած է, կենդանւոյն մեռնելէն վերջ այս իւղը կը պընդանայ. Կը բաժնեն այն ատեն կիտի սպիտակուցը իւղէն, լաւ մը կը զտեն, և կ'ունենան կիսաթափանց սպիտակ և մաքոր բիւրեղեայ զանգուած մը, որ իւղային է և սպարատ՝ երբ բռնենք զայն ձեռօք. Կը հալի 45° բարեխառնութեամբ, և լուծական է եռացեալ ալքոհիլ մէջ. մնալով բացօթեայ՝ դիւրաւ կը գեղնի և կրնայ ևս փշրիլ: Խր խըտութիւնն է 0, 95:

Վիշապ ձուկ մը կու տայ 5000 հազարագրամ իւղ կիտի սպիտակոցի և 1500–3000 հազարագրամ սպիտակուց կիտի: Ասով կը շնուն յախամապակեայ տեսքով ազնիւ և թանկագին մումիր, և գունաւորիչ նիւթերով զանազան գոյներ կու տան անոնց: Այս մումիրը սպիտակ և պայծառ լուսով կը վառին, սակայն իրենց դիւրահալութեանը պատճառաւ կը կաթին և տաք տեղեաց մէջ կը ծովն: Կիտի սպիտակուցը ասկից զատ գործածական է նաև թէ՝ ի բժշկութեան և թէ ուրիշ արուեստից մէջ։

46. Մոմք. — Մոմերը՝ ի սովորական բարեխառնութեան հաստատուն մարմիններ են, դիւրահալը և անլուծականք լրոյ մէջ. լրենց արտաքին երկութովը կը մերձենան պարարտ մարմնոց, սակայն կազմութեամբ՝ էտպէս կը տարբերին անոնցմէց, վասն զի ամենայն պարարտ մարմնը են եթերը քաղցրբախ (glycérine): Թէ՛ կենդանիներէ և թէ բոյսերէ յառաջ եկող շատ մը մոմային նիւթեր կան։

Չինայ մոմը որ զանազան ծառոց զատուցումն է, Որդուան մոմաբեր (Coccus ceriferus) անուամբ միջատի մը խսայթուածքէն յառաջ կու գայ և կը նմանի կիտի սպիտակուցին։ Զասիկայ կը զտեն բիւրեղացնելով այլ և այլ անգամեռացնեալ ալքոհիլ մէջ, կը հալի 82°ի և այն ատեն կը կազմէ զմոմատ մոմածնի (cérotate de céryle) $\beta_{\text{h}}^{54} \mathfrak{D}^{108}$ թ.² = $\beta_{\text{h}}^{27} \mathfrak{D}^{35}$ թ.², $\beta_{\text{h}}^{27} \mathfrak{D}^{35}$ ։ Չինաց մոմը հալեցնելով կալիոնի հետ, կը կրկնաբաշխի՝ ի մոմատ կալոյ և յալքուհի մոմածնական (alcool cérylique):

Մեղուաց մոմը խառնուրդ մ'է մոմական թթուուտի (acide cérotique) $\beta_{\text{h}}^{27} \mathfrak{D}^{34}$ թ.², որ երբեմն կ'ըսուէր մոմիտ (cérine), և արմաւատ մեռնածնի (palmitate de myricyle) կամ մեռնիտ (myricine): Դեղնագոյն,

հաստատուն և չոր մարմին մ'է . կը հալի 620 ի . անլուծական է ջրոյ մէջ, լուծական եռացիքալ ալքոհօլի և եթերի մէջ . 550 ի կը կաղզանայ . օդոյ առջև գիւրաւ կը վասի ըսպիտակ և պայծառ բոցով առանց արձկելու հոտ և ծուխ, և առանց մնացորդ թողլու : Ենթարկուելով մեղուաց մոմը չոր թորեցման՝ կու տայ քացախական (acétique) և պրոփիտնական (propionique) թթուուաններ, խունայար (paraffine), արմաւական (palmitique) և մարգարական (margarique) թթուուաններ, իւղային արդիւնքներ ուրոց եռացման կէտը փոփոխական է, թթուուատ բնածխական և իւղարար կազ (gaz oléfiant) :

Վերջերս գտան նաև հանքային մոմ՝ որ գրեթէ մեղուաց մոմին հաւասար գործածական է, և 850 բարեխառնութեամբ կը հալի :

47. Առոմը անթիւ տեսակ գործածութիմք ունի . դեղին տեսակը կը ծառայէ շիելու և փայլեցնելու բնակարանաց տախտակամածքն և փայտեղին կազմածները : Ասով կը պատրաստեն մոմածիկը (encaustique) որ կը ծառայէ օծելու պատերը, սալայատակը, և այլն, և զանոնք կը պահպանէ խոնաւութենէ : Կը մոնէ կակուղ դռնի (cire à sceller), վիմագրական ծրագրիչներու (crayon lithographique), և քանի մի մազուաքից (mastics) բազագրութեանց մէջ, կը գործածեն դեղագործք, իւղեկեացք, և մանաւանդ շատ մը արուեստաւորք՝ շինելու համար ծաղիկներ, տերեւներ, պոտուղներ, կենդանիներ, անդամակնական կտորներ (pièces anatomiques), և այլն :

Այս ամէն բաներէ զատ կը ծառայէ մոմը ճրագներ շինելու, Առոմէ ճրագները կը պատրաստուին կրկին եղանակաւ . առաջն եղանակն է լեցնել հալած մոմը պակեայ կաղապարաց մէջ . հեղուկը պաղելէ վերջ կը կըծդկի և առանց դժուարութեան կ'ելնէ կաղապարներէն : Խակ երկրորդ եղանակաւ պատրաստելու համար, առատ կախուած շիմնակի մը եղերացը վրայ շարուած են այլ և այլ ճանկեր՝ որոց վրայ կը հաստատեն մոմերու պատրոյգները . շարժմոնք մը տալով շրջանակին, կը սկսի գառնալ իւր առանցքին վրայ . նոյն միջոց հետզհետէ կը լեցնէ գործաւորը հալած մոմը պատրոյգներուն վրայ՝ մինչև որ սասոնք իւր ուղածին չափ ստուարութիւն մ'առնուն : Գործողու-

թիւնը աւարտելէ վերջ կ'ողորկէ և գլանաձնեռթիւն մի կու տայ գլորցնելով զանոնք մարմարեայ կամ փայտեայ տախտակի մը վրայ :

48. Գործարամասնետաղակամ բաղադրութիւններ (Composés organo-métalliques) . — Ալքոհական արմատները միանալով մետաղաց հետ՝ կու տան գործարանամետաղական բաղադրութիւններն . Ասոնք բազմաթիւ են . բաւական կը համարինք գաղափար մի տալ զինկ-կրիտածնի (zinc-éthyle) վրայ :

Զինկ եթիլածնը Զն { Բն² Զ³
Բն² Զ³ } կազմուած է երկու

միահիւէական (monoatomique) խումբերէ Բն² Զ³ որք միացած են երկհիւէական (diatomique) տարեր մը մէկ հիւէին հետ, այս տարրն է զինկը, հետևարար կազմուած բաղադրութիւնը յագեալ մարմին մ'է :

Կը պատրաստեն զինկ-եթիլածնը՝ տաքցունելով մարեմայ բաղանեաց վրայ մանշուկ եթիլածնին զընկոյ հետ, աւելցնելով վրան յարազող մը զընկոյ ընդ նատրիի : Զինկ-եթիլածնին կը թորի և կը հաւաքի ընդունարանի մը մէջ: Անգոյն հեղանիւթ մ'է, շարժուն, բեկրեկիչ (réfringent) յոյժ . կ'եռայ 1180 ի, և բացօթեայ մեալով շուտ մը կը բորբոքի :

Կրցած են պատրաստեն նաև զինկ-մեղիածնի (zinc-méthyle) Զն (Բն² Զ³)², զինկ-ամիլիածնի (zinc-amyle) Զն (Բն² Զ¹¹)², սեղիկ-կրիտածնի (mercure-éthyle) Ա (Բն² Զ³)², կապար քառակերկածնի (plomb-tétréthyle) Կ (Բն² Զ³)⁴, և այլն : Այս բաղադրութեանց շատերը սաստիկ թունաւորք են :

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԻԱՀԻԿԱԿԱՆ ԱԼՔՈՀԻԼԵՐՈՒ ԹԹՈՒՈՒԿԱՑՄԱՆ ՅԱ
ՌԱԶ ԵԿԱԾ ՄԱՐՄԻՆՔ. — ՄԻԱՀԱԶՄԱՆ ԹԹՈՒՈՒՏՔ

Քլորամ. — Քացախոմ. — Միաղկազմայիմ թթուուտք. —
Մրջնակամ թթուուտք. — Քացախակամ թթուուտք. — Քա-
ցախ. — Քացախակամ եթեր. — Համաբում թթուուտք
Քացախակամ թթուուտքի:

49. Քլորամ (Chloral) = $\text{Cl}^2 \text{O} \cdot \text{Cl}^5 \text{O} = \text{Cl}^2 \text{O}^3 \text{O} \cdot \text{Cl}$. —
Այս մարմինը լիպիդ գոտւ 1832 ին: Կ'ունենանք՝ ազգել
տալով քլորը ալքոհիլ վրայ: Անգոյն հեղանիւթ մ'է,
շարժուն, զօրաւոր հոտ մ'ունի, և իւր գոլորչքն սասափիկ
գրգռիչ է. կ'եռայ 940 ի: Կրնանք համարիլ զայն իրր ալ-
քոհիտ (aldehyde) որոյ արմատոյն երեք հիւլէ ջրածինը
փոխանակուած է երեք հիւլէ քլորէ.

$\text{Cl}^2 \text{O}^3 \text{O}$, Զ

ալքոհիլտ

(Հրաժնուկ քացախածնի)

$\text{Cl}^2 \text{O}^3 \text{O} \cdot \text{Cl}$

քլորամ

(Հրաժնուկ եռաքլորաքո-
խածնի)

Ալքոհլու նման ունի քանի մի հակազդեցութիւնք.
ինչպէս, օրինակ իմն, կը միանայ կալաքարային երկծծըմ-
բակներու (bisulfites) հետ, և կը վերածէ բորակատ
արծաթոյ լուծումը՝ տալով թթուուտ եռաքլորաքացախա-
կան (trichloréacétique) $\text{Cl}^2 \text{O} \cdot \text{Cl}^5 \text{O}^2$: Անդական ջրա-
ծնի (hydrogène naissant) ազդեցութեամբ՝ կը վերածուի
յալքոհիտ և 'ի թթուուտք քլորաջրածնական. իսկ կալա-
քարաց ազդեցութեամբ կը կրկնաբաշխի.

$\text{Cl}^2 \text{O} \cdot \text{Cl}^3 \text{O} + \text{Kl} \cdot \text{O} = \text{Cl}^2 \text{O} \cdot \text{Cl}^3 + \text{Cl}^2 \text{O} \cdot \text{O}^2 \text{Kl}$
քլորամ կալիոմ քլորակերպ մըջմատ
կալոյ

Քլորանը ջրոյ հետ կը կազմէ բիւրեղեայ բաղակցու-

թիւն մը ԲՀՀ Զ Ք Թ, Զ Զ Թ, որ կ'ըսուի ջրամեալ քլորամ
(chloral hydraté), և այս 'ի սովորական բարեխառնու-
թեան կը վերաբառնայ: Ներկայութեամբ բարի ծծմբա-
կան թթուուտի՛ կը փոխարկի հաստատուն, սպիտակ,
անհոտ և յախճապականման գոյացութեան մը, որ անլու-
ծական է ջրոյ մէջ, և կ'ըսուի քլորամ անդամական (chlo-
ral insoluble):

Գործածական է 'ի բժշկութեան իրր մեղմիչ սաստիկ
յօդացաւութեանց, իրր քնարեր, դեղ ատամանց փու-
թեան, և այլն:

50. Քացախոմ (Acétone) = $\text{CH}_3 \text{CO}^2 \text{CH}_3$. — Կը պա-
տրաստեն՝ ենթարկելով չոր թորեցման դքացախատն
կրածնի:

$$\left. \begin{array}{c} \text{CH}_3 \text{CO}^2 \text{CH}_3 \\ \text{CH}_3 \text{CO}^2 \text{CH}_3 \end{array} \right\} \text{Կր}'' = \text{CH}_3 \text{CO}^2 \text{CH}_3 + \text{CH}_3 \text{O}^2 \text{K}''$$

քացախոմ բմածիստ
քացախատ կրածնի

Անգոյն հեղանիւթ մ'է, եթերային հոտով, և 'ի 00 ի 0,814
խտութեամբ: Կ'եռայ 'ի 56°, և կը լուծուի ամենայն հա-
մեմատութեամբ ջրոյ, ալքոհիլ և եթերի մէջ: Թթուուտիկիշ
(oxydant) հակազդակաց ազդեցութեամբ կ'եղծանի.

$$\text{CH}_3 \text{CO}^2 \text{CH}_3 + \text{O}^2 = \text{CH}_3 \text{O}^2 + \text{CH}_3 \text{CO}^2 + \text{O}^2$$

քացախոմ թթուուտ
 բմածիստ
 քացախակամ
 չուր
 կամ թթ
 թթուուտ
 թթուուտ

51. Միաղկազմային թթուուտք (Acides monobasi-
ques). — Առաջնական ալքոհիներու (alcools primaires)
 $\text{CH}_3 \text{O}^2 + \text{O}$, կը համապատասխանեն միաղկազմային
թթուուտք $\text{CH}_3 \text{O}^2 + \text{O}^2$:

Արդէն իսկ տեսանք որ ասոնք թթուածնեալ արմատ-
ներու ջրատքն են, ինչպէս նաև ալքոհիլք՝ ջրաբնածինեալ
(hydrocarboné) արմատոց ջրատքն են. Հետևեալ նշա-
նացյցներով կը տեսնենք ասոնց ունեցած վերաբերու-
թիւնքն.

Բն² Զ³ թ¹, թ² Զ
ջրատ քացախածնի
(+սպառագույն բլուսուր)

Բն² Զ⁵, թ¹ Զ
ջրատ եթիլածնի
(-ունչւ)


Թթուուտք ալքոհոլներէ աւելի բաղմաթիւ են, ոմանք կը ստացուին ալքոհոլներու ուղղակի թթուուկացմանէն (oxydation), շատերը բնութեան մէջ արդէն իսկ կազմուած կը գտնուին, կամ՝ յաղատ և կամ՝ ի բաղակցեալ վիճակի. իսկ այլք կը պատրաստուին կամ՝ յատուկ՝ և կամ՝ ընդհանուր եղանակներով:

Ասոնց առաջին եղբն (terme) է մրջնական թթուուտք (acide formique) Բն² թ², որ մեթիլածնական ալքոհոլէ (alcool méthylique) կ'ելնէ. կ'եռայ յ 99օի, և յաջորդաբար քանի որ համարուն (homologues) մարմնոց շարքին մէջ առաջ երթանք, աւելցնելով իրաքանչիւրին վրայ Բն² նշանացոյցն, իրաքանչիւրին եռացման կէտն ալ 19—20^o կը բարձրանայ: Առաջին եզերքն հեղուկ են. բարձրագոյնք՝ որք աւելի առատ բնածուխ կը բովանդակեն, հաստատուն վիճակ մ'ունին: Իսկ իրենց հալման կէտին գալով ամենակին կանոն մի չիկայ. ինչպէս, օրինակ իմն, կոգեկան թթուուտք (acide butyrique) Բն¹ Զ⁸ թ² հեղուկ է 10օի, մինչդեռ մի և նոյն բարեխառնութեամբ քացախական թթուուտք (acide acétique) Բն² Զ⁴ թ² բիւրեղացեալ վիճակ մ'ունի:

Յե՞ր Զ² թ² նշանացոյցն ունեցող թթուուտք՝ կ'ըսուին սովորաբար րրուուք պարարտ շարքին (série grasse). վասն զի ասոնցմէ՛ շատերը պարարտ մարմնոց մէջ կը գրանուին. ամէնքն ալ միակազմայինք (monobasiques) են, այսինքն, կը բովանդակեն հիւլէ մի ջրածնի որ մետաղէ մը կրնայ փոխանակուիլ:

52. Մրջնական թթուուտք (Acide formique)= Բն² թ².— Մեթիլածնական ալքոհոլ (alcool méthylique) թթուուկացմանէն յառաջ կու գայ, և բնութեան մէջ յաղատ վիճակի կը գտնուի՛ ծնանելով շատ մը հակազդեցութիւններէ (réactions): Կ'ելնէ կարմիր մրջիւններէ, եղիճէ, և այլն: Կը պատրաստուի բաղմաթիւ գործարանաւոր մարմնոց թթուուկացմամբն, ինչպէս օսլայի, շաքարոյ, և այլն:

Կը պատրաստեն եռացնելով խոշոր եղիճը մի մէջ օսլան՝ վերաթթուուկ մագնանիւ և ջրախառն ծծմբական թթուուտիւ. և կամ տաքցունելով եղիճը մի մէջ (Զւ 18)



Զւ 18. Պատրաստութիւն դրամական թթուուտքի համար

1000 բարեխառնութեամբ՝ թրթնջական թթուուտք (acide oxalique) քաղցրտի (glycérine) հետ. այն ատեն թրթըն չական թթուուտք կը տարրարաշխի.

Բն ² Զ ² թ ⁴	=	Բն Զ ² թ ²	+	Բն թ ²
թթուուակամ թթուուատ		մըջմակամ թթուուատ		բմածխակամ թթուուատ

Անգոյն հեղանիւթ մ'է, խայթիչ հոտով և սաստիկ թթուահամ. կ'եռայ 990ի. և 10 բարեխառնութեամբ՝ բիւ ըեղեայ զանգուած մի կը դառնայ: Ձրոյ հետ ամենայն համեմատութեամբ կը խառնուի:


53. Քացալսական թթուուատ (Acide acétique) = Բն² Զ² թ². — Հնուց 'ի վեր ծանօթ թթուուատ մ'է, և քացախի էական մասը կը կազմէ: Կը ձևանայ անթիւ պարագայից մէջ, ինչպէս ալքոհոլի թթուուկացմամբն, շատ մը գործարանաւոր նիւթոց չոր թորեցմամբն, օրինակ իմմ, շաքարոյ, օսլայի, փայտերու, և այլն. 160է վար հաստատուն մարմնոյ կը փոխարկուի և կը բիւրեղանայ: Խայթիչ հոտ մ'ունի. ապականիչ է և զմորթ կը խանգարէ. իւր գոլորշին կիզանելի է և տժգոյն բոցով մը կը վառի: Յարուեսոս՝ քացախական թթուուատը կ'ըստի միանգամայն քացախ, հրափայտային բրուռու (acide pyroligneux), և այլն:

54. Քացախ. — Քացախը կը բովանդակէ իւր մէջ սովորաբար 6 առ 100 թթուուատ քացախական: Ընտիր քացախը կը պատրաստեն կամ գինիէ և կամ փայտերու չոր թորեցմանէն: Շատ եղանակներ կան գինւոյ քացախի պատրաստութեան, սակայն ընտրելագոյնը Օոյկանի դրուրիննէ է որ հետևեալ կերպով կը կատարուի.

Գինւոյ շտեմարանի մը մէջ շարուած են իրարու վրայ կարգ կարգ բազմաթիւ տակառներ, որոց իւրաքանչիւրին վերի կողմը լայն բացուածք մի կը գտնուի: Այս տակառաց երրորդ մասը կը լնուն քացախով, և ամէն ութ օր մէջ մը կիւրաքանչիւրին վրայ 10 լիտր գինի կ'աւելցնեն, և ապա ամէն ամիս 40 լիտր քացախ կը հանեն: Զեացած քացախը գինւոյ խմորմանէն յառաջ կու գայ, և այս գործողութիւնը կատարող խմորը մանրագիտական բոյս մ'է, քացախոյ երկայնամաշի (mycoderma acetii) մը, որ կ'ըստի միանգամայն մայր քացախոյ (mère du vinaigre): Այնքան սաստիկ թթուուկիչ կարողութիւն մ'ունի այս երկայնամաշին քացախոյ, որ թթուուկացնելով զալքոհէ կրնայ փո-

խարկել զայն մինչև խակ 'ի թթուուատ բկանածխան և 'ի ջուր: Եւ որովհետև սոյն հակազգեցութիւնը տկար կերպով կը կատարուի առատ քացախոյ ներկայութեամբ, այս պատճառաւ 0ոլէանի դրութեան մէջ ուղելով քացախեցնել զգինին, գործողութիւնը տակառաց մէջ կը կա սարեն, և առատ քացախ կը գործածեն:

Քացախոյ պատրաստութեան բազմաթիւ գրութեանց մէջ, կայ նաև ուրիշ մ'ալ որ կ'ըսուի երագ դրուրիւն պատրաստութեան բացախոյ: Տակառի մը մէջ (Ձև 19) փինւոյ (hétre) տաշելներուն վրայ կը սկսին կաթեցնել խառնուրդ մի ալքոհոլի, չորյ և սպիտային նիւթոյ (գետնախնձորաց, ճակնդեղաց ծուծերը, և այլն), որ բովանդակէ իւր մէջ խմորի ձևացման համար կարևոր եղած սկզբունքներն: Այսպէսով տաշելներուն վրայ կաթած



Ձև 19. Երագ գրութիւն պատրաստութեան քացախոյ


հեղանիւթը լայն մակերևոյթ մի կ'ունենայ և այնքան երագութեամբ կը թթուուկի՝ որ մինչև 700 իւր բարեխառնութիւնը կը բարձրանայ: Քացախացումը ամրոջացնելու համար պէտք է նոյն հեղանիւթը երկրորդ անգամ մ'ալ կաթեցնել փինւոյ տաշեղաց վրայ:

55. Ի վաճառս գործածուող քացախները տարբեր ծագումներ ունին. կան արուեստի պատրաստուածներ՝ աւելցնելով չորյ վրայ թթուուատ քացախական, և կան ալ որք կրնան յառաջ գալ գինիէ, ալքոհէ, պտուղներէ,

գարեղբէ, կասկէ (malt), ճակնդեղներէ, և այլն։ Ասոնց մէջ գինւոյ քացախը ընտրելագոյնն է, և դիւրաւ կը զանազանի արուեստական քացախներէ, վասն զի թորեցմամբ կը թուղու իւր յատակը գինւոյ հաստատուն գոյացութիւնքը։

Քացախը իւր թթու յատկութեանցը պատճառաւ կը յարէ և կը լուծէ իւր մէջ պղինձ, կապար, զինկ և մանաւանդ երկաթ. անոր համար զգուշանայի է պահել զայն այս նիւթերէ շինուած անօթոց մէջ երբ պիտի ծառայէ տնտեսական պիտոյից գործածութեան։

56. Քացախը կը ծառայէ կերակուրները համեմելու և զանոնք դիւրամարա ընելու։ Է նաև լնոտիր պահպանիչ թէ բուսական և թէ կենդանական գոյացութեանց։ Կը գործածուի միանգամայն ծիման (fumigation), ժանաւահոսութիւնքը քօղարկելու նպատակաւ։



Ձև 20. Պատրաստութիւն քացախական եթերի

Իսկ քացախական թթուուտը շատ մը գործածութիւնք ունի՝ ի բժշկութեան, կը ծառայէ բազմաթիւ զարդարեղոց (cosmétique) պատրաստութեան, և այլն։

Քացախատր. — Քացախական թթուուտը միաղկաղմային թթուուտ մը ըլլալով, չեղաք քացախաները մասնիկ մը միայն ունին թթուուտի՝ որոյ արմատական ջրածնոցն հիւլէն փոխանակուած է միահիւլէական մետաղէ մը. և կամ կրկին մամիկ քացախական թթուուտի մէջ գտնուող Զ հիւլէ արմատական ջրածինքն՝ փոխանակուած են երկհիւլէական մետաղէ մը։

Բն ² Զ ³ Թ ² Զ	Բն ² Զ ³ Թ ¹ Կ ₁	(Բն ² Զ ³ Թ ²) ² Կ ₁
քացախական թթուուտ	քացախատ կալոյ	չէզոք քացախատ կապարոյ

Աւելորդ կը համարինք այս քացախատներուն վրայ հոս մանրամասն տեղեկութիւններ տալ (Տես Համ. Ա. Տ. 200.)

57. Եթեր քացախական կամ քացախատ եթիլածին (Acé-tate d'éthyle) = Բն² Զ³ Թ₁, Թ₁ Բն² Զ³. — Քացախական թթուուտի նշանացոյցն է Բն² Զ³ Թ₁, Թ₁ Զ₁ կ'ունենանք եթեր քացախական՝ փոխանակել տալով նոյն թթուուտին հիւլէ մի ջրածնոյն տեղ Բն² Զ³ եթիլածնական արմատը. այսպէս Բն² Զ³ Թ₁, Բն² Զ³ է եթեր քացախական։

Կը պատրաստեն՝ տաքցունելով աւագոյ բաղանեաց վրայ պակեայ եղջեր մէջ (Ձև 20) խառնուրդ մի քացախատի նաստրի, ալքոհոլի և ծծմբական թթուուտի։ Այսպէսով քացախական եթերը կը թորէ ուրիշ անօթի մը մէջ զոր կ'առնուն յետոյ և կը զտեն։

Անգոյն հեղանիթ մ'է, եթերային ախորժելի հոտ մ'ունի. կ'եռայ 740ի. 0° բարեխառնութեամբ իւր խառութիւնն է 0, 9105։ Ջրոյ մէջ քիչ կը լուծուի, սակայն կը լուծուի ամենայն համեմատութեամբ յալքոն և յեթեր։ Ի բժշկութեան գործածական է, չփմամբ՝ յօդացաւութեանց և շղացաւութեանց դէմի առնելու համար։

58. Պարարտ թթուուտը (Acides gras). — Հետևեալ թթուուտը կ'ըստին պարարտ բրունուր կամ բրունուր պարարտ շարքին (acides de la série grasse), վասն զի բնական պարարտ մարմնոց (ինչպէս ճարպի կարագի) բաղադրութեան մէջ մտնող թթուուտքն (ճարպական, արմատական) այս շարքիս մէջ կը գտնուին։ Իրենց ընդհանուր նշանացոյցն է Բն² Զ² Թ₁։ Ամէնքն ալ համարուն են մրջնական և քացախական թթուուտներու, ոմանք հեղուկ են, ի սովորական բարեխառնութեան, այլք հաստատուն։ Այս թթուուտներս են.

ԱՆՇՈՒՄԱՆՔ ԹԹՈՎՈՂՈՒՑԻՑ		ՆՉԱԽԱՐԱԳՈՅՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՑ		ԱՆՇՈՒՄԱՆՔ ԹԹՈՎՈՂՈՒՑԻՑ	
ԲՐԵՋՈՒՄ ՄԵՐՑԱԿԱՋ (formique)		ԲԻՆԱՐԱԳՈՅՑ ԱՆՎԱՐԱԿԱՋ (acétique)		ԲԻՆԱՐԱԳՈՅՑ ԱՆՎԱՐԱԿԱՋ (propionique)	
Բն2	Զ2 թ2	Բն2	Զ4 թ2	Բն2	Զ3 - Բն. թ. Զ
Բն3	Զ6 թ2	Բն2	Զ5 - Բն. թ. թ. Զ	Բն3	Զ7 - Բն. թ. թ. Զ
Բն4	Զ8 թ2	Բն3	Զ4 թ9	Բն4	Զ9 - Բն. թ. թ. Զ
Բն5	Զ10 թ2	Բն5	Զ11 - Բն. թ. թ. Զ	Բն5	Զ13 - Բն. թ. թ. Զ
Բն6	Զ12 թ2	Բն6	Զ13 - Բն. թ. թ. Զ	Բն7	Զ14 թ2
Բն7	Զ14 թ2	Բն6	Զ15 - Բն. թ. թ. Զ	Բն8	Զ16 թ2
Բն8	Զ16 թ2	Բն7	Զ15 - Բն. թ. թ. Զ	Բն9	Զ18 թ2
Բն9	Զ18 թ2	Բն8	Զ17 - Բն. թ. թ. Զ	Բն10	Զ20 թ2
Բն10	Զ20 թ2	Բն9	Զ19 - Բն. թ. թ. Զ	Բն12	Զ24 թ2
Բն12	Զ24 թ2	Բն11	Զ23 - Բն. թ. թ. Զ	Բն14	Զ28 թ2
Բն14	Զ28 թ2	Բն13	Զ27 - Բն. թ. թ. Զ	Բն15	Զ31 - Բն. թ. թ. Զ
Բն16	Զ32 թ2	Բն16	Զ33 - Բն. թ. թ. Զ	Բն17	Զ34 թ2
Բն17	Զ34 թ2	Բն17	Զ35 - Բն. թ. թ. Զ	Բն18	Զ36 թ2
Բն18	Զ36 թ2	Բն19	Զ39 - Բն. թ. թ. Զ	Բն19	Զ39 - Բն. թ. թ. Զ
Բն20	Զ40 թ2	Բն21	Զ43 - Բն. թ. թ. Զ	Բն21	Զ44 թ2
Բն22	Զ44 թ2	Բն26	Զ53 - Բն. թ. թ. Զ	Բն27	Զ54 թ2
Բն27	Զ54 թ2	Բն29	Զ59 - Բն. թ. թ. Զ	Բն30	Զ60 թ2
Բն29	Զ59 - Բն. թ. թ. Զ			88	

59. Կողեկամ թթուուտ (Acide butyrique) = Բն4 Զ8 թ2. — Շէվրէօլ այս թթուուտը կարագէն հանեց. Շաքարային սիւթերը կողեկան խմորման միջոց առատութեամբ կողեկան թթուուտ կու տան. որով իւր պատրաստութեան համար ալ այս եղանակս կը գործածեն. կողեկան խմորումը կը յաջորդէ կաթնական խմորման:

Կողեկան թթուուտը անգոյն հեղանիւթ մ'է. ծթուած կարագի նման անախորժ հոտ մ'ունի. ջրոյ մէջ լուծական է և քան զայն նուազ խիտ. կ'եռայ 156°ի. դիւրավառ է, և աղկաղմներու հետ միանալով աղեր կը կազմէ:

60. Մրուամակամ թթուուտ (Acide valélique) = Բն5 Զ10 թ2. — Կը գտնուի մրուանի (valériane) արմատոցը մէջ. Կը պատրաստեն թթուուտկացնելով ամիլածնական ալքոհօլ՝ խառնրեամբ երկբրոմատի կալւոյ և ծծըմբական թթուուտի.

$$\text{Բն5 } \mathbf{Z}^{12} \text{ թ.} + \text{ թ.}^2 = \text{ Բն5 } \mathbf{Z}^{10} \text{ թ.}^2 + \mathbf{Z}^2 \text{ թ.}$$

ամիլածնակամ թթուաւ մրուամակամ չուր ալքոհօլ թթուուտ

Է հեղանիւթ անգոյն, յստակ, շարժուն և իւղային. անախորժ հոտով, լուծական ՚ի ջուր և կ'եռայ 175°ի:

Այծենակամ թթուուտ (Acide caproïque) = Բն6 Զ12 թ2. Կը գտնուի կովու կաթէն ելած կարագին մէջ, կոկո (coco) կարագին մէջ, և այլն:

Սարդիւակամ թթուուտ (Acide laurique) = Բն11 Զ22 թ2. Դափնիի միրզէն կը հանեն:

Մշկակամ թթուուտ (Acide myristique) = Բն14 Զ28 թ2. Կը հանեն մշկնկոյզի (muscade) կողիէն:

61. Արմաւակամ թթուուտ (Acide palmitique) = Բն16 Զ32 թ2. — Կը գտնուի արմաւի իւղոյն մէջ քաղցրտի (glycérine) հետ միատեղ՝ եռարմաւատ քաղցրտի (tripalmitate de glycérine) կերպարանօք, որ կ'ըսուի միանգամայն եռարմաւատիտ (tripalmitine): Գրեթէ ամենայն պարարտ մարմինք կը բովանդակեն իրենց մէջ եռարմաւիտը:

Արմաւակամ թթուուտը հալական է 620ի:

62. Սարգարական թթուուտ (Acide margarique) =
Բնալ ջմ թմ. — Կը գտնուի շատ մը իւղերու և պարարտ
մարմնոց մէջ: Հաստատուն մարմին մ'է, հալական ՚ի 60°ի:
Հայնց կը համարի թէ այս թթուուտս խառնուրդ մ'ըլլայ
արմաւական և ճարպական թթուուտսներու:

63. Ճարպական թթուուտ (Acide stéarique) =
Բնալ ջմ թմ. — Հաստատուն պարարտ մարմնոց մեծա-
մասնութիւնը այս թթուուտս կազմուած են, որոց մէջ կը
գտնուի ՚ի վիճակի ճարպիտի (stéarine): Կը հալի 96°ի:

Պարարտ մարմինք խառնուրդք են արմաւական, մար-
պարական և ճարպական թթուուտսներու: յետինս ա-
ռատութեամբ կը գտնուի և կը ծառայէ ճարպական
մուերու պատրաստութեան: Ոճառք՝ են ճարպատք և
արմաւատք նատրի և կալցոյ:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՊԱՐԱՐՏ ԹԹՈՒՈՒՏՆԵՐԵ ՅԱՌԱՋ ԵԿՈՂ ՄԱՐՄԻՆՔ

Պարարտ թթուուտմերէ յառաջ եկող ամիդեալ մար-
միմք: — Քաղցրասիմթ, ջիամիզական թթուուտ, Մսեղի-
միտ, Ալամիտ, Լսմիտ, և այլն: — Ամիդք:

64. Պարարտ թթուուտմերէ յառաջ եկող ամիդեալ (ami-
dé) մարմիմք: — Երբ ազգել տանք քացախական թթու-
ուտի և իրեն համարուն (homologue) թթուուտսներուն
վրայ քլոր կամ ժահին, կ'ունենանք փոխանակութեամբ
յառաջ եկող միաքորեալ (monochloré) կամ միաժահ-
նեալ (monobromé) մարմիններ: Եթէ առնունք ասոնց-
մէ մին, օրինակ իմ միաժահնաքացախական (monobrom-
acétique) թթուուտը և բաղդատենք ժահնուկ եթիլածնի
չետ:

Բն ջ ² Ժ	Բն ջ ² Ժ
Բն թ ² Զ	Բն ջ ³
Ժահնաքացախական	Ժահնուկ
թթուուտ	եթիլածնի

Կը տեսնենք որ այս երկու մարմնոց մէջ ալ ժահնը միա-
ցած է Բն ջ² կումբին հետ: կամ որ նոյնն է ըսել, փո-
խանակած է Բն ջ³ կումբին հիւլէ մի լրածինը:

Ասկից զատ, եթէ քլորաքացախական (chloracétique)
կամ ժահնաքացախական թթուուտներէն մին տաքու-
նենք աւշակի Բ ջ³ հետ, կը տեսնենք դարձեալ որ Բ ջ²
կումբն կը փոխանակէ քլորին կամ ժահնոյն տեղ և նոր
բաղդատութիւն մի կ'ենէ, այս է թթուուտ քացախական
որոյ հիւլէ մի լրածինն փոխանակուած է Բ ջ² կումբէն.
այս բաղդատութիւնը կ'ըսուի ամիդաքացախական թթ-
ուուտ (acide amido-acétique).

Բն ջ ² Ժ	Բն ջ ² , Բ Ջ ²
+ Բ Ջ ³	+ Բ Ջ ²
Ժահնաքացախական	աւշակ
թթուուտ	ամիդաքացախական
	Ժահնաքացախական
	թթուուտ
	ծանկան
	ծանկան
	թթուուտ

Քացախական թթուուտի համարուն թթուուտքն կու-
տան հաւասարապէս քլորեալ կամ ժահնեալ բաղդատու-
թիւններ: ինչպէս քլորապրոպինական թթուուտ (acide
chloropropionique) Բն³ Ջ³ Փ թմ., քլորակողեկան թթու-
ուտը (acide chlorobuthyrique) Բն⁴ Ջ⁷ Փ թմ., քլորամբուա-
նական թթուուտ (acide chlorovalérique) Բն⁵ Ջ⁹ Փ թմ.,
զորոնք կը փոխարկէ աւշակը՝ ամիդեալ բաղդատու-
թեանց:

Այս ամիդեալ թթուուտները ամենակարևորք են և
կենդանական հիւթոց մէջ կը գտնուին: Այս շարքին ա-
ռաջին եզրը ամիդաքացախական (amido-acétique) թթ-
ուուտն է, որ կ'ըսուի միանգամայն քաղցրասիմք:

65. Քաղցրասինձ (Glycocolle) $\text{β}^{\text{n}2} \text{Ω}^3 \text{ β } \theta^2 =$
 $\text{β}^{\text{n}} \text{Ω}^2 \text{ β } \text{Ω}^2$. — Այս մարմինը գուաւ Պրաքօնց, եռա-
 $\beta^{\text{n}} \theta^2 \Omega$

ցընելով ջրախառն ծծմբական թթուուուը գոնդողափ (gélatine) հետ. այս պատճառաւ կ'ըսուի միանգամայն շաքար դուղողափ:

Հաստատուն մարմին մ'է, բիւրեղածե և շաքարահամ, հալական 1700ի. քիչ լուծական է 'ի ջուր, ամենազիշ յալքոհի և անլուծական յիթեր: Ազկազմներու հետ կը ընալ բաղակցութիւնք կազմել:

66. Զիամիզական թթուուու (Acide hippurique) = $\text{β}^{\text{n}3} \Omega^9 \text{ β } \theta^3$. — Խոստակեր կենդանեաց միզին մէջ կը ըսու նուուի: Կը պատրաստեն ձիոց կամ եղանց միզին, խառնելով զանոնք բարկ քլորաջրածնական թթուուուի հետ: Զիամիզական թթուուուը գունաւոր բիւրեղաց կերպարանօք կը հանդիչի:

Եռացնելով թթուուուներու կամ կալաքարներու հետ, իրեն կը ձգէ զիուր և կը կրկնաբաշխի.

$\text{β}^{\text{n}9} \Omega^9 \text{ β } \theta^3 + \Omega^2 \theta = \text{β}^{\text{n}2} \Omega^5 \text{ β } \theta^2 + \text{β}^{\text{n}7} \Omega^6 \theta^2$
 ծիամիզական ջուր քաղցրասինձ կմզրովական
 թթուուու

Կ'ըսուի միանգամայն կեղրածին-քաղցրասինձ (benzoyl-glycocolle):

67. Մեթիլիտ (Sarcosine) կամ մեթիլքալցրասինձ (methylglycocolle) = $\text{β}^{\text{n}5} \Omega^7 \text{ β } \theta^2$. — Կը գտնուի մըս-սիտի (créatine) մէջ, ուսկից կը բաժնեն եռացնելով.

$\text{β}^{\text{n}1} \Omega^9 \text{ β } \theta^3 + \Omega^2 \theta = \text{β}^{\text{n}3} \Omega^7 \text{ β } \theta^2 + \text{β}^{\text{n}} \theta \theta^2 \Omega^4$
 մսիտ ջուր մսեղիթիտ միզիտ (urée)

Մոելինիտը անգոյն և թափանցիկ թիթեղներէ կը բաշ-կանայ. ջուր մէջ առատութեամբ կը լուծուի. քիչ լուծա-կան է յալքոհի և անլուծական յիթեր:

68. Համարումք քաղցրասինձի. — Քացախական թթուուուի համարուն (homologue) պարարտ թթուուուներուն՝

կը համապատասխանեն ամիդեալ թթուուուուք համարունք քաղցրասինձի: Այսպէս

$\text{β}^{\text{n}2} \Omega^4 \theta^2$
 քացախական թթուուու

$\text{β}^{\text{n}2} \Omega^3 (\beta \Omega^2) \theta^2$
 ամիդաքացախական թթուուու
 (+-ցու-էն-ին)

$\text{β}^{\text{n}3} \Omega^6 \theta^2$
 պրոպիլոմական թթուուու

$\text{β}^{\text{n}3} \Omega^5 (\beta \Omega^2) \theta^2$
 ամիդազուումական թթուուու
 (ալանին-էն-ալին-ալանին - alanine)

$\text{β}^{\text{n}5} \Omega^{10} \theta^2$
 մրուամական թթուուու

$\text{β}^{\text{n}5} \Omega^9 (\beta \Omega^2) \theta^2$
 ամիդամրուամական թթուուու
 (բութալանին - butalanine)

$\text{β}^{\text{n}6} \Omega^{12} \theta^2$
 այծեմական թթուուու

$\text{β}^{\text{n}6} \Omega^{11} (\beta \Omega^2) \theta^2$
 ամիդայծեմական թթուուու
 (լենին - leucine)

Այս բաղադրութիւններս քաղցրասինձի ընդհանուր յատկութիւնքն ունին. անոր նման կը բովանդակեն իրենց մէջ լսումք մը Բ Ω^2 և ուրիշ լսումք մը Բ $\theta^2 \Omega$.

$\text{β}^{\text{n}} \Omega^2 (\beta \Omega^2)$
 |
 $\text{β}^{\text{n}} \theta^2 \Omega$
 քաղցրասինձ


$\text{β}^{\text{n}} \Omega^3$
 $\text{β}^{\text{n}} \Omega (\beta \Omega^2)$
 |
 $\text{β}^{\text{n}} \theta^2 \Omega$, և այլն
 ալամիտ

Կէս մը աղկազմք (base) են և կէս մը թթուուուք, և այս երկու պաշտօններս ալ կրնան կատարել: Ամէնքն ալ (բաց յալանիտէ) գործարանաց մէջ կը գտնուին:

69. Ալանիտ (Alanine) = $\text{β}^{\text{n}5} \Omega^5 (\beta \Omega^2) \theta^2$. — Կը պատրաստուի՝ աղղել տալով քլորաջրածնական և իսա-ժայրածնական (cyanhydrrique) թթուուուքն ալքոհուտի (aldehyde) վրայ. ալքոհուտի իրեն կը ձգէ հիւլէ մի լորյ և հիւլէ մի խաժայրածնական թթուուտի.


$\text{β}^{\text{n}2} \Omega^4 \theta + \text{β}^{\text{n}} \beta \Omega + \Omega^2 \theta = \text{β}^{\text{n}3} \Omega^5 (\beta \Omega^2) \theta$
 ալքոհուտ խաժայրածնական ջուր և ալանիտ
 կամ թթուուու

Կը բաղկանայ սրածայր կարծր բիւրեղներէ՝ որք աստղաձև խմբուած են. անլուծական է յեթեր, քիչ լուծական յալքոն և լուծական՝ ի ջուր. թորեցմամբ կը կըրկնաբաշխի.




70. Լամին (Leucine) = $\text{Բ}^{\text{n}6} \text{Ջ}^11 (\text{Բ} \text{Ջ}^2) \text{Թ}^2$. — Կըս կենդանական գոյացութեանց նեւելէն յառաջ կուգայ: Կը ձևանայ գարձեալ՝ աղդել տալով ծծմբական թթուուտ կամ կալոն՝ զանազան տեսակ բորակածնեալ նիւթոց վրայ, ինչպէս են միս, բուրդ, դոնդողիտ (gélatine), հաւկըթի ճերմըկուց, եղջիւր: Կը գտնուի մարդկանց և կենդանեաց գործարաններուն մէջ, ի լեւարդն, ի մսանն (pancréas), ի մսահոյզն (suc pancréatique), ի փայծալն (rate), ի գեղձն վահանաձև (glande thyroïde), ի տողուկն, ի գեղձս տողկայինս (glandes salivaires), և ի հիւսուածն թոքային:

Կը պատրաստեն՝ եռացնելով 24 ժամ եղջիւրներու փոշին՝ ծծմբական թթուուտի և ջրոց հետո: Սպիտակ թթվանց կերպարանօք կը բիւրեղանայ որք անդոյն են և իւղային սահունութիւն մ'ունին. կը հալի 170° ի, իսկ բարձրագոյն բարեխառնութեամբ կը կրկնաբաշխի.



71. Ամիդը (Amides). — Ինչպէս աւշակուտք (§ 46), նոյնպէս նաև ամիդը աւշակէ յառաջ կու գան. միայն այս տարբերութեամբ որ աւշակուտ ձևանալու համար՝ աւշակի ջրածինն ալքոհօսկան արմատի մը հետ կը փոխանակուի. մինչեւ ամիդի ձևանալու համար՝ աւշակի ջրածինն թթուուտային արմատի մը հետ կը փոխանակուի. այսպէս, աւշակի բաղադրութիւնն ըլլալով $\text{Բ} \text{Ջ}^5$, կ'ունենալուք.




ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԲՈՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԽԱԺԱԾՆԻ

Խաժածիթ. — Վաժաչըրածթական թթուուտ. — Մետաղական խաժուկը. — Երկաթախաժուկը. — Շանթակատը:

72. Խաժածիթ. (*Cyanogène*) = $(\text{Բ} \text{Բ} \text{Բ})^2 = \text{Խ} \text{Ճ}^2$ կամ $\text{Բ}^{\text{n}2} \text{Բ}^{\text{n}2}$. — Պարարտ թթուուտներէ վերը կու գան խաժածնի բաղադրութիւնք: Խաժածըրածնական թթուուտի (acide cyanhydrique) $\text{Բ} \text{Բ} \text{Բ} \text{Ջ}^5$ մէջ բնածուխը որք քառաշիւլէական է, կը յագենայ հիւլէ մի եռազօր բորակածնէ և հիւլէ մի միազօր ըրածնէ.




Երբ այս թթուուտէս պակսի հիւլէ մի ջրածին, այն ատեն Բէ Բ խումբը աղատ կը մնայ որ յագեալ չէ և միաշիւլէական արմատ մ'է: Այս արմատս կը գտնուի մնաթիւ բաղադրութեանց մէջ, ինչպէս են խաժուկն կալոյ (cyanure de potassium) $\text{Բ} \text{Բ} \text{Բ} \text{Կ}$, խաժուկն եթիլածնի Բէ Բ Բⁿ2 Ջ⁵, և այլն: Խակ եթէ այս արմատը աղատ վիճակի մէջ գտնուի: Այն ատեն միազօր չըլլար, այլ երկու խումբ Բէ Բ միանալով իրարու հետ կը կազմեն երկւ խաժածինը (dicyanogène) կամ խաժուկ խաժածնին (cyanure de cyanogène), որ է աղատ խաժածինը ($\text{Բ} \text{Բ} \text{Բ}^2 = \text{Բ}^{\text{n}2} \text{Բ}^{\text{n}2}$):

Այս Բն Բ խումբը իւր յարամերձութեամբք քլորի շատ կը մօտենայ և բազմաթիւ հակագգեցութեանց մէջ իբր պարզ մարմին կը մտնէ. առաջին օրինակն է բաղադրեալ արմատոյ մը՝ զոր կը տեսնենք իբր տարր գործող: Այս մարմնոյս յատկութիւնքն իմացաւ կէյ-լիսաք:

73. Պատրաստելու համար սովորաբար կը թորեցնեն խաժուկ մնդկին ապակեայ փոքրիկ եղչւր մի մէջ (Ձև 21). Ելած կաղը մնդկալից տաշտի մը վրայ շրջած փորձանակի մէջ կը հաւաքի.

$$(Բն Բ)^2 U = U + (Բն Բ)^2$$

խաժուկ սնդիկ խաժածին
սնդկական




Ձև 21. Պատրաստութիւն խաժածնի

Անգյն կազ մ'է, լեզի նշոյ զօրաւոր հոտն ունի. բաղադասութեամբ օդոյ իւր խտութիւնն է 1, 8064. Ծուրը իւր տարածոցէն 4 $\frac{1}{2}$ /2 անգամ աւելի կը ծծէ զայն, իսկ ալքոհոլը 23 անգամ: Գրոյէ վար $25^{\circ} - 30^{\circ}$ մէջ հեղուկ կը դառնայ. աւելի սաստիկ ցրտութեամբ՝ սառուցի նման հաստատուն բիւրեղեայ զանգուածոյ մի կը փոխարկի որ-340ի: Կը հալի:

Ծիրանեզոյն բոցով կը վառի՝ տալով թթուուտ բնած-խական և բորակածին: Իւր ջրային լուծումը լուսոյ առջև

խակոյն կը տարրաբաշխի՝ թողով հանգչիլ սնաւ տարափ-ներ. իսկ լուծման մէջ կը մնան միզիս (ureé), բնածխատ աշակի, խաժաջրածնատ (cyanhydrate) աշակի և թթութընջատ (oxalate) աշակի:

74. Խաժաջրածնական կամ բրուսական թթուուտ (Acide cyanhydrique կամ prussique) = Բն Բ Զ. — Կը գըտ-նուի ծուաղենւոյ (laurier-cerise), լեզի նշոյ և կորի-գաւոր պտղոց թորեալ ջրերուն մէջ, Մամինոս (Jatropha



Ձև 22. Պատրաստութիւն խաժաջրածնական թթուուտի

manihot) թփոյն արմատոցը մէջ, գեղձերու տերեւոց մէջ, և այլն:

Կը պատրաստեն զայն բոլորովին զուտ և անջուր՝ թուրեցնելով եղչւր մի մէջ (Ձև 22) խառնուրդն փոշիացեալ երկաթախածուկի կալւոյ (ferrocyanure de potassium), ջրոյ և ծմբական թթուուտի: Եղչւր պարանոցը բարձր է որպէս զի ձևացած ջրեղչն գոլորշիքն կստանալո՞վ դարձեալ եղչւր մէջ վաղեն. իսկ ելած խաժաջրածնական

թթուուտն անցնելով քլորուկ կրածնի բովանդակող խոզզովակէ և շչէ մը, կ'երթայ կը խտանայ ապակեայ երկայ նափող սառնապատ հիմէնի (matras) մը մէջ:

Յանչուր վիճակի՝ անգոյն հեղանիւթ մ'է. 0, 7058 խըսութեամբ 'ի 180ի. 'ի - 150ի հաստատուն մարմնոյ կը փոխարկուի և կ'եռայ 'ի 260ի: Ջրոյ հետ ամենայն համեմատութեամբ կը խառնուի. լուծական է յալքոհլ, և լեղի նշոյ իսկութեան հոտն ունի: Շուտով կը տարրաբաշխի՝ մանաւանդ լուսոյ ազդեցութեամբ:

75. Խաժաղբածնական թթուուտը ամենէն աւելի զօրաւոր և ապլու թոյներէն մին է. 5 հարիւրորդագրամ միայն՝ մարդուս մահ կրնայ պատճառել, և բաւական է կաթիլ մ'իսկ ճագարի մը աչացը մէջ կաթեցնել որ զայն իսկոյն կը սատկեցնէ յետ դառն լորցից (convulsion): Մարդս ասոր գոլորչին ծծելով նոյն խոլ ամենաքիչ քաշնակութեամբ, կ'ունենայ կուրծքի դառն ցաւեր և չարաշաշը ճնշումն կը զգայ. և եթէ քիչ մ'ալ աւելի ծծէ կը մեռնի: կը համարին թէ խաժաղբածնական թթուուտը ջացյին գրութեան վրայ մասնաւոր ազդեցութիւն մի չունենայ, այլ արեան շրջանի կազմարանին վրայ ազդելով՝ կը դադրեցնէ սրտի բարախմունքն և հետևաբար մահ կը պատճառէ:

76. Մետաղական խաժուկը. — Խաժուկ կալոյ = խժ կը. — Պատրաստելու համար կը տաքցունեն կոպճեայ (grès) եղէր մի մէջ կարմիր չերմութեամբ կալոյ երկակաթախաժուկը (ferrocyanure de potassium), և կը թողուն որ պազի. յետոյ եղէր մէջ մնացած սեաւ կոյտը եռացեալ ալքոհոլու կը լուծեն, և լուծումը կը գոլորչիացը նեն 'ի դատարկութեան. կալոյ խաժուկը լուծմանէն կը հանգչի՝ սպիտակ բիւրեղեայ զանգուածոց կերպարանօք:

Այս բիւրեղները խորանարդածն են. ջրոյ և սովորական ալքոհօլի մէջ առատութեամբ կը լուծուին, սակայն լուծումը շուտով կը տարրաբաշխի՝ տալով աւշակ, խաժաղբածնական թթուուտ, մընատ (formiate) և բնածխատ կալոյ: Կալաբարային, կծու և դառն համ մ'ունի. խաժաղբածնական թթուուտ կը հոտի և սաստիկ թոյներէն մին է,

կը լուծէ իւր մէջ գքլորուկն արծաթոյ, կը լուծէ գարձեալ զնկոյ և արծաթոյ անլուծական խաժուկները՝ կազմելով կրկին խաժուկը. այս յատկութեանցը պատճառաւ գործածական է 'ի կալուանեան արծաթազօծման և լուսանկարի արուեստին մէջ:

77. Խաժուկ մեղկի = Ե Խժ² = (Բէ Բ)² Ս. — Խաժաղբածնական թթուուտի ջրախառն լուծման մէջ կը լնուն փոշիացեալ թթուուտ սնդկի. կը բարկցնեն լուծումը և կը ստանան խաժուկի սնդկոյ հատուածակողմեան բիւրեղներ՝ անգոյն և գիմահար, լուծականք 'ի չուր, յալքոհլ և յեթեր, Գործածական է 'ի բժշկութեան տոփական ախտից դէմ:

78. Երկաթախաժուկը (Ferrocyanures). — Երկաթախաժուկը կ'ըսուին այն բաղադրութիւններն որք կը բովանդակեն մի և նոյն ժամանակ թէ խաժածին և թէ երկաթ. այս երկու մարմիններս իրարու հետ միանալով կը կազմեն բաղադրեալ հատուածուն արմատ մը՝ որ անայլայլ է և կ'անցնի բաղակցութենէ մը յայլ բաղակցութիւն: Այս արմատս է երկաթախաժուկը (Ե Խժ⁶)^{1/4}, յորում երկագօր հիւլէ մի երկաթոյ միացած է 6 խումբ խաժածնի Բն Բ հետ. հետևաբար երկուքին միութեամբ կազմուած արմատը քառազօր է:

Երկաթախաժուկը կրնայ միանալ միազօր մետաղի մը կ'հիւլէցը հետ, ինչպէս է կալին, և կազմել երկաթախաժուկը կալոյ (Ե Խժ⁶) Կէ⁴: Այս բաղադրութիւնը ազդեցութեամբ մետաղական աղերու՝ կրկին տարրաբաշխութեան կ'ենթարկուի, և իւր մէջ բովանդակած կալին ուրիշ մետաղէ մը կը փոխանակուի. օրինակ իմն, կ'ունենանք երկաթախաժուկ արծաթոյ (Ե Խժ⁶) Ա⁴, երկաթախաժուկ կը լուսոյ (Ե Խժ⁶) Կէ²: Կամ երբ երկաթախաժուկ կալոյ վրայ ազդել տանք քլորաջրածնական թթուուտ, կը ստանանք երկաթախաժուկ կը լուսնենք կամ թթուուտ երկաթախաժածնական (ferrocyanhydrigue) (Ե Խժ⁶) Զ⁴: Ուրեմն բոլոր այս բաղադրութիւններէս կը տեսնենք որ Բն Խժ⁶ խումբը կը փոխադրուի բաղակցութենէ մը յայլ բաղակցութիւն,

79. Երկաթախաժուկ կալոյ կամ բրուսատ կալոյ (Prussiate de potassium) = Ե Խժ⁶ Կէ⁴⁺⁵ Զ² Թ. — Այս մարմինս պատրաստելու համար կը հրակիզեն փակ անօ-

Թոյց մէջ կենդանական նիւթերը, ինչպէս են մազ, մորթ, չորցած արին, հինգած կաշներ, և այլն, ընդ բնածիսատի կալոյ, Մնացորդին վրայ կը լեցնեն տաք ջուր, ծըծըմբատ երկաթայնոյ, և ամբողջութիւնը կը հրակիլէն։ Գործողութիւնը աւարտելէ վերջ զանգուածը կը լուծեն ջրոյ մէջ. գոլորշիացմամբ՝ կալոյ երկաթախաժուկը կը բիւրեղանայ։

Այս բիւրեղները հատուածակողմեան ձեւը ունին և իւրենց մէջ երեք մասնիկ ջուր կը բովանդակէն. գեղին կիտրոնագոյն են, աղի և դառնահամ. լուծական եռացեալ ջրոյ մէջ, անլուծական յալքոն։

80. Երկաթախաժուկը երկաթական (Ferrocyanure ferrique) = ($\text{Ե} \text{Խ}^6$)⁵ $\text{Ե}^4 + 18 \text{ Զ}^2 \text{ Թ}.$ — Կ'ըսուի միանգամայն կարոյտ Բրուսիոյ (bleu de Prusse). Երբ երկաթական աղի մը վրայ յաւելունք երկաթախաժուկի կալոյ լուծումն, կ'ունենանք գեղեցիկ կապտագոյն վայրահոսումմի։

$$2 \text{ Ե}^2 \text{ Ք}^6 + 3(\text{Ե} \text{Խ}^6 \text{ Կ}^4) = 12 \text{ Կ}^6 \text{ Ք} + (\text{Ե} \text{Խ}^6)^3 \text{ Ե}^4$$

Քլորուկ	Երկաթախաժուկ	Քլորուկ	Երկաթախաժուկ	Երկաթական
կալոյ		կալոյ		(կապոյտ թը բուսիոյ)

Ի վաճառս գործածուող Բրուսիոյ կապոյտը սովորաբար խորանարգածե է. անլուծական ՚ի ջուր, յալքոն և տկարթթուուներու մէջ։ Որթնօական թթուուտը (acide oxalicus) զայն կը լուծէ՝ պահելով նոյն մարմարոյն գոյնը, և այս լուծումն իրը կարոյտ թանաք կը գործածուի։

81. Երկաթիխաժուկը (ferricyanures). — Երկաթախաժուկ կալոյ լուծման մէջն անցնելով քլորի հոսանք մը՝ կ'ունենանք։

$$2(\text{Ե} \text{Խ}^6 \text{ Կ}^4) + \text{Ք}^2 = (\text{Ե}^2 \text{ Խ}^{12}) \text{ Կ}^6 + 2 \text{ Կ}^6 \text{ Ք}$$

Քլոր	Երկաթիխաժուկ	Քլոր	Երկաթիխաժուկ	Քլոր
		կալոյ		կալոյ

Կրկին հիւլէք երկաթախաժուկի միացան իրարու հետ, կորսնցնելով կալոյ երկու հիւլէներն։

$$\begin{aligned} & \text{Ե} \text{Խ}^6 \text{ Կ}^4 + \text{Ե} \text{Խ}^6 \text{ Կ}^4 = \\ & \text{Երկաթախաժուկ} \quad \text{Երկաթախաժուկ} \\ & \text{կալոյ} \quad \text{կալոյ} \\ \\ & = \text{Ե}^2 \text{ Խ}^{12} \text{ Կ}^8 - \text{Կ}^2 = \text{Ե}^2 \text{ Խ}^{12} \text{ Կ}^6 \\ & \text{Երկիմ հիւլէք երկա} \quad \text{կալի} \quad \text{Երկաթիխաժուկ} \\ & \text{ժախաժուկի կալոյ} \quad \text{կալոյ} \end{aligned}$$


որով կը ձեւանայ վեցազօր արմատ մը (Ե² Կ¹²)⁴, և միանալով վեց հիւլէ միազօր կամ երեք հիւլէ երկազօր մետաղաց հետ կը կազմէ երկաթիխաժուկ նատրի (Ե² Խ¹²)⁶ կամ, երկաթիխաժուկ կը պարնոյ (Ե² Խ¹²) Կ⁵, երկաթիխաժուկ կը ածնի (Ե² Խ¹²) Կր։ Կայ նաև երկաթիխաժուկացնական (ferricyanhydrique) թթուում (Ե² Խ¹²) Զ⁶ մի։

82. Երկաթիխաժուկ կալոյ = (Ե² Խ¹²) Կ⁶. — Կը պատրաստեն այս աղը՝ անցնելով քլորի հոսանք մը երկաթախաժուկի կալոյ լուծման մէջն։ Կը կազմուի քլորուկ կալոյ և երկաթիխաժուկ՝ որ զոլորշիացմամբ կը հանգչի լուծմանէն, և ապա երկրորդ անգամ բիւրեղացմամբ կը դառն։


$$2(\text{Ե} \text{Խ}^6 \text{ Կ}^4) + \text{Ք}^2 = 2 \text{ Կ}^6 \text{ Ք} + (\text{Ե}^2 \text{ Խ}^{12}) \text{ Կ}^6$$

Քլոր	Քլոր	Քլոր
կալոյ		կալոյ


Կը բաղկանայ խոշոր հատուածակողմեան տարանկիւնածե բիւրեղներէ՝ գեղեցիկ թիսակարմիր գունով, լուծական ՚ի ջուր, անլուծական յալքոն։ Իւր ջրացին լուծումը սեաւ գեղնագոյն է. Երկաթական (ferrique) աղերը չի վայրահոսեր. իսկ երկաթայիլն (ferreux) աղերու վրայ աղելով կու տայ վայրահոսում մի նման Բրուսիոյ կապոյտին որ կ'ըսուի կապոյտ թիւրեպիշի (bleu de Turnbull).




83. Շանթակատը (Fulminates). — Երկար ատեն են թագրեցին թէ շանթակատք՝ խաժուկ մեղիլածնէ (cyanure de méthyle) յառաջ գան, որոյ մէջ չըածնի հիւլէից մին փոխանակուած ըլլայ Բ թ² խումբէ, իսկ միւս երկուքն՝ մետաղերէ.




Յետոյ տեսան որ սնդկի շանթակատը (fulminate de mercure) քլորաջրածնական թթուուտիւ կու տայ քլորուկ սնդկի, քլորաջրածնատ թթուուկաւշակի (oxyammoniaque) Բ Զ⁵ Թ, և թթուուտ բնածխական։ Այն ատեն համարեցան թէ շանթակատք այնպիսի մարմնէ մը յառաջ կու գան որ դեռ չէզպացած չէ. այս մարմիննէ շանթական թթուուտ (acide fulminique), որոյ նշանացոյցն պիտի ըլլայ.



Հետեւաբար մետաղական շանթակատք պէտք է որ ըլլան



Քլորաջրածնական թթուուտի հակագդեցութիւնը կը տեսնուի հետեւեալ հաւասարութեան մէջ.



Անդկի շանթակատը Հովարտ գտաւ 1800ին։ Կը պատրաստուի լուծելով 'ի ցրտութեան սնդկի քլորակական թթուուտի մէջ, և ելած թթուուտ բորակատ սնդկին (azotate acide de mercure) վրայ աւելցնելով ալքոհոլ։ Անդկի շանթակատն կը վայրահոսի սպիտակ բիւրեղեայ կերպարանք։ Միծ զգուշութիւն կը պահանջուի, վասն զի բախմամբ կը պայթի ամենայն դիւրութեամբ։ Կը մոնէ հրացանաց և ումբաց խանծից (amorce) շանթակատներուն բաղադրութեանը մէջ։

Նախընթաց գործողութեան մէջ եթէ փոխանակ սընդկի գործածենք արծաթ, կ'ունենանք շանթակատ արծաթոյ որ աւելի ևս պայթուցիկ է։ Կրկին տարրաբաշխութեամբ՝ կը ձևանան տարբեր շանթակատներ՝ որք հաւասարապէս սաստիկ կը պայթին։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՌԴ

ԵՐԿՎԻՆԿՎԱԾՆ ՋՐԱԲՆՍՄԾԽՈՒԿՔ . — ԱԼՔՈՂՑՐԻՏՔ

Եթելածնակ և համաբումք . — Ալքաղցրիտք

84. Ջրաբնածնովք (*Hydrocarbures*) = $\beta\alpha\tau \mathfrak{Q}^{2r}$. — Տեսանք որ յագեալ ջրաբնածխուկք Բնτ \mathfrak{Q}^{2r+2} , կորսընցունելով հիւէ մի ջրածնի՝ կ'ըլլան միազօր ալքոհական արմատներ Բնտ \mathfrak{Q}^{2r+4} նշանացուցիւ . այսպէս մեղիլածինը Բնէ ջէ յառաջ կու գայ ջրածնուկ մեդիլածնէ Բնէ ջէ, եթելածնը Բնէ \mathfrak{Q}^5 ջրածնուկ եթիլածնէ Բնէ ջէ, և այլն :

Այս ալքոհական արմատները առանց փոխիխութիւն մի կրելու կը մտնեն ալքոհիներու մէջ, եթերներու մէջ, և այլն : Փոխանակելով իրենց ջրածնոյն երկու հիւէներն՝ հիւէ մի թթուածնոյ հետ՝ կ'ըլլան թթուածնեալ արմատներ, կամ թէ ըսենք, կը կազմեն թթուուտներու արմատներ, որք կը մտնեն ալքոհիներու և ամիդներու մէջ :

Մեդիլածնական արմատոյն կը համեմատին խաժածնեալ բաղադրութիւնք . վասն զի մեդիլածնական արմատոյն Բնէ ջէ երեք հիւէ ջրածնոյն տեղ փոխանակելով եռահիւէական հիւէ մի բորակածնի՝ կ'ունենանք խաժածինը Բնէ թէ : Հետեւեալ նշանացոյցներն կը ցուցնեն մինչև ցարդ ուսեւալ մարմնոց իրարու հետ ունեցած յարաբերութիւնքն . ասնք կը բովանդակին իրենց մէջ միահիւէական արմատները կամ 'ի բնական վիճակի և կամ փոխանակութեամբ տարբերած .

Բն \mathfrak{Q}^3	Բն \mathfrak{Q}^3 , ջ	Բն ² \mathfrak{Q}^5	Բն ² \mathfrak{Q}^5 , ջ	Բն ² \mathfrak{Q}^5 , թ ջ
մեդիլա-	ջրածնուկ	եթիլա-	ջրածնուկ	ջրածնատ ե-
ծնական	մեդիլածնի	ծնական	եթիլածնի	թիլածնի
արմատ		արմատ		(ալքոհի)

Բն ջ թ,	Բն ջ թ, ջ	Բն ² \mathfrak{Q}^3 թ,	Բն ² \mathfrak{Q}^3 թ, ջ	Բն ² \mathfrak{Q}^3 թ, թ ջ
արմատ	ջրածնուկ	արմատ	ջրածնուկ	ջրածնատ քա-
մրջածնի	քացախա-	քացա-	քացախածնի	գախածնի (քա-
ծնի (ալքո-	խածնի			ծնի թը-
նիտ մրջա-				թուուտ)
(կամ)				

Բն Բ
արմատ խաժածնի
թթուուտ

Բն Բ, ջ
խաժածնական
եթիլածնական

Ինչպէս ըսինք ալքոհական արմատները, օրինակ իմն, մեղիլածին, եթիլածին, և այլն, միահիւէականք են, վասն զի յագեալ ջրաբնածխուկներէ հիւէ մի ջրածնի պակսելով կը ձեւանան : Իսկ երբ կրկին հիւէ ջրածնի պակսելու ըլլան, այն ատեն ելած ջրաբնածխեալ խումբերը պիտի ըլլան երկհիւէականք .

Բն² ջ⁶
ջրածնուկ
եթիլածնի

— ջ²
ջրածնի

— Բն² ջ⁴
եթիլածնակ

Բն³ ջ⁸
ջրածնուկ պրոփիլ-

լածնի

— ջ²
ջրածնի

— Բն³ ջ⁶
պրոփիլածնակ

Այս երկհիւէական արմատները կը կազմեն յազատվիճակի գտնուող ջրաբնածխուկներու շարք մը . 'ի բաց առեալ Բնէ ջ² արմատը որ Բնէ ջ⁴ նշանացոյցն ունեցող ջրաբնածխուկէ յառաջ կու գայ՝ կորսնցներովն կրկին հիւէ ջրածնի : Այս Բնէ ջ² խումբը կը մտնէ այլ և այլ բաղադրութեանց մէջ, ինչպէս 'ի քորուկն Բնէ ջ² ք², 'ի մանցուկն Բնէ ջ² Ա², սակայն կայուն արմատ մի չէ, վասըն զի այն ամէն անգամ որ ուղենանք չէզոքացնեի՝ կը կրկնապատկի և կը փոխարկի յեթիլածնակ (*éthylène*) Բնէ \mathfrak{Q}^4 ,

Հետեւեալ այս շարքիս առաջին եզրը կ'ըլլայ եթիլածնակ Բնէ \mathfrak{Q}^4 , որոյ մէջ ջրածնի հիւէ ից թիւը՝ բնածխոյ հիւէ ից թուոյն կրկինն է . ասոնք ունին իրենց ընդհանուր նշանացոյց Բնէ \mathfrak{Q}^{2r} :

Կրնան միանալ կամ 2 միահիւէական խումբերու հետ և կամ երկհիւէական խմբի մը հետ .

Բն² ջ⁴
եթիլածնակ

— Բն² ջ⁴ ք²
քլորուկ ե-

— Բն² ջ⁴ (թ ջ)²
թիլածնակի

Բն² ջ⁴ թ

թթուուտ

— Եթիլածնակ

Իրենց ջրատքն՝ երկհիւլէական ալքոհիներ են և յառակ անուամբ ալքաղցրիաք (glycols) կը կոչուին:

85. Եթիլածնակ (Éthylène) = $\text{CH}_2=\text{CH}_2$. — Եթիլածնակը որ կ'ըսուի միանգամայն կազ իշտարար (gaz oléifiant) կամ երկնածխեալ ջրածին, կ'ենէ անթիւ գործարանաւոր նիւթոց չոր թորեցմանէն, ինչպէս են պարարտ մարմինք, ռետինք, առածքական խէժ (caoutchouc), և այլն: Լուսաւորութեան կազի բաղադրութեան մէջ մտնող մարմիններէն մին է:

Կը պատրաստեն զասիկայ գործատանց մէջ՝ տաքցունելով յապակեայ փամփշտի ալքոհիլը ծծմբական թթուուտի հետ. ելած կազը կը հաւաքեն ջրոյ տաշտի վրայ:

Հակազդեցութիւնը հետևեալ եղանակաւ կը կատարուի.

$$\text{CH}_2=\text{CH}_2 + \text{H}_2\text{O} \rightarrow \text{CH}_3\text{CH}_2\text{OH}$$

ծծմբական	ալքոհիլ	եթիլծծմբական	ջուր
թթուուտ		թթուուտ	

$$\text{CH}_3\text{CH}_2\text{OH} \rightleftharpoons \text{CH}_2=\text{CH}_2 + \text{H}_2\text{O}$$

եթիլծծմբական	ծծմբական	եթիլածնակ
թթուուտ	թթուուտ	

Որով կը տեսնենք թէ եթիլածնակը կը տարբերի յաւքոհիէ, հիւլէ մի ջրով:

Անգոյն կազ մ'է եթերային հոտով և 0,9484 խտութեամբ. պայծառ բոցով կը վառի. քիչ լուծական է 'ի ջուր, և 'ի 0° բարեխառնութեան՝ ալքոհիլը կը ծծէ ասկից իւր տարածոցին 51/2 ը:

86. Կազ լուսաւորութեան. — Լուսաւորութեան կազերը խառնուրդք են ջրածնի, ջրածնուկ մեղիլածնի Բն ջէ ջէ և եթիլածնակի Բն ջէ: Պարարտ մարմիններէ ստացուած կամ զը կը բոլվանդակէ իւր մէջ առ 100 ջրածին 3, եթիլածնակ 57 և 56 ջրածնուկ մեղիլածնի: Հանածուխէ (houille) ելած կազին մէջ առ 100 կայ 4 եթիլածնակ, 55 ջրածնուկ մեղիլ-

լածնի և 50 ջրածին. մնացեալքն են բորակածին և թթուուտ բնածխական:

Լուսաւորութեան կազի նկատմամբ արդէն իսկ խօսած ենք Անդորժարանաւոր տարրաբանութեան մէջ (Տես Հատոր Ա. § 175):

87. Համարումք եթիլածնակի. — Եթիլածնակի համարուն (homologue) ջրաբնածխուկներն են.

Պրոպիլածնակ (propylène) Բն ջէ որ անգոյն կազ մ'է. բուտիլածնակ (butylène) Բն ջէ, կ'եռայ յ 55°ի, և կը պատրաստուի թորեցմանելով ամիլածնական ալքոհոլը ըլորուկի գնկոյ հետ: Եկազդնակ (hexylène) Բն ջէ 68–70°. և փիլիլածնակ (heptylène) Բն ջէ օկտիլածնակ (octylène) Բն ջէ 16°, և այլն: Այս ջրաբնածխուկներու շարքին մէջ ստէպ զուգամասն (isomère) մարմնոց կը հանդիպինք:

Մէնքն ալ եթիլածնակի գլխաւոր յատկութիւններն ունին. կու տան քլորուկներ, ժահնուկներ, որք կրնան փոխարկիլ ալքաղցրիտներու (glycols):

88. Ալքաղցրիտը (Glycols). — Արդէն իսկ տեսանք որ միահիւլէական ալքոհիները՝ միահիւլէական արմատոց ջրաթթուուկներն են (§ 11). այսինքն, միազօր արմատ մը, օրինակ իմին, մեղիլածնին Բն ջէ, կ'երթայ կը միանայ միազօր խումբի մը հետ Թ ջէ, և կը կազմէ Բն ջէ, Թ ջ նըշանացուցիւ միահիւլէական ալքոհոլ մը՝ որ է ալքոհոլն մեղիլածնական:

Ունենալով արդ Բն ջէ ընդհանուր նշանացուցիւ երկհիւլէական արմատներ, ինչպէս եթիլածնակ Բն ջէ ջէ, պրոփիլածնակ Բն ջէ, և այլն, որպէս զի ասոնց զօրութիւնքը յագենան, կը միանան կրկին անդամ Թ ջ խումբին հետ, հետևեաբար կրկին ալքոհիներ են, և յատուկ անուամբ կ'ըսուին ալքաղցրիտը:

89. Անդորժական ալքաղցրիտը որ է չըտա երիլածնակի կամ երիլածնակական ալքաղցրիտ (glycol éthylique) Բն ջէ Թ ջէ = Բն ջէ ջէ ջէ ջէ այս շարքին առաջին եղբն է:

Կը պատրաստեն՝ ազդել տալով քացախատ արծաթոյ վրայ զժահնուկ եթիլածնակի (bromure d'éthylène). կ'ենէ ժահնուկ արծաթոյ և ալքաղցրիտ երկացախական

(glycol diacétique) կամ երկքայախատ եթիլածնակաշան.

$$\beta n^2 \varrho^4 \theta^2 + 2 (\beta n \varrho^3 \theta^2 \Pi) = \beta n^2 \varrho^4 < \frac{\beta n^2 \varrho^3 \theta^2}{\beta n^2 \varrho^3 \theta^2} + 2 \Pi \theta$$

ժահմուկ քացախատ առ ալքաղցրիտ երկ ժահմուկ
եթիլածնակի ծաթոյ քացախակամ արծաթոյ

Զեացած երկքայախական ալքաղցրիտը կը տաքցունեն
ջրատ կը ըստով և կ'ունենան.

$$\begin{aligned} \beta n^2 \varrho^4 < \frac{\beta n^2 \varrho^3 \theta^2}{\beta n^2 \varrho^3 \theta^2} + \Pi \varrho^2 \theta^2 &= \\ \text{ալքաղցրիտ } &\text{ զրատ } \text{ կը ըստով } \\ \text{գախակամ} & \\ \\ = \beta n^2 \varrho^4 &< \frac{\theta \cdot \varrho}{\theta \cdot \varrho} + (\beta n^2 \varrho^3 \theta^2)^2 \Pi \varrho & \\ \text{ալքաղցրիտ} & \quad \text{քացախատ} \\ & \quad \text{կը ըստով} \end{aligned}$$

Ալքաղցրիտը անդոյն անհոտ և օշարակային հեղուկ մ'է 1,125 խտութեամբ՝ ի 00ի բարեխառնութեան։ Կ'եռայ 1970 ի. ալքոհօլի և ջրոյ մէջ ամենայն համեմատութեամբ կը լուծուի, իսկ եթերի մէջ հազիւ լուծական է։ Կը լուծէ զկալիոն, զքլորուկ նատրի և զքլորուկ սընդհակական։

ԳԼՈՒԽ ԻՆՍԵՐՈՐԴ

ԱԼՔՈՂՑՐԻՏՆԵՐԸ ՑԱՌԱՋ ԵԿՈՂ ԹԹՈՒՌՈՒՏՔ

Թթուուտ բնածխակամ. — Թթուուկ բնածխոյ. — Ծծըմ բուկ բնածխոյ. — Միզիտ. — Մսիտ. — Կաթմակամ թթուուտ. — Թթթթչակամ թթուուտ. — Սաթակամ թթուուտ։

90. Որովհետեւ բնածխական թթուուտը՝ ալքաղցրիտներէ յառաջ եկող թթուուտներուն կը մերձենայ, անոր համար հոս նախ առաջնոյն վրայ կը խօսինք և ապա յետնոյ։

91. Թթուուտ բնածխակամ = $\beta n \theta^2$. — Թթուուտ կամ անջուր բնածխականը $\beta n \theta^2$, 'ի բնութեան առատ գունուող թթուուտներէն մին է. կամ՝ 'ի բաղակցեալ (ըլնածխատը) և կամ յազատ վիճակի. կը բղիսէ երկրիս վրայի ճեղքերէն և հրաբուղիներէն։ Ամենայն ըմպելի լուրք կը բովանդակեն իրենց մէջ այս թթուուտս, սակայն կան՝ 'ի մասնաւորի քանի մի տեսակներ՝ որոց մէջ այնչափ առատ է որք բացօթեայ կը փրփրան (Ուէլց, Վիշի, և այլն)։

Կ'ելնէ միշտ բնածխատներու հրակիղմանէն (calcination), ալքոհական խմորմանէ, չնչառութենէ, լուսաւորութեան և չեռուցման ծառայող ածխոյ և գործարանաւորեալ նիւթոց կիղմանէն, և այլն։

Կը պատրաստեն զայն զործատանց մէջ՝ ազդել տալով բնածխատ կրածնի (կուճ marbre, կաւիճ), և այլն, վրայ քլորաղիածնական թթուուտը։

$$\text{կր } \theta, \beta n \theta^2 + 2 \varrho \theta = \beta n \theta^2 + \text{կր } \varphi^2 + \varrho^2 \theta$$

բնածխատ	քլորաղիա	կազ բնած	քլորուկ
կրածնի	ծմական թթ	խակամ	կրածնի

92. Անդոյն կազ մ'է, օդէն աւելի ծանր և կը կը է 1, 5421. իւր այս խտութեանը պատճառաւ փակ տեղաց մէջ և կամ ուր հովահարութիւն չի կայ, կը սկսի

գետնի վրայ իջնել և հոն այս ինչ բարձրութեամբ հաւաքիլ. ինչպէս ջրհորոց մէջ, և կամ հնծաններու մէջ ուր զինին խմորման ենթարկուած է: Աէապօլսոյ մօտ կայ Շան քարանձար որոյ յատակն 0°.20 բարձրութեամբ Շան քարանձար որոյ յատակն 0°.20 բարձրութեամբ Շան անվաս բնածխական թթուուտ նստած է. մարդկի հոն անվաս կրնան պտըտիլ, սակայն շունք մտնելով կ'անչնչանան: կրնան պտըտիլ, սակայն շունք մտնելով կ'անչնչանան: Այսպէս նաև 'ի ձաւա թորեառոր ձորը՝ որ անմատչելի է թէ մարդկանց և թէ կենդանեաց, և լի է անշնչացեալ կենդանեաց ոսկերօք:

Այս կազը 36 մթնոլորտ ճնշմամբ կը փոխարկի անգոյն հեղանիթոյ մը, և գոլորշխացմամբ այնքան շերմութիւն կը ծձէ որ բարեխառնութիւնը մինչև -780 կ'իջեցնէ, և նոյն իսկ հեղուկ թթուուտին մի մասը հաստատուն մարմարոց փոխարկուելով՝ կ'ըլլայ ձեռն նման սպիտակ և թեթև նիւթ մը. զասիկայ եթէ մատամբք խորտակենք, կարմրացած երկաթոյ նման զմորթ կը խանգարէ. եթե կարմրացած հետ խառնելով՝ բարեխառնութիւնը զրոյշ վար մինչը հետ խառնելով՝ բարեխառնութիւնը մի հաշը 1000 կը հասցնէ, որ բաւական է սառեցնելու մի հաշը զարագրամ մնդիկը քանի մը վայրկենի մէջ:

Լուծական է 'ի չոր, և իւր այս լուծականութիւնը ճնշման հետ կ'առաւելու: Արուեստիւ պատրաստուած ճնշման հետ կ'առաւելու: Արուեստիւ պատրաստուած կազային ըմպելիքները որք թթուենի համ մ'ունին՝ զօրաւոր ճնշման տակ բնածխական թթուուտիւ յագեալ ջրեր են, և երբ ասոնց վրայէն ճնշումը պակսելու ըլլայ, բնածխական կազը պղպղմամբ կը սկսի փախչիլ: Իսկ եռացմամբ որ և իցէ չուր իւր մէջ բովանդակած բնածխական թթուուտը բոլորովին կը կորսնցունի. այս պատճառաւ սովորական շուրը որ իւր մէջ բնածխաստ կրածնի կը բովանդակէ՝ լուծեալ 'ի բնածխական թթուուտի, 4000 ջրը մութեամբ կը թողու հանդչիլ. այս բնածխաստ կրածնին է որ խառն օտար նիւթոց հետ՝ գոլորշխացման կաթսաներուն կողիցը վրայ պնդացած մրուկ մի կը ծգէ:


Առատ բնածխական թթուուտ բովանդակով՝ մթնոլորտ մի անյարմար է չնշառութեամն և կիզման. անոր համար կամ պէտք է հովահարել որպէս զի այս թթուուտիս քանակը նուռազի, և կամ նոյն տեղուոյն մէջ կաթն կրոյ (lait de chaux) գնել որ զայն ծծէ:

Կրաշուրը՝ ազդեցութեամբ բնածխական թթուուտի կը


պղտորի, վասն զի կը սկսի իւր մէջ բնածխաստ կրածնի ձևանալ:

93. Թթուուկ բմածխոյ (բնածխածին carbonyle) = թէ թ. — Այս թթուուկս բնածխական թթուուտի արմատն է և կը պատրաստուի հետեւեալ եղանակօք.

Ա. Հրակիզելով կոպճեայ եղջեր մէջ խառնուրդ մի թթուուկի զնկոյ և բնածխոյ.



Բ. Տաքցոնելով ապակեայ փամիշտի մէջ թրժնջական թթուուտը (acide oxalique) ծծմբական թթուուտի հետ. յետինս իրեն կը ծգէ առաջնոյն բովանդակած չուրը և զայն կը տարրաբաշխէ.



Կազային խառնուրդը կ'անցունեն այրեցական կալիոն բովանդակով լուծման մէջն որ իրեն կը ծգէ զթթուուտ բնածխական. իսկ բնածխոյ թթուուկը կը հաւաքի ջրոյ տաշչի վրայ:

94. Բնածխոյ թթուուկը կը ձևանայ այն ամէն անգամ երբ քիչ օդոյ առնել՝ ածուխ վառելու ըլլանք: Անգոյն անգոյն թունաւոր կազ մ'է, և մահ կը պատճառէ: 1884ին կրցան զայն 'ի հեղուկ զարձնել - 139, 5 ցրտութեամբ, և գոլորշխացնելով 'ի գատարկութեան յ - 2240 'ի հաստատուն մարմնոյ վերածեցին: Կը վառի կապտագոյն բոցով՝ տալով թթուուտ բնածխական. և իւր առ թթուածին ունեցած այս մեծ յարաբերութեանը պատճառաւ՝ մետաղական թթուուկները վերածնելու կը ծառայէ:

Լուսոյ ազդեցութեամբ կը միանայ վլորի հետ տալով քլորուկ բնածխածնի (chlorure de carbonyle) կամ թթուուկաբլորուկ բնածխոյ թէ թ. Ք. այս նշանացոյցէն

կը հետևի որ բնածխոյ թթուուկն Բն Թերկհելէական խուռմք մ'է :

95. Ծծմբուկ բնածխոյ = Բն Ծ². — Բնածխոյ ծծմբուկը Բն Ծ² իւր կազմակերպութեամբ բնածխական թթուուտի Բն Թ² կը նմանի . կը պատրաստուի՝ անցնելով ծծմբոյ գորոշչն հրակիկեալ ածխոյ վրայէն :

Անգոյն հեղանիթ մ'է , գարշահոտ , ամենաշարժուն և սաստիկ բեկրեկիչ . 'ի 150 բարեխառնութեան իւր խառնութիւնն է , 0 , 271 . կ'եռայ հՅօի . բացօթեայ՝ կապտագոյն բոցով կը վառի տալով բնածխական և ծծմբային կազեր-

$$\text{Բն } \mathfrak{S}^2 + \mathfrak{B}^6 = \text{Բն } \mathfrak{B}^2 + 2 \mathfrak{S} \mathfrak{B}^2 \\ \begin{array}{c} \text{ծծմբատ} \\ \text{բնածխոյ} \end{array} \quad \begin{array}{c} \text{թթուածխ} \\ \text{թթուուտ} \end{array} \quad \begin{array}{c} \text{բնածխական} \\ \text{թթուուտ} \end{array} \quad \begin{array}{c} \text{ծծմբային} \\ \text{կազ} \end{array}$$

կը լուծուին մէջը ծծումբ , լուսածխն , քափուր (camphre) , պարարտ և խական (essentielle) իւղք , ուետինք առածգական խէժ (caoutchouc) . Յարուեստու մեծ և առածգական խէժ (caoutchouc) . Յարուեստու մեծ գործածութիւն ունի և կը ծառայէ ծծումբ տալու (vulcanisation) առածգական խիմերու , իւղային բուսոց քամուածքէն պարարտ իւղեր ստանալու , և այլն :

Սաստիկ ցնդական ըլլալուն պատճառաւ և իւր գոլորշիքն վասակար , գործաւորք կը վնասուին . կ'ունենան գըլխու ցաւ , պտոյտ , նողկանք և զղային գօրութեան տկարութիւն :

Ինչպէս բնածխական կազը կը միանայ մետաղական թթուուկներու հետ և կը կազմէ բնածխատներ , այսպէս նաև բնածխոյ ծծմբուկը կը միանայ մետաղական ծծընբուկներու հետ և կը կազմէ ծծմբաբնածխատներ . (sulfocarbonates) .

$$\text{Բն } \mathfrak{B}^2 + \mathfrak{B}^m \mathfrak{B} = \text{Բն } \mathfrak{B}^3 \mathfrak{B}^m \quad \text{համարութիւն} \quad \text{Բն } \mathfrak{B}^3 \mathfrak{Q}^2 \\ \begin{array}{c} \text{բնածխական} \\ \text{թթուուտ} \end{array} \quad \begin{array}{c} \text{բնածխական} \\ \text{մատրիք} \end{array} \quad \begin{array}{c} \text{բնածխական} \\ \text{թթուուտ} \end{array} \\ (\text{համարութիւն})$$

$$\text{Բն } \mathfrak{S}^2 + \mathfrak{B}^m \mathfrak{B} = \text{Բն } \mathfrak{S}^3 \mathfrak{B}^m \quad \text{համարութիւն} \quad \text{Բն } \mathfrak{B}^3 \mathfrak{Q}^2 \\ \begin{array}{c} \text{ծծմբուկ} \\ \text{բնածխոյ} \end{array} \quad \begin{array}{c} \text{ծծմբուկ} \\ \text{մատրիք} \end{array} \quad \begin{array}{c} \text{ծծմբաբնած} \\ \text{խատ մատրիք} \end{array} \\ (\text{համարութիւն})$$

96. Միզիտ (Uréé) կամ բնածխամիդ (carbamide) = Բն Թ² Զ⁴ . — Միզիտը Ուուէլ գտաւ յանգուտ վիճակի՝ միզին մէջ , և յետոյ չչղոքացուցին զայն ֆուոքրոււ և Վէօքլէն : Կը գտնուի կենդանեաց միզին մէջ , գլխաւորաբար խստակերաց , և քիչ քանակութեամբ՝ թռչնոց և ղեռնոց . կը գտնուի զարձեալ 'ի գործարանս գրտնուող զանազան հեղանիթոց մէջ . ասոնք են հիւթք աչաց , արիւն , քրտինք , տողուկ , մամաց , և այլն : Ըստ Փէքարի՝ հետեւեալ նիւթերը կը բովանդակեն իրենց մէջ առ 100 այսչափ ինչ միզիտ .

Տողուկ	0, 035
Մաղձ	0, 030
Կաթն	0, 013
Աչաց հիւթք	0, 500
Քիւտիթ	0, 088 , և այլն :

Իսկ միզին մէջ գտնուուղ միզիտի քանակը փոփօխական է ըստ ժամանակաց , ըստ տարեաց և ըստ մննդեան անհատին : Լէհման փորձեց որ անհատ մը 24 ժամուան մէջ իւր սննդեանը համեմատ կու տայ հետեւեալ քանակութեամբ միզիտ .


Կենթամական կերակուրք .	.	.	52 , 23
Բուսական կերակուրք .	.	.	22 , 52
Խառն կերակուրք .	.	.	32 , 53
Բորակածին ըբովանդղակող կերակուրք .	.	.	15 , 41

Ուոր հիւանդութեանց (maladies aiguës) միջոց միշտի քանակը կ'առաւելու 60—70 գրամ 24 ժամուան մէջ :

Միզիտը՝ գործարանաց մէջ գտնուող հիւսուածոց կը րած այլափիսութեանց յետին եղբն է , որով կ'այլափիսին և կը սպառին . և կերակրոց մատակարարած նիւթերով՝ նորանոր գոյացութիւնք իրենց տեղը կը գրաւին : Միզիտը՝ կերակրոց բովանդակած բորակածնոյն 3/6ը իւր մէջ կը բովանդակէ . և որովհետեւ արեան մէջ կը գտնուի՝ երիկամունք զայն իրենց կը ձգեն : Աակայն հիւանդու-

թեանց միջոց երբ երիկամունք այլ ևս չեն գործեր, կը սկսի արեան մէջ հաւաքիլ, ինչպէս հնդկախտի (choléra) միջոց, թրայտի ախտին (maladie de Bright), որով և այն ատեն մկնային հեղանիւթոց, տողիաց և մաղձի մէջ առատութեամբ կը գտնուի: Երիկամանց հատմամբ, արեան մէջ հաւաքած միզիտը՝ ստամոքա-լնդերային (gastro-intestinale) լորձնաթաղանթից ձեռօք կը սպառի 'ի վիճակ բնածխատի աւշակի:

$$97. \text{Սպիտ} \quad (\text{Créatine}) = \beta^4 \varrho^9 \beta^5 \theta^2 + \varrho^2 \theta \cdot -$$



Ձև 25. Մղումն հեղանիւթոյն

Մախու գտաւ Շէվրէօլ: կը գտնուի թունոց, ձկանց և քառուտանի կենդանեաց մսոյն մէջ. կը գտնուի դարձեալ յուղեղն, յարեան, և երբեմն նաև միզին մէջ:

Պատրաստելու համար կը չարդեն միզը և խոչոր մանրած ասպակեայ փոշոյն հետ խառնելով կը լուծեն ալքոհոլի մէջ. կը տաքցունեն մարեմայ բաղանեաց վրայ և զանգուածը լաւ մը կը ճմին. յետոյ կը թորեցնեն ալքոհոլ մարեմայ բաղանեօք, և մնացած հեղանիւթը կապարոյ

քացախատիւ կը վայրահոսեն: կը մզեն (Ձև 25), կը բառնան մէջն մնացեալ կապարը ծծմբեալ ջրածնիւ, դարձեալ կը մլեն և մարեմայ բաղանեաց վրայ կը գուրըշիացնեն մինչեւ որ օշարակային թանձրութիւն մ'առնու: Փանի մ'օրէն մսիտը կը բիւրեղանայ:

Բիւրեղեայ, անգոյն և փալիլոն մարմին մ'է: Եռացեալ լրոյ մէջ առատութեամբ կը լուծուի, լուծական է յալքոհու, անլուծական յեթեր:

Մախու վրայ թթուուտներ աղղել տալով կամ երկար ատեն ջրով հռացնելով կը փոխարկենք զայն 'ի մսեղիտ (créatinine).

$$\begin{array}{c} \beta^4 \varrho^9 \beta^3 \theta^2 \\ \text{մսիտ} \end{array} = \begin{array}{c} \beta^4 \varrho^7 \beta^3 \theta \\ \text{մսեղիտ} \end{array} + \begin{array}{c} \varrho^2 \theta \\ \text{չուր} \end{array}$$

98. Կաթնակամ թթուուտը = $\beta^6 \varrho^6 \theta^5$. — Կամ երկու թթուուտը կաթնականք՝ երկուքն ալ զուգամասունք (isomères), միալկազմայինք (monobasiques) և երկհիւլէականք, սակայն կը տարբերին իրենց ծագմամբն, կազմակերպութեամբ, հակազդեցութեամբք և իրենց աղերուն բիւրեղային ձևոքն: Այս թթուուտը են տոլրական կարենական բրուռուն՝ որ կ'ըսուի միանդամայն պարզապէս բրուռուն կարենական, և բրուռուն երիշակալարենական (éthyléno-lactique) կամ ջրադրանեիտական (hydracrylique): Այս երկու կաթնական թթուուտից զուգամասութիւնը կը բացատրէն հետևեալ նշանացյցները, որոցմէ կը տեսնենք որ երկուքն ալ միալկազմայինք են և երկհիւլէականք, սյսինքն, կը բովանդակեն եւրաքանչիւրը խումբ մի ին թէ թէ զ և խումբ մի թ զ.

$\beta^4 \varrho^3$	$\beta^6 \varrho^2, \theta^5$
$\beta^4 \varrho, \theta^5$	β^6
$\beta^4 \theta^2 \varrho$	$\beta^6 \theta^2 \varrho$
կաթնակամ թթուուտ	ջրադրանեիտական թթուուտ

99. Սովորակամ կաթնակամ թթուուտ. — Զասիկայ Շէլէ գտաւ թթուած կաթի և զանազան տեսակ բուսա-

կան հիւթոց մէջ, ինչպէս է, օրինակ իմն ճակնդեղաց ծուծը: Յատուկ շաքարային խմորման մի արդիւնքն է, որ կըսուի կարեական խմորաւմն:

Կը պատրաստուի առատութեամբ՝ եռացնելով քաղցրանիւթը կալաքարաց հետ:

Օշարակային անգոյն հեղանիւթ մ'է՝ սաստիկ թթուազամ: Ջերմութեան ձեռօք իւր երկու մասնիկն կը կորսընցունէ մասնիկ մի ջուր և կը փոխարկի ի թթուուտերկաթնական (dilactique). բարձրագոյն բարեխառնութեամբ յետինս ալ կը կորսնցունէ մասնիկ մի ջուր, և կը սկսի թորիլ բիւրեղացեալ գոյացութիւն մի օր է անջորդ կարեական. զասիկայ ևս եռացնելով ջոյց հետ կու տայդարձեալ թթուուտ կաթնական.

$$\begin{array}{c} \text{Բ}^6 \text{ Զ}^6 \text{ Թ}^3 \\ | \\ \text{կաթմական} \\ | \\ \text{թթուուտ} \end{array} = \begin{array}{c} \text{Բ}^6 \text{ Զ}^{10} \text{ Թ}^5 \\ | \\ \text{երկաթմական} \\ | \\ \text{թթուուտ} \end{array} + \begin{array}{c} \text{Զ}^2 \text{ Թ} \\ | \\ \text{ջուր} \end{array}$$

$$\begin{array}{c} \text{Բ}^6 \text{ Զ}^{10} \text{ Թ}^5 \\ | \\ \text{երկաթմական} \\ | \\ \text{թթուուտ} \end{array} = \begin{array}{c} \text{Բ}^6 \text{ Զ}^8 \text{ Թ}^4 \\ | \\ \text{աթջուր} \\ | \\ \text{կաթմական} \end{array} + \begin{array}{c} \text{Զ}^2 \text{ Թ} \\ | \\ \text{ջուր} \end{array}$$

Գործածական է 'ի բժշկութեան, մանաւանդ իւր կաթնամքն:

100. Եթիլածմակալաթնական թթուուտ (Acide éthylénolactique). — Կ'ըսուի միանգամայն ջրադառնիտական թթուուտ (acide hydracrylique): Կը պատրաստեն ազդել տալով կալին՝ միախաժաղածնական ալքաղցրըսի (glycol monocyanhydrique) վրայ:

Առլորական կաթնական թթուուտի կը նմանի. յերմութեամբ կը կրկնաբաշխի 'ի ջուր և 'ի թթուուտ դառնիտական (acide acrylique) ԲՀՀ Զ⁴ Թ²:

101. Երկաղկազմային թթուուտը (Acide bibasiques). — Ալքաղցրիտք (glycols) որք կրկին անգամնախնական ալքոհոլներ են, այսինքն, կրկին անգամ կը բովանդակեն իրենց մէջ Բն Զ² Թ Զ խումբը, ունին իրենց համապատասխան թթուուտները, որք փոխադարձաբար կրկին անգամ թթուուտներ են: Որինակ իմն, քացախական

թթուուտը որ խումբ մը միայն ունի Բն Բն Թ Զ = Բն Թ² Զ, և կալոյ կամնատրի միոյ մասնըկանը հետ կրկին տարրաբաշխութեան կ'ենթարկուի, ասոր հակառակ նախնական ալքաղցրիտներէ յառաջ եկող թթուուտներն կրկին անգամ կը բովանդակեն իրենց մէջ Բն Թ² Զ խումբը, և աղկաղմի (base) մը՝ մէկ կամ երկու մասնըկանցը հետ կրկին տարրաբաշխութեան կ'ենթարկուին.

$$\begin{array}{c} \text{Բ}^n \text{ Թ}^3 - \text{Բ}^n \text{ Թ} \cdot \text{Զ} \\ | \\ \text{բացախական} \end{array} + \begin{array}{c} \text{Կ} \text{ Լ} \text{ Թ} \cdot \text{Զ} \\ | \\ \text{կալիոն} \end{array} = \begin{array}{c} \text{Բ}^n \text{ Զ}^3 - \text{Բ}^n \text{ Թ} - \text{Թ} \cdot \text{Կ} \text{ Լ} \\ | \\ \text{բացախատ} \end{array} + \begin{array}{c} \text{Զ}^2 \text{ Թ} \\ | \\ \text{չուր} \end{array}$$

$$\begin{array}{c} \text{Բ}^n \text{ Թ} - \text{Թ} \cdot \text{Զ} \\ | \\ \text{Բ}^n \text{ Թ} - \text{Թ} \cdot \text{Զ} \end{array} + \begin{array}{c} \text{Կ} \text{ Լ} \text{ Թ} \cdot \text{Զ} \\ | \\ \text{կալիոն} \end{array} = \begin{array}{c} \text{Բ}^n \text{ Թ} - \text{Թ} \cdot \text{Կ} \text{ Լ} \\ | \\ \text{Բ}^n \text{ Թ} - \text{Թ} \cdot \text{Զ} \end{array} + \begin{array}{c} \text{Զ}^2 \text{ Թ} \\ | \\ \text{չուր} \end{array}$$

$$\begin{array}{c} \text{Բ}^n \text{ Թ} - \text{Թ} \cdot \text{Զ} \\ | \\ \text{Բ}^n \text{ Թ} - \text{Թ} \cdot \text{Զ} \end{array} + 2 \begin{array}{c} \text{Կ} \text{ Լ} \text{ Թ} \cdot \text{Զ} \\ | \\ \text{թթուուտ} \end{array} = \begin{array}{c} \text{Բ}^n \text{ Թ} - \text{Թ} \cdot \text{Կ} \text{ Լ} \\ | \\ \text{Բ}^n \text{ Թ} - \text{Թ} \cdot \text{Զ} \end{array} + 2 \text{Զ}^2 \text{ Թ}$$

Այս շարքին ընդհանուր նշանացոցն է Բն՛ Զ² Թ⁻² Թ⁴, և առաջին եզրը կը համարուի թթմնական թթուուտն:

102. Թթմնական թթուուտ (Acide oxalique) = ԲՀՀ Թ⁴ Զ² + 2 Զ² Թ . — Այս թթուուտս եթիլածնական ալքաղցրիտն (glycol éthylénique) է, որոյ կրկին ալքոհոլներն թթուուկած են.

$$\begin{array}{c} \text{Բ}^n \text{ Զ}^6 \text{ Թ}^2 \\ | \\ \text{ալքաղցրիտք} \end{array} = \begin{array}{c} \text{Բ}^n \text{ Զ}^2, \text{ Թ} \cdot \text{Զ} \\ | \\ \text{Բ}^n \text{ Զ}^2, \text{ Թ} \cdot \text{Զ} \end{array} \quad \begin{array}{c} \text{Բ}^n \text{ Թ}^4 \text{ Զ}^2 \\ | \\ \text{ալքաղցրիտք} \end{array} = \begin{array}{c} \text{Բ}^n \text{ Թ}, \text{ Թ} \cdot \text{Զ} \\ | \\ \text{Բ}^n \text{ Թ}, \text{ Թ} \cdot \text{Զ} \end{array}$$

Ուրեմն երկաղկաղմային թթուուտ մ'է. կու տայ միանգամայն թթուուտ և չզոր աղեր, թթուուտ և չզոր եւ թերներ.

$$\begin{array}{lcl} \text{Բն } \theta, \theta \cdot \underline{\theta} & = & \text{Բն } \theta^4 \left\{ \begin{array}{l} \underline{\theta} \\ \underline{\theta} \end{array} \right. \\ \text{Բն } \theta, \theta \cdot \underline{\theta} & = & \text{Բն } \theta^2 \cdot \theta \cdot \underline{\theta} = \text{Բն } \theta^2 \theta^4 \underline{\theta}^2 \\ \text{թթուուտ թրթմչատ} & & \text{չէզոք թրթմչատ} \\ \text{կալոյ} & & \text{կալոյ} \end{array}$$

$$\begin{array}{lcl} \text{Բն } \theta, \theta \cdot \underline{\theta}^2 \underline{\theta}^5 & = & \text{Բն } \theta^2 \theta^4 \left\{ \begin{array}{l} \text{Բն } \theta^2 \underline{\theta}^5 \\ \underline{\theta} \end{array} \right. \\ \text{Բն } \theta, \theta \cdot \underline{\theta} & = & \text{Բն } \theta^2 \theta^4 \left(\text{Բն } \theta^2 \underline{\theta}^5 \right)^2 \\ \text{թթուուտ հթիլածնաթըթմչակամ} & & \\ \text{թրթմչատ հթիլածնի} & & \end{array}$$

Ինչպէս կը տեսնենք, եթիլածնակամն ալքաղցրիտեյառաջ կու գայ՝ փոխանակելով անոր ջրածնոյն և հիւլենբն՝ 2 հիւլէ թթուածնիւ.

$$\begin{array}{lcl} \text{Բն } \underline{\theta}^2, \theta \cdot \underline{\theta} & + & \text{Բն } \theta, \theta \cdot \underline{\theta} \\ \text{Բն } \underline{\theta}^2, \theta \cdot \underline{\theta} & + & \text{Բն } \theta, \theta \cdot \underline{\theta} \\ \text{ալքաղցրիտ} & & \text{թթուածին} - \text{թրթմչակամ} \\ & & \text{թթուուտ} \end{array} \quad \begin{array}{l} \text{Բն } \theta, \theta \\ + 2 \underline{\theta}^2 \\ \text{զուր} \end{array}$$

Կը գտնուի 'ի բնութեան շատ մը բուսոց մէջ կազմելով կալոյ և կրածնի աղեր. կը գտնուի դարձեալ թրթընչուկի (oseille) ծուծին մէջ, կը պատրաստեն՝ թթուուկեցնելով շաքարը բորակական թթուուտիւ:

Կը բազկանայ հատուածակողմեան անգոյն և թափանցիկ բիւրեղներէ, որք կը բովանդակեն իրենց մէջ կրկին մասնըկունք ջրոյ թէ՞ թ՞ թ՞ 2 թ՞ 2 + 2 թ՞ 2. ասոնք բացօթեայ կը ծաղկաւետին կորսնցնելով իրենց բիւրեղացման ջուրը: Լուծականք են 'ի ջուր և յալքուլ, և իրենց լուծումը սաստիկ թթուահամէ, լուադեղի ներկը (tournesol) կը կարմրացնէ և բնածխատքը պղպղմամբ կը տարրաբաշխէ:

Տաքցունելով յ900ի կը հալի իւր բիւրեղացման ջոյն մէջ, 'ի 1000ի կը կորսնցունէ իւր այս բիւրեղացման ջուրը. իսկ 1500 բարեխառնութեամբ կը տարրաբաշխի:

$$\begin{array}{lcl} \text{Բն } \theta^2 \theta^4 \underline{\theta}^2 & = & \text{Բն } \theta^2 + \text{Բն } \theta + \underline{\theta}^2 \theta \\ \text{թրթմչակամ} & \text{բնածխակամ} & \text{թթուուկ} \\ \text{թթուուտ} & \text{կազ} & \text{բնածխոյ} \end{array}$$

Տաքցունելով քաղցրըտի (glycérine) հետ կը վերածուի բնածխական և մրջնական թթուուտնելու.

$$\begin{array}{lcl} \text{Բն } \theta^2 \theta^4 \underline{\theta}^2 & = & \text{Բն } \theta^2 + \text{Բն } \underline{\theta}^2 \theta^2 \\ \text{թրթմչակամ} & \text{բնածխակամ} & \text{մրջնակամ} \\ \text{թթուուտ} & \text{կազ} & \text{թթուուտ} \end{array}$$

Այս տարրաբաշխութեան եղանակը արդէն իսկ մըրջնական թթուուտի պատրաստութեան եղանակն է (Տես § 52):

103. Սաթական թթուուտ (Acide succinique) = Բն 2 թ 4. — Ի սկզբան ստացան այս թթուուտս՝ չորթրեցման ենթարկելով սաթը. հիմակ կը պատրաստեն՝ ենթարկելով խմորման զինձորատն կրածնի (malate de chaux): Գործողութիւնը կատարելու համար՝ վերոյիշեալ աղը կը լուծեն ջրոյ մէջ աւելցնելով վրան սպիտակ պանիր: Քանի մօրէ վերջ խնձորատը կը փոխարկի ՚ի սաթատ. կը բաժնեն զայն իւր մայր ջրէն (eau mère) և ջրախառն ծծմբական թթուուտիւ կը տարրաբաշխն: Բաժնելով լուծմանէն զծծմբատ կրածնին՝ հեղուկը կը գոլորշիացնեն. ելած սաթական թթուուտը եռացեալ ջրոյ մէջ բիւրեղացմենով՝ կը զտուի:

Կ'ունենանք միշտ սաթական թթուուտ՝ որ և է ալքոհօլական խմորման միջոց, և կամ իւղային և ճարպային մարմնոց թթուուկացմանէն 'ի ձեռն բորակական թթուուտի:

ԳԼՈՒԽ ՏԱՐՆԵՐՈՐԴ

ԵՐԱԾԻՒԿԵՍԿԱՆ ԱԼՔՈՀԵՔ • — ՔԱՂՅՐԻՑ • — ԲԱԶՄԱՂՅ
ԿԱԶՄԱՑԻՆ ԹԹՈՒՈՒՏ

Քաղցրիտ • — Եթերք քաղցրուտի • — Պարարտ մարմիմք.
— Բորակաքաղցրիտ • — Խոզակամ թթուուտ. — Խմծո-
րակամ թթուուտ. — Գինեմրբակամ թթուուտ — Գինե-
մրբատք. — Ործացուցիչք. — Կիտրակամ թթուուտ. —
Միզակամ թթուուտ. — Սրիտ:

104. Քաղցրիտ (Glycérine) = $\text{Բ}^5 \text{ Զ}^3 \theta^5$. — Միա-
հիւէկական ալքոհոլք մէկ անգամ միայն կը բովանդակեն
իրենց մէջ թ. Զ խումբը. ալքաղցրիտք (glycols) կրկին
անգամ կը բովանդակեն և են երկհիւէկականք. իսկ քաղ-
ցրիտք որք երեք անգամ կը բովանդակեն իրենց մէջ այս
խումբը. կու տան երեք շարք եթերներու, և են եռահիւ-
էկանք: Քաղցրիտը պարարտ մարմնոց կրկնաբաշխու-
թենէն յառաջ կու գայ, և կենդանական մարմնոց մէջ ե-
թերաց կերպարանօք ստէպ կը գտնուի: Իւր արմատն է
յագեալ ջրաբնածինուկ (hydrocarbure) մը, ջրածնուկ
պրոպիլածնի բնէ Զ³, որոյ ջրածնոյն երեք հիւէից տեղ
փոխանակած է երեք անգամ թ. Զ խումբը բնէ Զ³ թ⁵ =
բնէ Զ⁵ (թ. Զ)³, և այս յաջորդական փոխանակութենէն
կը կաղմուի հետեւեալ մարմնոց շարքն.

$$\begin{aligned}
 & \text{Բ}^5 \text{ Զ}^3 \\
 & \text{ջրածնուկ պրոպիլածնի} \\
 & \text{Բ}^5 \text{ Զ}^3 \theta = \text{Բ}^5 \text{ Զ}^7, \text{թ. Զ} \\
 & \text{ալքոհոլ պրոպիլածնակամ} \\
 & \text{Բ}^5 \text{ Զ}^3 \theta^2 = \text{Բ}^5 \text{ Զ}^6 \left\{ \begin{array}{l} \text{թ. Զ} \\ \text{թ. Զ} \end{array} \right. \\
 & \text{պրոպիլալքաղցրիտ (propylglycol)} \\
 & \text{Բ}^5 \text{ Զ}^3 \theta^3 = \text{Բ}^5 \text{ Զ}^5 \left\{ \begin{array}{l} \text{թ. Զ} \\ \text{թ. Զ} \\ \text{թ. Զ} \end{array} \right. \\
 & \text{քաղցրիտ}
 \end{aligned}$$

105. Քաղցրիտը գտաւ Շէլէէ. իսկ Շէլրէօլ ապացը-
ցուց թէ որ և է ժամանակ երբ պարարտ մարմինները
կալաքարաց ձեռօք կրկնաբաշխենք՝ միշտ քաղցրիտ կը
ստանանք:

Ամենայն պարարտ մարմինք՝ են եթերք քաղցրըտի, և
կը ձեւանան միանալէն մասնիկ մի քաղցրըտի՝ միադկազմա-
յին թթուուտի մը երեք մասնըկանցը հետ, թողլով ա-
զատ երեք մասնըկունք ջուր.

$$\begin{aligned}
 & \text{Բ}^5 \text{ Զ}^5 (\theta. Զ)^3 + 3 \text{ Բ}^5 \text{ Զ}^9 \theta^2, \text{ Զ} = \\
 & \text{քաղցրիտ} \qquad \qquad \qquad \text{մրուամակամ թթուուտ} \\
 & = \text{Բ}^5 \text{ Զ}^5 (\text{Բ}^5 \text{ Զ}^9 \theta^2)^3 + 3 \text{ Զ}^2 \theta \\
 & \text{եռամրուամիտ} \qquad \qquad \qquad \text{չուր} \\
 & \text{(trivaléchine)}
 \end{aligned}$$

Փոխադարձաբար, պարարտ մարմինք կը կրկնաբաշխին
թթուուտներու և քաղցրըտի, իւրացնելով իրենց ջոյ
երեք մասնըկանց տարերքն: Այս գործողութիւնը որ
կըլլայ կամ կալաքարաց ձեռօք և կամ վերաջնեռուցեալ
ջոյ գործորեօք՝ կը սուրի օճառացումն, վասն զի օճառի
պատրաստութեամ միջոց կը կատարուի:

Քաղցրիտը կը ստանանք պարզ սպեկանույ (emplâtre simple) պատրաստութեամբ. յետինս կապարոյ օճառ
մ'է որ կ'ենէ եռացնելով ձէթը և ճարպը ջրով և քար-
մարցանկով (litharge). կապարոյ օճառը կը բաժնուի,
և վրան լուզացող ջրոյն մէջ քաղցրիտը լուծուած է: Կ'ա-
ման այս ջուրը, կ'անցունեն մէջն ծծմբեալ ջրածնի հո-
սանք մը որ մնացած կապարը կը վայրահոսէ. յետոյ կը
գոլորշիացնեն այս հեղուկը մարեմայ բաղանեաց վրայ.
կը մնայ քաղցրիտը՝ անգոյն և օշարակային հեղանիւթոյ
մի կերպարանօք:

կը ստանան դարձեալ առաստութեամբ՝ օճառի և ճար-
պական մոմերու պատրաստութենէն:

106. Օճառք. — Օճառք կատանուրդք են կալոյ կամ
նատրի աղերուն՝ պարարտ թթուուտներու Բ. Բ² Զ² թ²
ընդհանուր նշանացոյցն ունեցող շարքին հետ, ինչպէս են
թթուուտքն ճարպական Բ. Բ¹⁸ Զ⁵⁶ թ², արմաւական

Բնե¹⁶ ջ⁵² թ², մարգարական Բնե¹⁷ ջ⁵⁴ թ², և նուազ ջրածնեալ թթուուտի մը՝ որ է իւղական (οιέique) Բնե¹⁸ ջ⁵⁴ թ²: Կը պատրաստեն օճառները՝ եռացնելով կալով կամ նատրիւ ստորին կարգի ձէթերը, սօսամի և արաքդի իւղերն՝ որք խառնուրդք են քաղցրըտի եթերաց: Գործողութիւնը ըմնալէ վերջ զանգուածոյն մէջ կ'աւելցընեն աղի ջուր. օճառը ասոր մէջ անլուժական ըլլալով ջրոյն երեսը կը բարձրանայ. իսկ ջուրը քաղցրիտ կը բովանդակէ՛ի լուծման: Ոճառը աղէկ եփելէ վերջ զանցուածը պաղելով կը պնդանայ:

Կարծր օճառաց բաղադրութեան մէջ նատրոն կը մըտնէ, իսկ կակուղ օճառներուն՝ կալիոն. և որովհետև անդուս նատրոնը միշտ խառն է քիչ մը երկաթոյ թթուուուկիւ, այնու կը ձեւանայ նաև ոչինչ քանակութեամբ երկաթային օճառ, որ սովորական օճառաց զանգուածին հճեայ երեսյթ մի կու տայ:

107. ծարպակամբ մուլք (Bougies stéariques). — Ճարպական մոմերու պատրաստութեան արուեստին մէջ կը ջանան այնպէս մը կրկնարաշխել պարարտ մարմինները, որ հաստատուն պարարտ թթուուտըն ազատ մընան. վասն զի ճարպական մոմերը խառնուրդք են ճարպական, արմաւական և մարգարական թթուուտներու: Այս նպատակաւ կ'օճառացնեն պարարտ մարմինքը ջրով և կրով. կը ձեւանայ կրային օճառ մը զոր կը ժողվեն՝ և ծծմբական թթուուտիւ կը տարրարաշխեն՝ ի ծծմբատ կրածնի և պարարտ թթուուտներու: Զանգուածը կը ճմէն՝ ի ցրուութեան քաժնելու համար իւղական թթուուտը որ հեղուկ է՝ ի սովորական բարեխառնութեան և չի գար ճարպական մոմերու արուեստին. Յետոյ կը ճնշեն նոյն զանգուածը մետաղեայ լեռուցեալ տախտակաց մէջ, որով հաստատուն պարարտ թթուուտները կը հալին և այնպէսով ծծմբատ կրածնէ կը բաժնուին: Այսն հեղուկը կը լեցնեն յատուկ կաղապարաց մէջ և կ'ունենան ճարչպական մոմեր:

Թէ՛ օճառաց և թէ ճարպական մոմերու պատրաստութենէն ելած մայր ջրերն, կը բովանդակեն իրենց մէջ առատ քաղցրիտ՝ զոր կը բաժնեն գոլորշիացմամբ:

108. Զուտ քաղցրիտը օշարակային հեղանիւթ մ'է,

շաքարահամ, անհոտ և անգոյն: Բացօթեայ մնալով խոնաւութիւն կը ծծէ. ամենայն համեմատութեամբ կը լուծուի ջրոյ և ալքոհոլի մէջ, անլուծական է յեթեր և 'ի քլորակերպ: Կը լուծուին իւր մէջ կալի, նատր, խոնաւալոյծ աղեր, կալոյ, նատրի, պղընձոյ ծծմբատքն, արծաթոյ բորսկատը, նատրի բնածկատը, և այլն:

Թորեցմամբ կու տայ կիղաննելի կաղեր, խանձրահոտ (empryreumatique) արգիններ, և աշաց վկասող գրգռիչ մարմին մը որ կ'ըսուի դասեխա (acroleine):

Բոլորովին զուտ և չոր եղած միջոց՝ ցրտութեամբ կը պնդանայ և բիւրեղեայ զանգուածոյ մի կը փոխարկէ՛ հալական 17—18° մէջ:

Թթուուկիչ մարմինք բառնալով իրմէ կրկին հիւլէք ջըրածնի՝ կը փոխանակեն հիւլէ մի թթուուածնի և այսպէտով միադկաղմային թթուուտ մի կը ձեւանայ որ է թթուուտ քաղցրիտական (glycériqué) Բնէ ջէ թ⁴, և է օշարակային հեղանիւթ մը որ բիւրեղանալի աղեր կու տայ.

$$\text{Բ}^3 \text{ Ջ}^8 \text{ Թ}^3 + \text{ Թ}^2 = \text{ Բ}^3 \text{ Ջ}^6 \text{ Թ}^4 + \text{ Ջ}^2 \text{ Թ}$$

$$\text{քաղցրիտ} \quad \text{թթուուածիմ} \quad \text{քաղցրիտական} \quad \text{չուր}$$

$$\text{թթուուտ}$$

109. Եթերը քաղցրրայի. — Թթուուտք՝ քաղցրըտի վրայ աղելով կու տան եթերներ որք կ'ըսուին եթերը քաղցրըտի կամ քաղցրիտատիպ (glycéride). և որովհետև քաղցրիտը եռահիւլէտական ալքոհօլ մ'է, կը կաղմէ երեք տեսակ եթերներ. այսպէս.

Ա. Մասնիկ մի քաղցրըտի և մասնիկ մի միահիւլէտական թթուուտի, կու տան առաջնական քաղցրիտատիպ մը և չուր.

$$\text{Բ}^3 \text{ Ջ}^5 (\text{Թ} \cdot \text{Ջ})^3 + \text{ Բ}^2 \text{ Ջ}^3 \text{ Թ}^2, \text{ Ջ} =$$

$$\text{քաղցրիտ} \quad \text{քացախական} \quad \text{թթուուտ}$$

$$= \text{ Բ}^3 \text{ } \begin{cases} \text{ Ջ}^5 \\ (\text{Թ} \cdot \text{Ջ})^2 \end{cases} \text{ Բ}^3 \text{ Ջ}^3 \text{ Թ}^2 + \text{ Ջ}^2 \text{ Թ}$$

$$\text{միաքացախիտ} \quad \text{չուր}$$

Բ. Մասնիկ մի քաղցրըտի և կրկին մասնըկունք թթուռուտի, կու տան երկորդական քաղցրիտատիպ մը և կըրկին մասնըկունք ջրոյ.

$$\begin{array}{ccc} \text{Բն}^3 \mathfrak{Q}^5 (\beta \cdot \mathfrak{Q})^3 & + & 2 \text{ Բն}^2 \mathfrak{Q}^3 \beta^2, \mathfrak{Q} \\ \text{քաղցրիտ} & & \text{քացախական} \\ & & \text{թթուռուտ} \end{array} =$$

$$\begin{array}{ccc} = & \text{Բն}^3 \mathfrak{Q}^5 \left\{ \begin{array}{c} (\text{Բն}^2 \mathfrak{Q}^3 \beta^2)^2 \\ \beta \cdot \mathfrak{Q} \end{array} \right\} & + & 2 \mathfrak{Q}^2 \beta \\ \text{եռկքացախիտ} & & \text{չուր} \end{array}$$

Գ. Մասնիկ մի քաղցրըտի և երեք մասնըկունք թթուռուտի, կու տան երրորդական քաղցրիտատիպ մը և երեք մասնըկունք ջրոյ.

$$\begin{array}{ccc} \text{Բն}^3 \mathfrak{Q}^5 (\beta \cdot \mathfrak{Q})^3 & + & 3 \text{ Բն}^2 \mathfrak{Q}^3 \beta^2, \mathfrak{Q} \\ \text{քաղցրիտ} & & \text{քացախական} \\ & & \text{թթուռուտ} \end{array} =$$

$$\begin{array}{ccc} = & \text{Բն}^3 \mathfrak{Q}^5 (\text{Բն}^2 \mathfrak{Q}^3 \beta^2)^3 & + & 3 \mathfrak{Q}^2 \beta \\ \text{եռաքացախիտ} & & \text{չուր} \end{array}$$

Քաղցրիտատիպը կրնանք ներկայացնել նաև իր թթուռուտային արմատոց փոխանակութենէն յառաջ եկող մարմիններ՝ քաղցրըտի մէջ գտնուող ջրածնոյն 1, 2 կամ 3 հիւլէ իցը տեղ փոխանակելով.

$$\begin{array}{ccccc} \text{Բն}^3 \mathfrak{Q}^5 (\beta \cdot \mathfrak{Q})^3 & \text{Բն}^3 \mathfrak{Q}^5 \left\{ \begin{array}{c} \beta (\text{Բն}^2 \mathfrak{Q}^3 \beta) \\ \beta (\text{Բն}^2 \mathfrak{Q}^3 \beta) \\ \beta (\text{Բն}^2 \mathfrak{Q}^3 \beta) \end{array} \right\} & = & \text{Բն}^2 \mathfrak{Q}^5 (\text{Բն}^2 \mathfrak{Q}^3 \beta^2)^3 \\ \text{քաղցրիտ} & & \text{եռաքացախիտ} & & \end{array}$$

Քաղցրիտատիպը կը պատրաստուին՝ աղդել տալով թթուռուտները քաղցրըտի վրայ կամ՝ ի սովորական բարեխառնութեան փակ անօթոց մէջ։ Կը ձևանան առաջնական, երկորդական կամ երրորդական քաղցրիտատիպներ՝ ըստ բարե-

խառնութեան, ըստ երկարութեան հակազդեցութեան և ըստ համեմատութեանց թթուռուտին և քաղցրըտի։

140. Պարարտ մարմինք. — Բնական պարարտ մարմինք խառնուրդք են երրորդական քաղցրիտատիպ (glycéride) մարմնոց որք զանազան համեմատութեամբ անոնց մէջ կը մտնէն. այս քաղցրիտատիպ մարմնոց գլխաւորներն են եռամարզիտ (tristéarine), եռարմաւիտ (trimaltitine), եռամարզարիտ (trimargarine) և եռակեղիտ (trioléine). Ունին շատ մը հասարակաց յատկութիւններ, ինչպէս իրենց անլուծականութիւնն ՚ի ջուր, հալականութիւնն, երկութիւնն, անհամութիւնը, թթվերը բժաւորենին, և այլն։ Ամէնքն ալ կը կրկնարաշին քաղցրըտի և պարարտ թթուռուտներու՝ աղդեցւթեամբ կալաքարոց։

Այս պարարտ մարմնոց մէջ գտնուող ճարպիտը, մարդարիտը և արմատիտը՝ հաստատոն մարմիններ են ՚ի սովորական բարեխառնութեան. իսկ իւղիտը հեղուկ է։ Առաջնք՝ ճարպերու մէջ առատ կը գտնուին, իսկ իւղիտը իւղերու մէջ։

141. Զիթապտղոյ, շողգամի, կաղինի, և այլ քանի մի տեսակ մարմնոց իւղերն երկար ժամանակ բացօթեայ մնալով կծու համ մի կ'առնուն և անախորժ հոտ մի կը ստանան, բայց չեն պնդանար. անոր համար ասոնք կ'ըսուին պարարտ իւղի կամոյ չորանուաք (non siccatives). ձէթը այս տեսակ իւղոց նախատիպն է, զոր կը պատրաստեն՝ ճամելով հասունացեալ ձիթապտուղները։ Դեղին կանաչագոյն է, անոշահամ, ախորժելի և անհոտ։


Զրոյէ քանի մի աստիճան վար կը պնդանայ. բացօթեայ մնալով կը ծթուի։

Մինչդեռ կան որին իւղեր, ինչպէս կոտուի, հատերու, կանեփի, և այլն, որք մնալով բացօթեայ կը պնդանան և կը փոխարկին թափանցիկ, դեղնագոյն և ձգտական զանգուածոյ մը. այս տեսակ իւղերն ալ կ'ըսուին չորանուաք (siccatives), Գործածականք են ՚ի պատրաստութեան նարակաց և իւղային գումոց։

Իւղոց կրած այլափոխութիւնը օդոյ առնել իրենց թթուռածին ծծելէն է, որով կը սկսին բնածխական կաղարձկել։

Յանօթէ է ամենուն բնական պարարտ մարմնոց գործածութիւնն՝ թէ արուեստից և թէ տնական պիտույքից մէջ:

112. Բորակաքաղցրիտ (Nitroglycérine). $\text{Բ}^{\text{n}}\text{3} \text{Q}^{\text{5}} \text{B}^{\text{2}} \text{O}^{\text{9}}$ = $\text{Բ}^{\text{n}}\text{5} \text{Q}^{\text{5}} \text{B}^{\text{2}} (\text{Բ} \text{B}^{\text{2}})^{\text{5}}$. — Սովորո իտալացին գտաւ այս մարմինը: Կը պատրաստեն՝ աւելցնելով ծծմբական և բորակական թթուուտից պաղ խառնրդեանը մէջ օշարակային քաղցրիտը (glycérine). յետինս կը լուծուի ամբողջապէս, և լուծումը պաղ ջրոյ մէջ լեցնելով՝ բորակաքաղցրիտը կը բաժնուի և կը հանդիլ անօթոյն յատակը: Գուրը կ'աման, կը լուսն բորակաքաղցրիտը՝ մինչև որ լուացման ձառայող ջուրն այլ ևս թթուութիւն չունենայ.



Բորակաքաղցրիտը անգոյն գեղնորակ իւղ մ'է ջրէ աւելի ծանր, սաստիկ թունաւոր, անլուծական ՚ի ջուր, և լուծական յալքոն և յեթեր: Զերմութեամբ կը տարրաբաշխ և կը պայթի. բախմամբ՝ զօրաւոր կերպով կ'ոռոտայ, և նոյն իսկ եթէ կաթիլ մի լեցնենք սալի վրայ և ուռան հարուած մի տանք՝ հրացանի հարուածին նման ձայն արձելով: կ'եղանի: Եթէ աղեկ լուացուած շըլլալով գեռ բովանդակէ իւր մէջ բորակական թթուուտ կամ բորակային գուրովիք՝ ինքն իրեն կը պայթի: Այսօրս զատիկայ արուեստի կը պատրաստեն, և որովհետեւ վտանգաւոր է իւր գործածութիւնը և յաճախ աղիստալի արկածից պատճու, անօր համար կը խառնեն զայն գայլակի, պաղեղի (alumine) հետ, և այս փիրուն խառնրդով կը շինեն ուժանակելը (dynamite):

113. Քաղցրիտը բաց ՚ի բորակաքաղցրըտի պատրաստութենէ, կը ձառայէ միանգամայն քանի մի նիւթերը խոնաւ պահելու, ինչպէս կաւերու տեսակները, կաշիները, և այլն: ՚ի բժշկութեան գործածական է իբր ամռքիչ:

և չորացուցիչ վիրաց, և ունի ուրիշ զանազան գործածութիւնք:

114. Խղական թթուուտ (Acide oléique) = $\text{Բ}^{\text{n}}\text{18} \text{Q}^{\text{5}} \text{B}^{\text{2}}$. — Երեք մասնըկունք իւղային թթուուտի միանալով մասնիկ մի քաղցրըտի հետ՝ եղծմամբ երեք մասնկանց ջրոյ կուտան քաղցրըտին եռախւղիտը (trioléine) կամ եռախւղական եթերը $\text{Բ}^{\text{n}}\text{3} \text{Q}^{\text{5}} (\text{Բ}^{\text{n}}\text{18} \text{Q}^{\text{5}} \text{B}^{\text{2}})^{\text{5}}$: Այս եռախւղիտը կենդանական ճարպերու հեղուկ մասն է, և ոչ չորանուու (non siccative) ըսուած պարարտ իւղոց մեծամասնութիւնը կը կաղմէ, ինչպէս ձիթոյ, նշոյ իւղոյն, և այլն:

Իւղերը օճառացնելով՝ կը ստանանք իւղական թթուուտը, որ զուտ եղած միջոց հեղուկ մարմին մ'է. Կօր կը փոխարկուի հաստատուն մարմնոց և 140ի կը հալի: Անլուծական է ՚ի ջուր, լուծական յալքոն և յեթեր: Գործածական է օճառաց պատրաստութեան արուեստին մէջ:

115. Խնձորական թթուուտ (Acide malique) = $\text{Բ}^{\text{n}}\text{4} \text{Q}^{\text{6}} \text{B}^{\text{3}}$. — Այս թթուուտը որ կը գտնուի բազմաթիւ բուսոց մէջ, Շէէլէ զայն ինձորի ծուծէն հանեց: Կը պատրաստեն սոլորաբար սինի (sorbier) ծուծէն, զորոնք կը ժողվեն յառաջ քան զիրենց հաստանալը:

Կը բաղկանայ ասզաձև խոնաւալոյծ բիւրեղներէ խումբ խումբ միացած, որք հալականք են՝ ՚ի 100%: Իւր ջրային լուծումը սաստիկ թթուահամէ: ՚ի 150% կը սկըսի անջրատիլ, և 175–180% աց մէջ կը կորանցունէ մասնիկ մի ջրոյ և կը փոխարկի երկու զուգամասն (isomère) թթուուտներու $\text{Բ}^{\text{n}}\text{4} \text{Q}^{\text{4}} \text{B}^{\text{4}}$, որք են ձիազիական (maléique) և անձիուտական (fumarique):

116. Գիմենըրական թթուուտ (Acide tartrique) = $\text{Բ}^{\text{n}}\text{4} \text{Q}^{\text{6}} \text{B}^{\text{6}}$. — Այս կարեօր թթուուտս գտաւ Շէէլէ գինեաց տակառներուն յատակը հանգչող գինեմըրոցն մէջ: Զտուած գինեմըրէ (tartre) կը հանեն՝ որ է թթուուտ գինեմըրատ կալոյ:

Կը բաղկանայ խոչըր հատուածակողմեան խոտոր տարանկունածէ բիւրեղներէ, որք անայլայլ են օդոյ առջև, լուծականք ՚ի ջուր և յալքոն, անլուծականք յեթեր. 170–180% աց մէջ կը հալին, և աւելի բարձր չերմութեամբ կ'եղանին:

117. Գինեմրրատք. — Գինեմրրական թթուուտը երկաղաղմային թթուուտ մ'ըլլալով՝ կու տայ թթուուտ և չշղոփ աղեր.

$$\text{Բ}^4 \text{Ω}^4 \theta^6 \left\{ \begin{array}{c} \Omega \\ \Omega \end{array} \right\} + \text{Բ}^4 \text{Ω}^4 \theta^6 \left\{ \begin{array}{c} \text{Ն}^m \\ \Omega \end{array} \right\} + \text{Բ}^4 \text{Ω}^4 \theta^6 \text{Ն}^m {}^2$$

գինեմրրական թթուուտ գինեմրրատ չէզոք գինեմրրատ
թթուուտ մատրի բատ մատրի

Թթուուտ գինեմրրատ կալոյ կամ սեր գինեմրրոյ (crème de tartre) $\text{Բ}^4 \text{Ω}^4 \theta^6 \Omega$ կը ըսուածն գինեաց տակառներուն յատակը կը հանդի, զոր կը զտնի բիւրեղացմամբ: Կը բաղկանայ հատուածակողմեան ուղիղ տարանկիւնածերիւրեղներէ, որք կարծր են և թթուահամ. ջրոյ մէջ քիչ լուծական և անլուծական յալքոնէ:

Կալոյ չէզոք գինեմրրատը $\text{Բ}^4 \text{Ω}^4 \theta^6 \Omega {}^2$ կը պատրաստեն՝ չէղաքացնելով յագեալ և եռացեալ լուծումը սերին գինեմրրոյն՝ բնածխատ կայւով: Ջրոյ մէջ շատ լուծական է:

Գինեմրրոյ սերը գործածական է՝ի բժշկութեան իբր թեթև մաքրողական:

Կան նաև ուրիշ գինեմրրատներ, ինչպէս լրիին զինեմրրատ կալոյ և նատրի $\text{Բ}^4 \text{Ω}^4 \theta^6 \Omega {}^m + 4 \text{Ω}^2 \theta$, չեղոք գինեմրրատ նատրի $\text{Բ}^4 \text{Ω}^4 \theta^6 \text{Ն}^m {}^2 + 4 \text{Ω}^2 \theta$, որք նոյնպէս գործածական են՝ ի բժշկութեան իբր թեթև մաքրողական:

118. Ործացուցիչը (Émétiques). — Ործացուցիչը յատուկ կազմակերպութիւն ունեցող գինեմրրատներ են. կը բաղկանան չէզոք գինեմրրատներէ, որոց միջնի հիւկէ մի ջրածինն փոխանակուած է մետաղի մը միահիւկէական խումբէն: Այսպէս, երբ եռացնենք ձարրոյ թթուուկն ՚Ծա² θ⁵ գինեմրրոյ սերին հետ, կ'ունենանք ձարրոյ ործացուցիչը կամ սոլորական ործացուցիչը ըսուածն.

$$2 \left((\text{Բ}^4 \text{Ω}^4 \theta^6 \left\{ \begin{array}{c} \text{Կ} \text{L} \\ \Omega \end{array} \right\}) + \text{Ծ} \text{ա} \text{մ} {}^2 \theta^3 \right) =$$

Թթուուտ գինեմրրատ կալոյ թթուուտ ձարրոյ

$$= 2 \left(\text{Բ}^4 \text{Ω}^4 \theta^6 \left\{ \begin{array}{c} \text{Կ} \text{L} \\ \text{Ծ} \text{ա} \text{մ} \theta \end{array} \right\} \right) + \text{Ω}^2 \theta^3$$

ործացուցիչը
զուր

որոյ մէջ Ծա թթ ծարրածին խումբը կը փոխարկէ հիւկէ մի ջրածնի տեղ, Սովորական ործացուցիչը է կրկին գինեմրրատ ծարրածին (antimonyle) և կալոյ $\text{Բ}^6 \text{Ω}^4 \theta^6 \Omega {}^2$ (Ծա թթ) + $\text{Ω}^2 \theta$, որ կը բիւրեղանայ ութանիստ տարանկիւնածե, և կը բովանդակէ իւր մէջ մասնիկ մի ջուր բիւրեղացման: մետաղական և անախսործ համ մ'ունի, լուծական է՝ի ջուր, անլուծական յալքոնէ: Արտաքուստ զմորթ կը գրգոէ. ներքուստ գործածական է՝ի բժշկութեան իբր փոխացուցիչ, և եթէ շատ քանակութեամբ մատակարարուելու ըլլայ, կ'ազդէ իբր թոյն:

119. Կիտրական թթուուտ (Acide citrique) = $\text{Բ}^6 \text{Ω}^4 \theta^6 \theta + \text{Ω}^2 \theta$. — Կիտրական թթուուտը չէզոքացուց Շէէլէ լիմնի ծուծէն. կը գտնուի յազատ վիճակի՝ հաղարք (grasse), ժալսի (framboise), ելակի, կեռասի և նարնջի մէջ: Պատրաստելու համար կը թողուն լիմնի ծուծը ինքն իրեն որ ակսի խմորիլ. նոյն միջոց իւր մէջառ կախ գտնուող հուզացին նիւթերը յատակը կը հանդին: կը լուսան անլուծական կիտրատ կրածնին, և ջրախառն ծծմբական թթուուտաի կը տարրաբաշխէն: Մզմամբ կը բաժնուի լուծակնէն ծծմբատ կրածնին, և հեղուկը դոլորշացնելով կ'ելնէ թթուուտ կիտրական:

կը բաղկանայ խոշոր հատուածակիողմեան բիւրեղներէ որք մասնիկ մի ջուր կը բովանդակեն, զոր կը կորսնցունեն 400⁰ բարեխառնութեամբ: Լուծական է՝ի ջուր, յալքոնէ և յեթեր: Գործածական է՝ի նկարչութեան և մանաւանդ՝ ի բժշկութեան:

120. Միզական թթուուտ (Acide urique) $\text{Բ}^6 \text{Ω}^4 \text{Բ}^4 \theta^5 + 2 \text{Ω}^2 \theta$. — Միզական թթուուտը կամ յազատ վիճակի և կամ բաղկացեալ ընդ նատրի, կալոյ, կրոյ, քիչ անդամ նաև ընդ աւշակի՝ կը գտնուի միզի մէջ, միզային մրուրներու (calculs urinaires) մէջ, օձերու, թունոց և միշտաներու կղկղանացը մէջ: 100 դրամ մէզը կը բովանդակէ յինքեան 0^{o,r}, 598 թթուուտ միզական: Քանի մի

Հիւանդութեանց միջոց միզական թթուուտի քանակն կ'առաւելու, և կան հիւանդութիւններ ալ որոց միջոց կը նուազի:

Այս թթուուտս Շէէլէ գտաւ. կը պատրաստեն զայն պօա օձին կղկղանքէն և կամ գուանոյէ (guano):

Կը բաղկանայ՝ փալֆլուն թիթղանց կերպարանքն ունեցող բիւրեղներէ՝ որք անհոտ են և անհամ: Գրեթէ անլուծական է՝ ի չուր. բոլորովին անլուծական յալքոհլ և յեթեր, լուծական կալիոնի և նատրոնի մէջ: Քլորանցածնական թթուուտը կը վայրահոսէ զայն իւր կալաքարային լուծումներէն՝ դոնդողային թանձր նիւթոյ մի կերպարանօք:

121. Սրմիտ (Caféine) = Բ⁶⁸ Զ¹⁰ Թ² Բ² = Բ⁶⁵ Զ³ Թ² (Բ⁶⁵ Զ⁵)⁵. — Սրմիտ՝ կանաչ սուրճի (café) մլչ գըտնուող բիւրեղանալի սկզբունքն է. նոյն թէյիսի (théine) հետ որ թէյէն կ'ենէ: Կը բաղկանայ սպիտակ մետաքսային ասղածն գեղեցիկ բիւրեղներէ: Կը գործէ իր տըրկար աղկազմ (base) մը և կու տայ բիւրեղացեալ աղեր, գործածական է անգարի (migraine) և սրտի հիւանդութեանց դէմ:

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՎԵՑԻՒԱԾԿԱԾՆ ԱԿՑՈՀԼՔ. — ԶԲԱՏՔ ԲՆԱԾԽՈՅՑ

Քաղպէմիտ. — Քաղցրամիւթք. Քաղցրամիւթ. — Շաքարամիւթք. Շաքար եղեգամ, շաքար կաթիմ. — Օսլայացեալ նիւթք. Օսլայ — Սչիտ. — Խորշամիւթ:

122. Վեցհիւլէական ալքոհօլք. — Վեցհիւլէական ալքոհօլք կը բովանդակեն վեց խումբ թ. Զ. կուտան չէղոք եթերներ բաղակցութեամի իրենց մասնըկանցը՝ միաղկազմային թթուուտի մը 6 մասնըկանցը հետ, և եղծմամբ (élimination) 6 մասնըկանց լրոյ: Երկու ալքոհօլք միայն կան

վեցհիւլէականք՝ Բ⁶⁶ Զ¹⁴ Թ⁶ նշանացուցիւ. ասոնք են գաղպէնիտ (mannite) և անուշիտ (dulcite):

123. Գաղպէնիտ (Mannite) = Բ⁶⁶ Զ¹⁴ Թ⁶. — Զասիկայ գտաւ Բրուս 1806ին: Կը գտնուի բազմաթիւ բուսոց մէջ, և մանաւանդ գաղպէնի (mannite) մէջ: Գաղպէնը թանձր և անուշահամ նիւթ մ'է որ կը ծորէ քանի մի ծառերէ, մանաւանդ հացի (frêne) ծառէն՝ երբ կեղեւ ճեղքելու ըլլանք:

Պատրաստելու համար կը հալեցնեն գաղպէնը ջրոյ մէջ, յաւելլով վրան հաւկըթի ծեծուած սպիտակուցն. կ'եռացնեն քանի մի վայրկեան և լուծումը բրդէ անցնելով կը մղեն: Ճեղուկը պաղելով կը պնդանայ. կը ճմէն, մացորդը պաղ ջրոյ մէջ կը լուծեն, յետոյ նորէն կը ճըմըլեն: Գործողութիւնը աւարտելէ վերջ գեռ գունաւորեալ գաղպէնիտը կրկին անգամ կը լուծեն քիչ քանակութեամբ եռացեալ ջրոյ մէջ՝ որ խառն ըլլայ կենդանական ածխով. կը մղեն և հեղանիւթը կը բարկցնեն. զուտ գաղպէնիտը կը բիւրեղանայ՝ հատուածակողմեան ուղիղ տարանկիւնածե:

Լուծական է եռացեալ ջրոյ և եռացեալ ալքոհօլք մէջ, անլուծական յեթեր. 1660ի կը հալի և անգոյն հեղանիւթ մի կը դառնայ. 2000ի կը կորսնցունէ իւր մի մասին ջուրը և կու տայ անջուր մարմին մը Բ⁶⁶ Զ¹² Թ⁵ նշանացուցիւ:

124. Քաղցրամիւթ (Glucoses). — Ատենօք քաղցրամիւթք, շաքարք, օսլայացեալ (amylacée) նիւթք՝ ընդհանուր անուամբ յրատք բնածինյ կ'ըսուեին. վասն զի իրենց մէջ բովանդակած լրածնի հիւլէից թիւլ՝ թթուածնի կրկինն է. ունին զանազան մասնըկունք լրոյ՝ որք միացած են բնածինյ բազմաթիւ հիւլէիցը հետ. այսպէս են, քաղցրանիւթ Բ⁶⁶ Զ¹² Թ⁶, շաքար եղեգան Բ⁶⁶ Զ²² Թ¹¹, և այլն:

Այս մարմիններս կամ ալքոհօլիտքն են վեցհիւլէական ալքոհօլներու, և կամ խտացման արդինքն նոյն ալքոհօլիտաց. սոյն պատճառաւ կը գործեն իր բազմակիւլէական ալքոհօլներ և յառաջ կը բերեն եթերներ՝ նման եթերաց քաղպէնիտի:

Քաղցրանիւթք ըսելով կը հասկնանք քանի մի շաքա-

րեալ գոյացութիւններ՝ Բմ⁶ Զ¹² թ⁶ նախացուցիւ՝ որք ունին շատ մը հասարակաց յատկութիւններ։ Երկայութեամբ լորձին գարեջրոց (levure de bière)՝ կ'ենթարկին իօկոյն ալքոհօլական խմորման։ Կալաքարք կ'այլափոխեն զանոնք՝ ՚ի սովորական բարեխառնութեան, և մանաւանդ՝ ՚ի 1000ի.

125. Սովորական բաղցրաթիւթ = Բմ⁶ Զ¹² թ⁶. — Այս կարևորագոյն մարմինս՝ կը կազմէ մեղեր հաստատուն և բիւրեղանալի մասը. կը գտնուի շատ մը չոր պտղոց մէջ որոց երեսին վրայ կը հանգչի սպիտակ ծաղկաւէտութեանց կերպարանօք՝ ծանօթ ամենուն։ Կը գտնուի միանգամայն շաքարախտի (diabète) հիւանդութիւնն ունեցողաց միզին մէջ։

Կրնանք պատրաստել արուեստիւ՝ եթէ աղգել տանք օսլայի կամ խորշանիւթոյ (cellulose) վրայ՝ ջրախառն թթուուտ ծծմբական։ Սակայն առ հասարակ հետևեալ եղանակաւ կը պատրաստուի. կը ընուն փայտեայ մեծ կակ անօթի մի մէջ ջրախառն թթուուտ ծծմբական և կը տաքցունեն մինչև որ եռայ. եռացած միջոց կ'աւելցնեն վրան քիչ քիչ ջրախառն փեկուլ (fécule), և 30—40 վայրկենից մէջ երբ շաքարացումը աւարտի՝ կը յագեցնեն հեղանիւթոյն ծծմբական թթուուտը փոշիացեալ կճիւ։ Կը բաժնեն հեղանիւթէն զծծմբատ կրածնին, կը բարկցընեն զայն 40—41° Պօմէի, և կը թողուն որ բիւրեղանայ։ Սպիտակ դեղնագոյն և դիմահար զանգուած մ'է։ Պըտկանց կերպարանօք կը բիւրեղանայ՝ որք կը բովանդակեն իրենց մէջ մասնիկ մի չուրքիւրեղացման Բմ⁶ Զ¹² թ⁶+ Զ² թ⁶ բացութեայ՝ անայլայլ կը մնայ. մարեմայ բաղանեաց վրայ տաքցունելով՝ կը հալի և ՚ի 1000ի կը կորսնցունէ իւր ջուրը։


Քաղցրանիւթը 170 բարեխառնութեամբ կը լուծուի ջրոյ մէջ. եղեգան շաքարէն 3 անգամ նուազ լուծական է. և եթէ այս մարմնոց լուծումներն բարկցունելով երկուքն ևս մի և նոյն թանձրութեան հասցունենք, կը տեսնենք որ քաղցրանիւթոյն անուշութիւնը շաքարի եղեգան անուշութենէն 3 անգամնուազ է։

Եռացնելով երկար ատեն համբային ջրախառն թթու-

ուտներու հետ՝ կ'այլափոխի և կը փոխարկի սեաւ և անկերպարան գոյացութեանց։

126. Որովհետև շաքարախտի (diabète) հիւանդութեան մէջ կարեռ է միշտ միզի մէջ գտնուող քաղցրանիւթոյն քանակը գիտնալ, այս նպատակաւ կը գործածեն հետևեալ գործին։

Նախ պէտք է գիտնալ որ մասնիկ մի քաղցրանիւթոյ Բմ⁶ Զ¹² թ⁶ կու տայ ալքոհօլական խմորմամբ կրկին մասնը կունք բնածխական թթուուտի Բմ². հիւանդար եթէ գիտնանք այս ինչ չափով խմորման ենթարկեալ մի-



Զև 24. Կռողութիւն քաղցրանիւթոյ խմորմամբ

զի մէջ բովանդակուած բնածխական թթուուտի քանակը, պիտի գտնենք նաև նոյն միզին մէջ բովանդակուող քաղցրանիւթոյն համեմատութիւնը. Պործին կը բաղկանայ հիմէնէ (matras) մը որ երկրերան խցանիւ փակուած է (Զև 24). Խցանին բերնին միզոյն մէջ զագաթնային խողովակ մի կ'ընկումի, իսկ միւսը Ա ձեռով վակի մը հետ կը հաղորդակցի՝ որ լի է ծծմբական թթուուտի մէջ թաթիւուած չեղաքարամբք. Պործողութիւնը կատարելու համար կը ընուն ապակեայ փամփշին մէջ այսչափ ինչ մէզ, և քիչ մ'ալ լորձն գարեջրոյ. կը կշռեն փակեն գագաթնային խողովակը, և 0

ձեռվ խողովակին կ'ագուցանեն ուրիշ հորիզոնական խոշովակ մը՝ լի քլորովկիւ կրածնի՝ որ կ'արգելու խոնաւ օդոյ մուտքը գործոյն մէջ: Այսողութիւնը կը թողուն մէկ երկու օր չերմտեղ մը՝ մինչև որ բնածխական թթուուտի ձեւանալն դադրի. կը բանան յետոյ գագաթնային խողովակը, թոյլ կու տան որ բնածխական թթուուտը փախչի, կը հանեն քլորովկ կրածնի խողովակը, և նորէն կը կռեն փամփուշտը: Կշոց տարբերութիւնը՝ ձեւացած բնածխական թթուուտի քանակն է:

127. Շաքարամիւթք (Saccharoses) կամ շաքարք. — Շաքարամիւթք՝ կամ՝ յատուկ անուամբ շաքարք ըսուածքըն, ունին լընդհանուր նշանացոյց Բն¹² Զ²² Թ³¹. կը բաղկանան շաքարամիւթոյ երկու զուգամասունք մասնիկներէն՝ որոցմէ եղծուած է մասնիկ մի ջրոյ:

Ուղղակի խմորման չեն ենթարկուիր, սակայն ազդեցութեամբ ուրիշ խմորի մը. որ կ'ենէ գարեջրոյ լորձէն, կը կրինաբաշխին 'ի քաղցրանիւթու, որք յետոյ կ'ենթարկուին ալբոնդական խմորման:

128. Շաքար եղեցամ կամ մակնիլեղաց. — կը գտնուի շատ տեսակ բուսոց հիւթերուն մէջ, ինչպէս յեղէզն շաքարի, 'ի ճակնդեղս, 'ի շողգամ, անթիւ տեսակ պտուղներու մէջ, և այլն: կը հանեն սովորաբար շաքարի եղեցէն և ճակնդեղներէ: Թարմ եղէզը կը բովանդակէ իւր մէջ գրեթէ իւր կռոյն 18 առ 400 շաքար. իսկ ճակնդեղը 10 առ 100:

Ճակնդեղներէ պատրաստելու համար կը լուան նախ սսոնց արմատները, յետոյ չարգելով զանոնք՝ խիւսոյ մի կը վերածեն, կը լնուն բրդէ պատկերու մէջ և ջրաբաշխական մամլով զօրաւոր կերպով կը ճնշեն: Ելած ծուծը կը լեցնեն գորոշեօք տաքցող ստուար կաթսաներու մէջ, և վրան կ'աւելցնեն կաթն կրոյ: Երբ հեղանիւթոյն բարեխառնութիւնը 95⁰ի կը հասնի, կ'անցունեն զայն կենդանական ածխոյ վրայէն, և ապա դարձեալ գոլորշեօք տաքցող կաթսաներու մէջ գորոշչացնելով կը բարկցունեն: 0շարակին բարեխառնութիւնը երբ 250⁰ի հասնի, կրկին անգամ՝ անցունեն կենդանական ածխուէ, և կը չառնան բոլորովին բարկցունել: Այս յետին գործողութեանը միջոց երբ բարեխառնութիւնը մինչև 42⁰ կը բար-

ձրանայ, կը լեցնեն օշարակը հովահարեալ անօթի մը մէջ և կը թողուն, մինչև որ սկսի մանր բիւրեղներ հանգչեցնել. այն ատեն կը լեցնեն հողակերտ կոնածեւ կաղապարաց մէջ, որոց գագաթան վրայ ծակ մի կայ բայց գոյ է:

կը գնեն այս կոները անօթոց մէջ, և 25⁰ բարեխառնութիւն ունեցող չերմասենեկի մի մէջ կը շարեն՝ ուր կը սկսի բիւրեղացումը: Օշարակը պնդանալէ վերջ կը բանան կաղապարաց ծակերը և կը թողուն որ հեղուկ մացած թանձր մայր ջրերն կաթին անօթոց մէջ: կաղապարաց մէջ պնդացած շաքարը անկատ շաքար (sucré brut) է և պէտք է զայն զտել:

Զտելու համար կը տաքցունեն լուծուած շաքարը կենդանական ածխով և եղան արեամբ. յետինս պնդանալով իրեն կը ձգէ ճեղանիւթոյն միջի օտար գոյացութիւնքը. իսկ կենդանական ածուխը կը ծծէ գունաւորիչ և աղյոին նիւթերը:

Ճիմակուան ժամանակս շաքարի բիւրեղացումը երագելու համար 'ի դատարկութեան կը բարկցունեն զայն և կը բիւրեղացնեն: իսկ կոներու մէջ մացած թանձր մայր ջրերը՝ թաւալական շարժմամբ հոլովուղ մեքենայի մի ձեռօք կը դատարկեն:

Մի և նոյն եղանակաւ կը պատրաստուի եղեգան շաքարը:

Երբ շաքարին լուծումը այնչափ թանձրանայ որ Պօմէկի անօսրաչափին 570⁰ ցուցնէ, թողով ինքն իրեն՝ խոշոր բիւրեղներ կը հանգչեցնէ, որք կ'ըսուին շաքար վանի (sucré candi). ասիկայ խոտոր տարանկիւնածեւ հատուածակողմեան բիւրեղներէ կը բաղկանայ, որք կարծր են, անչուր. 1, 606 խոտութեամբ, անգոյն և անհօտ: իսկ 'ի զանգուածս ստացուած շաքարը կը բաղկանայ փոքրիկ անթափանցիկ բիւրեղաց համախմբութենէն:

129. Շաքարը դիւրաւ կը լուծուի ջրոյ մէջ, և իւր լուծումը բիւրեղացմանէ առաջ օշարակային թանձրութիւն մի կ'առնու: 160⁰ի կը հալի և պաղելով կը փոխարկի յանկերպարան և յապակեայ զանգուած մի: Պահելով զայն 160⁰ բարեխառնութեան մէջ՝ կ'ըլլայ խառնուրդ մի քաղցրանիւթոյ (glucose) և մեղրանիւթանոյ (lèvulosane).

$$\text{Բն}^{12} \text{ջ}^{22} \text{թ}^{11} = \text{Բն}^6 \text{ջ}^{12} \text{թ}^6 + \text{Բն}^6 \text{ջ}^{10} \text{թ}^5$$

շաքար հ.
դեղամ

Մեղրանիւթանը մեղրանիւթոյ (lévulose) անջուրնէ, որ կը պատրաստուի եռացնելով յետինս ջրախառն թթուուտներու հետ։ Աւելի բարձր բարեխառնութեամբ շաքարը կը սենայ և կը փոխարկի 'ի սեամեղը (caramel)։

Շաքարը եռացնելով ջրախառն թթուուտներու հետ, իրեն կը ձգէ մասնիկ մի ջրոյ և կ'ըլլայ խառնուրդ մի քաղցրանիւթոյ՝ որ կ'ըսուի այլափոխեալ շաքար (sucre interverti)։

$$\text{Բն}^{12} \text{ջ}^{22} \text{թ}^{11} + \text{ջ}^2 \text{թ.} = \text{Բն}^6 \text{ջ}^{12} \text{թ}^6 + \text{Բն}^6 \text{ջ}^{12} \text{թ}^5$$

շաքար հ.
դեղամ

Ծծմբական թթուուտը կ'ածխացնէ զայն իսկոյն։ բարկ բորակական թթուուտը կը փոխարկէ զայն 'ի թթուուտ թրթնջական (acide oxalique)։ Վերաթթուուկ մագնանի (peroxyde de mangane) և ծծմբական թթուուտի թթուուկիչ խառնուրդն՝ կ'եղծանէ զշաքար տալով թթուուտ մրջնական։


Գարեջրոյ լորձը՝ կ'ազդէ շաքարի վրայ նման ջրախառն թթուուտից, և կը փոխարկէ զայն 'ի քաղցրանիւթ՝ և 'ի մեղրանիւթ՝ որք ալքոհօլական խմորման կ'ենթարկուին։

Շաքարը կը բաղակցի նաև կալաքարաց հետ։ Կան դաշտան շաքարատք կը սունկի (baryte) և կրածնի։

130. Կաթնամիւթ (Lactose) կամ շաքար կաթիմ = Բն¹² ջ²² թ¹¹ + ջ² թ. — Այս շաքարը լուծուած կը գըտնուի ստնաւորաց կաթին մէջ։ Պատրաստելու համար կը գուլորժիացնեն շիճը (petit-lait), և երած անզուտ կաթնանիւթը կը զտեն բիւրեղացմամբ, լուծելով եռացեալ ջրոյ մէջ խառնելով քիչ մը կենդանական ածուխ։ Կաթնանիւթը եղեգան շաքարի բաղադրութիւնն ունի, այս տարբերութեամբ որ կը բովանդակէ իւր մէջ մասնիկ մի ջուր՝ զոր կը կորսնցունէ 1200ի բարեխառնութեամբ։

131. Օսլայացեալ միւթք (Matières amylocées). — Օսլայացեալ նիւթք՝ են ջրատք բնածիոյ որք կը կարծուին թէ յառաջ գան քաղցրանիւթոյ տ մասնըկանցմէն՝ եղծմամբ ու մասընկանց լրոյ։ Զանազան աղբակաց աղբեցութեամբ՝ իրենց կը ձգեն ջրոյ տարերքն և յառաջ կը բերեն քաղցրանիւթ մը։

132. Օպայ (Amidon) = տ Բն⁶ ջ¹⁰ թ⁵. — Առատութեամբ կը գտնուի բուսոց մէջ. ինչպէս են ցորենոյ հատերն, պատենաւուորք (légumineuses), կանկենոյ (châtaignier) պտուղք, գետնախնձորոյ խունկըն (tubercule), շուշանակերպից (liliacées) կոճղէզքն, և այլն։ Կը գըտնուի միանգումայն կենդանական կաղմուածոյ մէջ, 'ի փայծաղն, յերիկամունս, և այլն։



Ձկ 25. Փեկուղ

Կը պատրաստեն սովորաբար ցորենոյ հատերէն կամ 'ի գետնախնձորէ։ Գետնախնձորոյ օպայն յատուկ անուամբ փեկուղ (fécule) կը կոչուի։

Գետնախնձորէ փեկուղ (Ձկ 25) հանելու համար՝ կը մանրեն նախ զաննկի քերիչով և կ'ընեն խիւս մը. կը դնեն մաղի մը վրայ և կը սկսին կաթիլ կաթիլ ջուր լեցնել։ Զուրը իւր հետ կը ձգէ փեկուղի փոքրիկ հատերն, իսկ մաղին վրայ կը մնան զետնախնձորոյ խորտակած խորշերն։ Ստորակայ անօթին մէջ հաւաքուած ջուրը, իւր յատակը կը


հանգչեցնէ բովանդակած փեկուղը. ջուրը կ'աման և փեկուղը կը թողուն որ չորնայ:

Օսլան (Q. 26, 27) կը պատրաստուի ցորենի հատերէ: Այս նպաստակաւ ալիք-ը կը զանգեն և կ'ընեն խիստ մը. կը դնեն լաթի մէջ, և կը հասցունեն վրան ջրոյ նուրբ հոսանք մը: Ջուրը զօսլան հետը կը տանի. լաթին մէջ կը մնայ գորշագոյն, կակուղ և ձգտական զանգուած մը որ կ'ըսուի ոստեղիս (glutine): Նախընթաց բացատրած եղանակաւս կը հաւաքեն զօսլան և կը թողուն որ չորնայ:

Կայ դարձեալ ուրիշ եղանակ մը օսլայի պատրաստութեան, որ վատառողջ ըլլալուն պատճառաւ գրեթէ թողուած է. այս է՝ խմորման եղանակը: Ցորենոյ հատերը կ'ենթարկեն խմորման. ոստեղիտը կը նեխի և կ'եղանի, իսկ օսլան անայլայլ մնալով կը հաւաքի անօթոյն յատակը: Խմորման միջոց կը ձևանայ նաև զանազան թթու-



Ձ. 26. Օսլայ



Ձ. 27. Օսլայ

ուտներ, ինչպէս կաթնական, քացախական, բնածխական, բնածխատ աւշակի, և դեռ ուրիշ անախորժ հոտեր արձկող արդիւնքներ:

133. Օսլան սպիտակ փոշի մ'է որոյ հատերն կրնան ունենալ զանազան մեծութիւններ և զանազան ձևեր: Փեկուղին հատերը՝ ցորենոյ օսլայէն աւելի խոշոր են: Օսլայացեալ նիւթոց փոքրիկ հատերն համակերպոն խաւերէ կը բաղկանան, որք որչափ աւելի դէպ 'ի շրջապատ մերձենան՝ այնչափ աւելի խիտ են: Դիւրին է ցուցնել իրենց ունեցած այս կազմութիւնը, եթէ թողունք նոյն հատերը տաք ջրոյ մէջ. ջուրը զանոնք կ'ուռեցնէ և կը պատռէ:

Օսլան անլուծական է 'ի ջուր, յալքոհ և յեթեր: Զերմ ջրոյ մէջ 'ի 60⁰ կամ յ70⁰ի գգալի կերպով կ'ուռի առանց լուծուելու, և կիսաթափանց գոնդողային կոյտի մը կը վերածուի, որ կ'ըսուի շրոյ (empois): Եթէ առատ ջրոյ մէջ եռացնելու ըլլանք և ամբողջութիւնը մզանցէ անցունենք. կ'ենէ քիչ պղտոր հեղանիւթ մը որ սովորաբար լուծումն օպայի կ'ըսուի:

134. Սիլտ (Dextrine) = տ Բ. 6⁶ Զ10 թ. 3. — Օսլան երկար ատեն տաքցունելով 100⁰ բարեխառնութեամբ, կը փոխարկի 'ի լուծական օսլայ՝ որ մանշով կը գունաւորի 'ի կապոյտ: 160⁰ և 200⁰աց մէջ կը փոխարկի մարմնոյ մը որ ամենալուծական է 'ի ջուր և մանշով ամենակին չի գունաւորուիր: Այս լուծումը գորաւոր կերպով յաջ կը գարձունէ բւեռացման մակարդակը, և սոյն պատճառաւ կոչուած է աշխտ:

Սիլիտի լուծումը ամենաբարկ եղած միջոց՝ խժային լուծման երեսոյթն ունի, և խիժի նման գործածական է: Աւելցնելով ալքոհ այս լուծման մէջ՝ ձեան տարափոյ նըման վայրահոսում մի կ'ունենակը, կապարոյ ենթաքացախատիւ ամենակին չի վայրահոսեր, և սոյն յատկութեամբ կը տարբերի արաբական խիժէն:

Երբ եռացնենք օսլան՝ քիչ քանակութեամբ ծծմբական թթուուտ բովանդակող ջրոյ մէջ, կը փոխարկի նախ յաջիտ և ասպա 'ի քաղցրանիւթ: Իսկ բորակական թթուուտի մէջ լուծելով և աւելցնելով վրան ջուր, կը վայրահոսէ սպիտակ նիւթ մը. զամփկայ կը լուան, կը չորցունեն, և կը ստանան բրուսակական օպայ (amidon azolique կամ րցորախամ) ըստուած մարմին մը որ բախմամբ կը պայթի:

135. Խորշամիթ (Cellulose) = տ Բ. 6⁶ Զ10 թ. 3. — Խորշանիւթը ունի մի և նոյն բաղադրութիւնն օսլայի և աշխտի. կը գտնուի բուսոց խորշերուն մէջ 'ի մկունս, 'ի պատեանս ճառագայթածե կենդաննեաց, և շատ կը տարբերի տեսքով, պնդութեամբ և համախմբութեամբ: Հին փայտը, բամբակը, մզանց թուղթը՝ գրեթէ զուտ խորշանիւթէ կազմուած են:

Հաստատուն մարմին մ'է, սպիտակ, անհոտ, անհամ, և տարրաբաշխող չերմութեամբ՝ յառաջ քան զհալին. անլուծական է որ և է հակազդակաց (réactif) մէջ, բաց

'ի լուծմանէ աշակային թթուուկի պղընձոյ (oxyde de cuivre ammoniacal): Ենթարկելով չոր թորեցման կու տայ կազեր, թթուուտ քացախական, ոգի փայտի, քացախոն, բնածխուկը ջրաճնի, մսապահը (créosotes), և այլն, մի և նոյն արդիւնքներն ինչ որ կը ստանանք փայտերու չոր թորեցմանէն:

Այլեցալիան և բարկ կալաքարք՝ կ'ուուցնեն խորշանիթը՝ ի ցրտութեան, և գանդաղութեամբ՝ առ երեսս միայն զայն կը քակտեն: Իսկ աղդեցութեամբ ծծմբական թթուուտի՝ զանազան փոփոխութիւնք կը կրէ ըստ բարեխառնութեան և ըստ բարկութեան (concentration) նոյն թթուուտին:

Եթէ ընկղմենք թուղթը երկու կամ երեք վայրկեան ջրախառն ծծմբական թթուուտի մէջ, յետոյ լուանք և չորցոնենք, կ'ունենանք կենդանական մագաղաթի երեւոյթն ունեցող թուղթ մը, որ մի և նոյն գործածութեանց տեղ կրնայ փոխանակել: Աւելի երկար մնալով նոյն թթուուտին մէջ՝ կը փոխարկի մասսամբ մը օսլայի:

156. Խորշանիթը բորակական թթուուտի աղդեցութեամբ կու տայ բամբակեայ վառողը (coton poudre, fulmi-coton, pyroxyline) որ սովորական բամբակի երեսունը ունի, բայց դեղնագոյն է և անհարթ ձեռաց. սաստիկ գիւրավառ, և կայրի առանց մնացորդ թողլու, արձը կելով վառողի նման զանդուած մի կազային արդեանց: Անլուծական է ՚ի ջուր, յալքոն, յեթեր, յաւշակային թթուուկն պղընձոյ: Ըստ պատրաստութեան եղանակին կը տարբերին իւր յատկութիւնքն և բաղադրութիւնը: Կրնանք ստանալ լուծական բամբակեայ վառող. մը եթերի և ալքոհի խառնրդեան մէջ, ընկղմելով բամբակը՝ չնչըրորակի (salpêtré), ծծմբական թթուուտի և ծխացող ծծմբական թթուուտի խառնրդեանց մէջ, յետոյ լուալով զայն և չորցնելով: Իւր այս լուծումը եթերի և ալքոհի մէջ՝ կը կազմէ զկրոյտ (collodion), որ բացօթեայ մնալով կը գոլորշիանայ. կը փոխարկի հաստատուն մարմնոյ և կը կարծրանայ: Գործածական է լուսանկարի արուեստին մէջ, և ՚ի վիրաբուժութեան՝ իր պատանք կը ծառայէ:


ԳԼՈՒԽ ԵՐԿՈՍՈՍԱՆԵՐՈՐԴ

ԽԿԱԲԵՐ ԲԱՂՄԴՐՈՒԹԻՒՑՔ

ԿԱՊՐԻՍԻՏ. — ԲՈՐԱԿԱՔԱՊԴՐՈՐԻՏ. — ԱԹԵԼԻՏ. — ԿԱԶՄԱԿԵՐԱՎՈՒԹԻՒՄ ԿՊԴՐՈՇՏԻ. — ՓԵՄԱԿԱՅ ԹԹՈՒՈՒՏ. — ԼԵԴԱԿԱՅ ԹԹՈՒՈՒՏ. — ԹՈՂՈՒԱԿ. — ԼԵՂԻ ՄՀՈՅ ԽՍԼՈՒԹԻՒՄ. — ԿԱՊՐՈՋԱԿԱՅ ԹԹՈՒՈՒՏ. — ՈՒՐԵՄԱԿԱՅ ԹԹՈՒՈՒՏ, ՈՒՆԵՄԻՏ. — ԳՈՂՄՈՐԱԿԱՅ ԹԹՈՒՈՒՏ. — ԱՂԱՋ. — ԼԵԴԱԿԱԿ. — ՔԱՓՈՒՐ. — ԽԱԿՈՒԹԻՒՄ ԲԱԿԵԿԹՈՅ. — ԿԱՅԹԱԲԻՏ, ԱՎԱԹԻՏ, ԱԺԽԱՅԱԿ. — ԿԱՐՄՐԻՏ:

157. ԽԾԼԱԲՔՐ բաղադրութիւնք (Composés aromatiques). — Այս բաղադրութիւնք օրոց գլխաւորն է կրնիդիալ (benzine), կը բաղկանան շաքը մը կարեսոր մարմիններէ որք ունին հասարակաց յատկութիւններ: Եւ որովհետեւ կը բավանդակեն իրենց մէջ անթիւ տեսակ բնական խսկութիւնք (լեղի նշոյ, անխանի, մեղուախոտի րեին-դե- պրէ, կինամնմի կannelle, և այլն), զօրաւոր և խնկարեր հսուերով, այս պատճառաւ կոչուեցան խնկարեր բաղադրաբիւնք: Այս անունս որ ՚ի սկզբան անորոշ և տարտամ կերպով տրուած էր մարմոց, հիմակ յատուկ կերպով կը տրուի անոնց՝ որոց մէջ կնդրիտն է հիմական ջրաբնածխուկ:

158. ԿԱՊՐԻՏ (Benzine) = ԲՀ⁶ Զ⁶. — Ֆարատէյ գըտաւ 1825ին. Միկչէրլին պատրաստեց զայն տաքցունելով կնդրըկական թթուուտը (acide benzoïque) առատ կրոյ հետ.



Մանաֆիլտ 1847ին ստացաւ զայն հանածխոյ (houille) ձիւթէն: Իսկ հիմակ կը պատրաստեն թորեցնելով մեղմ վերմութեամբ՝ կնդրըկական թթուուտի և կենդանի կրոյ խառնուրդքն. Ելած արդիմքը կը լուան կալինիւ, կը

շոքունեն քլորուկ կրածնիւ և կը վերաթորեցունեն .
ստացածնիս զուտ կնդրիտ է :

Յստակ և անգոյն հեղանիւթ մ'է, զուտ եղած միջոց
ախորժելի հոտ մ'ունի, լրէ աւելի թեթև, և 'ի 150 բար-
եխառնութեան իւր խոռոշիւնն է 0, 88: Կ'եռայ 840ի .
'ի 00ի հաստատովն մարմնոյ կը փոխարկի և պտերի (ֆու-
գեր) տերլուց նման խմբուած թիթեզներէ կը բաղկանայ:
Գրեթէ անլուծական է 'ի չուր, սակայն իւր հոտը անոր
կը հաղորդէ . լուծական է յալքոհլւ յեթեր: Կը լու-
ծուին իւր մէջ մանիշ, ծծումք, լուսածին, քափուր (cam-
phre), և առատ բնածուխ բովանդակող շատ մը գործա-
րանաւոր նիւթեր: Պայծառ և մրձոտ բոցով կը վառի:

139. Բողակաքաղցրիտ (Nitrobenzine) = Բն⁶ Զ⁵ (Բ թ²).
— Եթէ լցունենք կամաց կամաց կնդրիտ՝ բորակական
թթուուտի մէջ, և ապա աւելցնենք խառնրդեան վրայ
չուր, կը տեսնենք որ կը բաժնուի իւղային դեղնորակ հե-
ռուկ մը, և է բորակաքաղցրիտ.

$$\begin{array}{rcl} \text{Բն}^6 \text{ Զ}^6 & + & \text{Բ թ} \text{ Զ}^3 \\ \text{բորակական} & & \text{չուր} \\ \text{թթուուտ} & & \text{ցրիտ} \end{array} = \begin{array}{l} \text{Զ}^2 \text{ թ} \\ \text{բորակաքաղցրիտ} \end{array} + \begin{array}{l} \text{Բն}^6 \text{ Զ}^5 \\ \text{բորակաքաղցրիտ} \end{array}$$

Քաղցրիտն է՝ որոյ մէջ հիւլէ մի ջրածնի փոխանա-
կուած է (Բ թ²)' խումբէն:

Բորակաքաղցրիտը լեզի նոյն խսկութեան հոտն ունի .
Կ'եռայ 219—222օաց մէջ: Ազդեցութեամբ վերածիչ հա-
կազդակաց, ինչպէս են ծծմբեալ ջրածին, ծծմբուկ առ-
շակածնի, անագ, քլորակածնական թթուուտ, կը փո-
խարկի յանիիտ (aniline).

$$\begin{array}{rcl} \text{Բն}^6 \text{ Զ}^5 (\text{Բ թ}^2) & + & \text{Զ}^6 \\ \text{բորակաքաղցրիտ} & & \text{չըածիմ} \\ & & \text{անդամ} \end{array} = \begin{array}{l} \text{Բ} \left\{ \begin{array}{l} \text{Զ}^2 \\ \text{Բն}^6 \text{ Զ}^5 \end{array} \right. \\ \text{անդամ} \end{array} + \begin{array}{l} 2 \text{ Զ}^2 \text{ թ} \\ \text{ցուր} \end{array}$$

140. Ամիլիտ (Aniline) = Բն⁶ Զ⁷ Բ . — կը գտնուի
լեղակի և հանածիոյ թորեցմանէն ստացուած արդեանց

մէջ: Այսօրս արուեստից մէջ Զինինի գրութեամբ կը
պատրաստեն զայն: Այսինքն, կը փոխարկեն զկնդրիտ
'ի բորակակնդրիտ, և յետին վերածիչ մարմնոց ազդե-
ցութեան կ'ենթարկեն: Իբր վերածիչ գործածուող մար-
միններն են երկաթ և թթուուտ քացախական:

Անգոյն, շարժուն և բեկրեկիչ հեղանիւթ մ'է, յատուկ
անախորդ հոտ մ'ունի, դառն և կիզիչ համ մը: Զրէ ա-
ւելի խիտ է. կ'եռայ 1840ի . բացօթեայ մնալով կը մե-
նայ և հուսկ ուրեմն խտային մարմնոյ մի կը վերածուի:
Գրեթէ անլուծական է 'ի չուր . սակայն ամենայն համե-
մատութեամբ կը խառնուի ալքոհլի, եթերի, պարարտ
և ցնդական իւղոց հետ :

Առաջնական աւշակներու նման կու տայ երկրորդա-
կան, երրորդական աւշակներ և քառաւշակածնի ման-
շուկներ՝ ազդեցութեամբ ալքոհլական մանշուկներու .

$$\begin{array}{rcl} \text{Բ} \left\{ \begin{array}{l} \text{Բն}^6 \text{ Զ}^5 \\ \text{Զ}^2 \end{array} \right. & + & \text{Բն}^2 \text{ Զ}^5 \text{ Ս}^2 = \left(\text{Բ} \left\{ \begin{array}{l} \text{Բն}^6 \text{ Զ}^5 \\ \text{Զ}^2 \end{array} \right. \right) \text{ Զ} \text{ Ս} \\ \text{անդամ} & & \text{մանշուկ} \\ & & \text{եթելածիմ} \\ & & \text{մանշուաչըածմատ} \\ & & \text{եթելածիմ} \end{array}$$

$$\begin{array}{rcl} \text{Բ} \left\{ \begin{array}{l} \text{Բն}^6 \text{ Զ}^5 \\ \text{Զ} \end{array} \right. & + & \text{Բն}^2 \text{ Զ}^5 \text{ Ս}^2 = \left(\text{Բ} \left\{ \begin{array}{l} \text{Բն}^6 \text{ Զ}^5 \\ (\text{Բն}^2 \text{ Զ}^5)^2 \end{array} \right. \right) \text{ Զ} \text{ Ս} \\ \text{եթելածիմ} & & \text{մանշուկ} \text{ եթի} \\ & & \text{մանշուաչըածմատ} \\ & & \text{լածիմ} \\ & & \text{երկեթելածիմ} \end{array}$$

$$\begin{array}{rcl} \text{Բ} \left\{ \begin{array}{l} \text{Բն}^6 \text{ Զ}^5 \\ (\text{Բն}^2 \text{ Զ}^5)^2 \end{array} \right. & + & \text{Բն}^2 \text{ Զ}^5 \text{ Ս} = \left(\text{Բ} \left\{ \begin{array}{l} (\text{Բն}^2 \text{ Զ}^5)^3 \\ \text{Բն}^6 \text{ Զ}^5 \end{array} \right. \right) \text{ Ս} \\ \text{երկեթելածիմ} & & \text{մանշուկ} \text{ եթի} \\ & & \text{մանշուկ} \text{ եռակեթելվի} \\ & & \text{լածիմ} \\ & & \text{միլաւշակուտի} \end{array}$$

Եթէ ենթարկելու ըլլանք ալքոհլական լուծման մէջ
գտնուող անդամաւը՝ բորակային թթուուտի ազդեցութեան,
կ'ենէ բաղադրութիւն մը Բն¹⁰ Զ¹¹ Բ⁵ նշանացուցիւ, զոր
եթէ վերածենք սնդկաւ և քացախական թթուուտիւ,
կ'ունենանք ուրիշ նոր բաղադրութիւն մը Բն⁶ Զ³ Բ², որ

անգոյն հեղանիւթ մ'է, խնկարեր հոտ մ'ունի, կ'եռայ
233 - 234^{աց} մէջ, և այն:


141. Թթուուկեցնելով զանիլիտ երկբումատիւ կալոյ
և ծծմբական թթուուտիւ կամ քլորուկիւ կրածնի, կու-
տայ մանիշակագոյն նիւթ մը. զասիկայ գտու Բէռքին և
ինքն եղաւ առաջինը որ անիլիտէ յառաջ եկող գունա-
սորիչ նիւթոց արուեստը հնարեց և տարածեց.

Ի վաճառս գործածուող անիլիտի վրայ արդել տալով
թթուուկիչ աղդակներ (բորակատ սնդկի, զասիկական
թթուուտ)՝ կ'ունենանք գեղեցիկ կարմրագոյն մարմին
մը որ է փառքիս (fuchsine). անգոյն աղկազմի մը քլո-
րաջրածնատն է, այս է վարդանիլիտի (rosaniline), և
կը բովանդակէ Բն²⁰ Զ¹⁹ Բ³, Փ Զ: Կը բաղկանայ փալ-
փուն կանաչագոյն բիւրեղներն է՝ որք կարմիր մանիշա-
կագոյն լուծում մ'ունին և կը ծառայեն գունաւորելու
զբուրդ և զմետաքս:


Տաքցունելով փուքսիտը անիլիտի հետ՝ կապոյտ նիւթ
մը կը առանանք:

Կ'ունենանք դեռ ուրիշ գոյներ զուտ անիլիտով և կամ
իւր մեղիլածնեալ բաղադրութիւններովն:

142. Կազմակերպութիւն կթղրըտի. — Քէքիւլէ կը հա-
մարի որ կնդրըտի մէջ բնած խոյ իւրաքանչիւր քառահիւ-
լէական հիւլէներն միացած ըլլան բնած խոյ ուրիշ երկու
հիւլէիցն հետ, փոխանակելով ընդ միոյն երկու հիւլէա-
կանութիւնք, և ընդ միւսոյն՝ հիւլէականութիւն մի միայն.
իսկ չորրորդ հիւլէականութիւնը կապուած ըլլայ ընդ
ջրածնի: Այսպէս, եթէ դիտենք բնած խոյ հիւլէից մին,
կը տեսնենք որ յագեալ է



և եթէ այս կերպով միացնենք կնդրըտի բնած խոյն 6 հիւ-
լէներն ալ, կը տեսնենք հետևեալ նշանացուցին մէջ բը-
նած խոյ և ջրածնի հիւլէից ունացած վերաբերութիւնքն.



այս է վեցանկիւն քէքիւլէի ըսուածն՝ իւր ունեցած երկ-
րաշափական ձեռյն համար:

143. Փենական թթուուտ կամ վենոլ (Acide phénique
կամ phénol) Բն⁶ Զ⁶ Թ. — Այս մարմինս կը գտնուի
հանածխոյ ձիւթոյն մէջ, ուսկից կը հանեն թորեցնելով
և ժողվելով արդիւնքներն որք կ'անցնին 160 - 200°աց
մէջ, և աւելցնելով ասոնց գրայ կալիոնի լուծումը: Փե-
նոլը կը լուծուի կարաբրին մէջ, մինչդեռ ջրաբնած-
խուկին կը լուզան անոր գրայ. Կ'աման կալաքարային
լուծումը և կը չզգոքացնեն քլորաջրածնական թթու-
ուտիւ, փենոլը կը վայրահոսէ. կը լուան, կը չորցունեն,
կը վերաթորեցնեն և կը չանան ժողվել 1900ի մօտ ան-
ցածն: Ելած արդիւնքներն կը պաղեցնեն ՚ի - 10° բարե-
խառնութեան. փենոլը հաստատոն մարմնայ կը փոխար-
կուի և քամուելով կը թողու այն հիւլուկներն որոց հետ
խառն կրնայ գտնուիլ:

Փենիլածնածնմբային թթուուտը (acide phénylesul-
fureux) որ կը պատրաստուի կնդրտիւ և ծծմբական թը-
թուուտիւ, երբ չզգոքացուի կալիոնիւ, չորցուի և հալման
ենթարկուի առատ այրեցական կալուով, կը տարրաբաշչի
՚ի ծծմբակ կալւոյ և ՚ի վենոլ.



ձեացած զանգուածին ջուրը կը սպառեցնեն. կալիոնի մէջ լուծուած փենոլը կը վայրահոսեցնեն քլորաջրածնաւկան թթուուտիւ, և առաջնոյն նման կը գտեն.

Փենոլը կամ ջրատ վանիլածնին (hydrate de phényle) Բնէ ջէ, Թ. Ջ., անյատուկ անուամբ ըսուած է միանգամայն րրուուա փենական, ալրոնդ փենական, և այլն, և համարուած է երբեմն թթուուտ և երբեմն ալքոհոլ:

Հաստատուն բիւրեղացեալ մարմին մ'է. կը հալի 34օր, կ'եռայ ՚ի 1880ի և բացօթեայ մնալով կը գունաւորի: Անախորժ հոտ մ'ունի և այրեցական համ մը: Զմորթ կը խանգարէ: Լուծական է ջրայ մէջ և իւր լուծումը կը դորժածուի, ՚ի բժշկութեան իրբ հակափուտ՝ փենակեալ ջուր (eau phénique) անուամբ: Դիւրաւ կը լուծուի յալքոհոլ և յեթեր:

Հակաղակալ թղթոյ վրայ ամենակին ազգեցութիւն մի չունի, սակայն կը բաղակցի կալիոնի և նատրոնի հետ. իւր բիւրեղացեալ և ջրոյ մէջ լուծական բաղակցութիւնը քըն քիչ կայունութիւն ունին, և ստոյդ աղեր չեն համարուիր: Փենոլի ունեցած այս յատկութիւնն կալաքարաց հետ բաղակցելու, ՚ի սկզբան համարել տուաւ թէ իրր թթուուտ մ'ըլլայ:

44. Փենոլը շատ գործածական է ՚ի բժշկութեան իրր հակափուտ, վասն զի սպիտը (albumine) կը մակարդէ և զմորթ անփուտ կը պահէ. կ'արգելու ստորին կարգի գործարանաւոր էակաց աճումը, ինչպէս մակարոյցներու, մղլուութեան, և այլն: Եթէ ներքուստ մատակարարուի, թունաւոր ըլլալոն պատճառաւ պէտք է որ չափաւորեալ քանակով տրուի:




445. Լեղական թթուուտ (Acide picrique) = Բնէ ջէ (Բ. Թ. 2) 5, Թ. Ջ. — Պատրաստելու համար կը լուծեն փենոլը բարկ բորակական թթուուտի մէջ, և կ'եռացնեն լուծումը՝ մինչև որ բորակային գոլորչիք արձկելէ գաղղրի: հեղուկը պաղելով՝ կ'ըլլայ կոյտ մի անզուտ լեղական թթուուտի: կը գտեն զայն փոխարկելով ՚ի լեղաստաշակի, բիւրեղացնելով նոյն աղը, և տարրաբաշնելով առաջ ծծմբական թթուուտիւ:

Թթու և գառն համ մ'ունի. ՚ի ցրտութեան քիչ լուծական է ջրայ մէջ, լուծական է յալքոհոլ և յեթեր. կը բիւ-

րեղանայ դեղին կիտրոնագոյն հատուածակողմեան ասղանց ձևով: Քիչ քանակութեամբ եղած միջոց եթէ մեղմով տաքցունենք, կը հալի և ապա կը վերաբանայ. սաստիկ տաքցունելով՝ պայթմամբ կը տարրաբաշխի:

Թթուուտ հակաղեցութիւն ունի, և կը բաղակցի աղկաղմներու հետ տալով բիւրեղացեալ աղեր՝ ամէնքն ալ գեղնագոյն: Լեղատք (picrates) բարձր բարեխառնութեամբ զօրաւոր կերպով կը պայթին. կը պայթին դարձեալ բախմամբ՝ եթէ խառն ըլլան ուրիշ աղերու հետ, ինչպէս ընդ քլորատի կալույ: Լեղատն աւշակի և քլորատն կալույ կու տան դիւրաւ պայթող փոշի մը, որ կը ծառայէ վառողի տեղ այլ և այլ առթից մէջ:


446. Թոլուէկ (Toluène) = Բնէ ջէ. — Կը պատրաստեն հանածխոյ ձիւթոյն թորեցմանէն ելած թեթև իւղերէն: Կ'եռայ Ա 10ի, զրէ աւելի թեթև է և անոր մէջ անլուծական, դիւրավառ, և պաղեցուցիչ խառնուրդներով հաստատուն մարմնոյ չփոխարկուիր: Իւր գոլորշեաց մէջն անցունելով քլորի հոսանք մը՝ կու տայ քլորուկինըրիկածի (chlorure de benzyle) Բնէ ջէ Փ. որ անգոյն հեղանիւթ մ'է, եռացող ՚ի 1800ի, գրգռիչ աշաց և քլորաջրածնական եթերի մը ամենայն յատկութիւնքն ունի: Եռացնելով քացախատի կալույ ալքոհլական լուծամբն՝ քլորուկ կնդրըկածնին կը տարրաբաշխի՝ տալով քլորուկ կալույ և քացախատ կնդրըկածի. եռացնելով յետինս բարկ լուծմամբ մի կալույ, կը կրինաբաշխի՝ ՚ի քացախատ կալույ և յալքոհոլ կնդրկածնական (alcool benzyllique).






147. Ալքոհօլիա կնդրըկական (Aldéyde benzoïque) կամ ջրածնովկ կնդրըկածնի (hydrure de benzoyle) = $\text{Բ}^{\text{n}}{}^7 \text{Զ}^6 \text{Թ} \cdot$. — Եղի նշյ իսկութիւնը (essence d'amandes amères) քիչ կայունութիւն ունեցող բաղակցութիւն մ'է կնդրըկական ալքոհոլի և խաժաջրածնական թթուուտի. Հանելու համար ասկից զուտ ալքոհոլիսը, կը յուզեն զայն երկծմբակ նատրի բարկ լուծմամբ, և կը բաժնուի բիւրեղեայ բաղակցութիւն մը կնդրըկական ալքոհոլի և երկծմբակ նատրի. զասիկայ կը դնեն մզանցի մը վրայ որ կաթի, իւր թացութիւնը կորսնցունէ, և լուծելով եռացեալ ջրոյ մէջ, վրան աւելցնելով այրեցական նատրոն՝ զայն կը տարրաբաշխեն. ալքոհոլիսը կը բաժնուի, կ'աման, կը չորցունեն և կը վերաթորեցնեն:

Եղի նշյ իսկութիւնը իրապէս կազմուած չգոյնուիր նուշերու մէջ, այլ երբ զասոնք ճմլելով կը հանենք իրենց պարարտ իւզը, և մնացածին վրայ աւելցնելով գաղջ կը թորեցնենք խառնուրդը, իսկութիւնը ջրոյ գոլորշեաց հետ մէկտեղ կ'անցնի և կը հաւաքի անօթոյն յատակը. Եղի նուշերը կը բովանդակեն իրենց մէջ բիւրեղացեալ սկզբունք մը՝ եշխ (amygdaline) $\text{Բ}^{\text{n}}{}^{20} \text{Զ}^{27} \text{Բ} \cdot \text{թմ}$, և տեսաղի (diastase)նման խմոր մը որ կ'ըսուի կրիտ (émulsine): Ջրոյ ներկայութեամբ կթիմը կը կրկնաբաշխէ զնշիտ՝ ի քաղցրանիւթ (glucose), ՚ի թթուուտ խաժաջրածնական և ՚ի ջրածնովկ կնդրըկածնի. հետեւաբար նշիմը քաղցրանիւթակերպ (glucoside) մարմին մ'է.



Նշիտի այս կրկնաբաշխութիւնը հաւասարապէս գործարանաց մէջ ալ կը կատարուի: Եթէ կենդանւոյ մը տալու ըլլանք նախ նշիտ, ապա կթիտ բովանդակող անուշնուշեր, կը մեռնի իսկոյն՝ թունաւորուելով խաժաջրածնական թթուուտէ: Նոյն իսկ շատ քանակութեամբ լեզի նուշ կերող անձինք կը թունաւորուին և կը մեռնին. վարն զի իւր իսկութիւնը՝ խաժաջրածնական թթուուտ բովանդակելուն պատճառաւ թունաւոր է: Ի բժշկութեան



Ձև 28. Պատրաստութիւն կնդրըկական թթուուտի

զուտ վիճակի մէջ չի գործածուիր: Կը գտնուի ծուաղենւոյ (laurier-cerise) նշցն մէջ, զեղճի, սալորի, կեռասի, ծիրանի կորիղներն՝ կը բովանդակեն նշիտ և կթիտ:

148. Կնդրըկական թթուուտ (Acide benzoïque) = $\text{Բ}^{\text{n}}{}^7 \text{Զ}^6 \text{Թ} \cdot$. — Կնդրկէ (benjoin) կը հանեն՝ դնելով զայն հողէ հարթ պնակի մը մէջ, ծածկելով վրան մզանց թըղթով և աւելցնելով սոսուարաթղթէ կոնաձև մը (Ձև 28): Այսպէս պատրաստելէ վերջ կը դնեն ամբողջութիւնը աւազի նուրբ խաւով մը ծածկուած երկաթեայ թիթեղի

վրայ և կը տաքցունեն մեղմ չերմութեամբ երեք կամ չորս ժամ: Կնդրըկական թթուուտը կը վերաբառնայ և ձեան տարափոյ նման կը հաւաքի կրնածեխն կողիցը վրայ: Կ'ըսուէլ երբեմն ծայլի կեղրիկի:

Սպիտակ, թեթև մարմին մ'է, և կը բիւրեղանայ երակայնածայր ասղածե: հալական է 121⁰ի. կը վերաբառնայ 140⁰ բարեխառնութեամբ, և 249⁰ի կը թորէ: Իւր գոլորշիքը հազ կը պատճառեն: Քիչ լուծական է պաղ ջրոյ մէջ, և անոր գոլորշեացը հետ մէկտեղ կը թորէ: Կրոյ հետ թորեցնելով կը տարրաբաշխի 'ի բնածխական թթուուտ և 'ի կնդրիտ:

Միազկազմային թթուուտ մ'է, և կու տայ եթերներ և աղեր: Գործածական է 'ի բժշկութեան թէ այս թթուուտս և թէ իւր կնդրատքն (benzoates):

149. Ուռենավան թթուուտ (Acide salicylique) = Բն⁷ Զ⁶ Թ⁵. — Ինչպէս որ կնդրըկական թթուուտը կը բաղկանայ կնդրիտէ և բնածխական թթուուտէ, այսպէս նաև ուռենավական թթուուտը բաղկացած է 'ի ֆենոլէ և 'ի բնածխական թթուուտէ. և ինչ վերաբերութիւն որ կայ կնդրտի և փենոլի մէջ, մի և նոյն վերաբերութիւնըն կը նկատենք կնդրըկական և ուռենական թթուուտներու մէջ.

Բն⁶ Զ⁶
կթղթիտ (benzine)

Բն⁶ Զ⁵, Թ⁴ Զ
փենոլ (phénol)

Բն⁷ Զ⁶ Թ² = Բն⁶ Զ⁵, Բն Թ² Զ Բն⁷ Զ⁶ Թ³ = Բն⁶ Զ⁴ { Թ³ Զ
կթղթըկական թթուուտ ուռենավան թթուուտ

Կը պատրաստեն՝ հալեցնելով քլորակնդրըկական թթուուտը (acide chlorobenzoïque) կալիոնիւ:

Բն⁷ Զ⁵ Թ² + ԱԼԶ Թ = Բն⁷ Զ⁶ Թ³ + ԿՐ Թ
քլորակնդրըկական կալիոն ուռենական քլորուկ թթուուտ թթուուտ կալոյ

150. Ուռենական թթուուտը կը բիւրեղանայ խոշոր հաստուածակողմեան քառակուսի ձեերով որք հալականք

են 'ի 156⁰ի. լուծական է եռացեալ ջրոյ մէջ, յալբոհու և յեթեր, և իւր ջրոյին լուծումը 'ի թուխ մանխակագոյն կը գունաւորէ երկաթական աղերը: Սաստիկ թորեցմամբ կը տարրաբաշխի 'ի թթուուտ բնածխական և ի փենոլ: Բորակական թթուուտիւ, քլորիւ, ժահնով, մանշով՝ կու տայ փոխանակութեամբ յառաջ եկող արդիւնքներ:

151. Ուռենիտ (Salicine) = Բն⁵ Զ¹⁸ Թ⁷. — Ուռենւոյ կեղեներէն կը հանեն: կը բաղկանայ բիւրեղեայ փալիքը լուն ասեղներէ, լուծականը 'ի ջուր և յալքոհու, անլուծականք յեթեր, և բևեռացման մակարդակը 'ի ձախ կը խոտորեցնէ: Դառն համմ'ունի: քաղցրանիւթեակերպ (galcoside) մ'է, կամ թէ ըսենք տեսակ մը չչղոք եթեր որ կը բաղկանայ միութենէն մասնիկ մի ուռենածնիտի (saligénine) և մասնիկ մի քաղցրանիւթոյ՝ եղմամբ մասնիկան միոյ ջրոյ: Կթիտի (émulsine) աղքեցութեամբ ուռենիտը իրեն կը ձգէ մասնիկ մի ջուր և կը կրկնաբաշխի յուռենածնիտ և 'ի քաղցրանիւթ.

Բն¹³ Զ¹⁸ Թ⁷ + Զ² Թ = Բն⁷ Զ⁸ Թ² + Բն⁶ Զ¹² Թ⁶
ուռենիտ ջուր քաղցրանիւթ

Աւելցնելով ուռենիտի վրայ քանի մի կաթիլ թթուուտ ծծմբական՝ կը կարմրի. թթուուկիչ մարմիններով կու տայ ջրածնուկ ուռենածնի (hydrure de salicyle), իսկ հալած կալիոնիւ՝ ուռենական թթուուտ:

Ուռենիտը գործածական է 'ի բժշկութեան տենդի դէմ:


152. Գղթորական թթուուտ (Acide gallique) = Բն⁷ Զ⁶ Թ⁵ + Յ Զ² Թ. — Կը պատրաստեն սովորաբար՝ զղթորներու բովանդակած աղաղին (tannin) կրկնաբաշխութենէն:

Այս նպատակաւ խոշոր կերպով կը մանրեն գղթորները և թրցելով կը թողուն բացօթեայ, չանալով նորոգել միշտ ջուրը որ շարունակեալ գոլորշիացմամբ կը կորսընցունեն: Երկու կամ երեք ամսէ վերջ զօրաւոր ճնշման են՝ թարկելով նոյն զանգուածը՝ կ'ելլէ սեաւ հեղանիւթ մը. իսկ հաստատուն մասը որ աղատ կը մնայ՝ այլ և անգամ եռացեալ ջրով կը լուան: Մղեալ հեղանիւթը պաղե-


լուլ՝ կը թողու հանգչիլ զթթուուտ գղթորական։ Զտելու համար կը լուսան դարձեալ այլ և այլ անգամ եռացեալ լրով և բիւրեղացման կ'ենթարկեն։

Գղթորական թթուուտը կը բիւրեղանայ մետաքսեայ երկայնածե ասեղանց կերպարանօք, որք կը բովանդակեն իրենց մէջ 3 մասնկունք բիւրեղացման ջուր Բ⁶⁷ Զ⁶ Թ⁵ + 3 Զ² Թ¹ զոր կը կորսնցունեն 'ի 1000ի։ Անհոտ է, սեղմիչ և թթու համ մուռնի. զուծական է 'ի ջուր, աւելի ևս լուծական յալքոհէ, նուաղ լուծական յեթեր, և սաստիկ թթուուկող։ Իւր ջրային լուծումը կը գունաւորի և բացօթեայ մնալով կը տարրաբաշխի. այս այլափոխութիւնը զգալի կերպով կը կատարուի ներկայութեամբ կալաքարաց։

Թորելով կ'այլափոխի և կը փոխարկի 'ի թթուուտ հրազդութորական (acide pyrogallique) և 'ի թթուուտ բընածխական։



153. Աղաղ (Tannin) = Բ⁶¹⁴ Զ¹⁰ Թ⁹. — Կ'ըսուի միանդամայն գղթորական թթուուտ կամ գղթորազաղական թթուուտ (acide gallotannique): Բաղակցութիւն մի է կրկին մասնկանց զղթորական թթուուտի եղծմամբ (élimination) մասնիկ մի ջրոյ։



Կը պատրաստեն զայն գղթորէ՝ որ մուն եերկական (cynips tinctoriae) կոչուած միջատի մը խայթուածքէն կը ձեանայ՝ կազնիի տերեւոց և սոսերուն վրայ։ Այս նըսպատակաւ խոշոր կերպով կը մանրեն գղթորը, կը լեցընեն Ա. երկայնորդի (allonge) մը մէջ (Զ²⁹), վրան կ'աւելցնեն ջրախառն եթեր, և կը փակեն անօթը բամբակէ խցանով. յետոյ կ'աղուցանեն զասիկայ Բ շին վը

րայ։ Հեղուկը կը սկսի մղուիլ ստորակայ շշին մէջ և երկու կարգ կը բաժնուի. վրայինը եթերային է, ստորին կարգը ջրային. կը բաժնեն յետինը, կը դնեն չորացուցման ջերմասենեկի մը մէջ կը մնայ աղաղը որ թեթև փոշի մ'է, ոռած և գեղնագոյն։

Աղաղը չբիւրեղանար, անկերպարան է, անհոտ և սաստիկ սեղմիչ համ մ'անի։ Զրոյ մէջ ասատութեամբ կը լուծուի, քիչ լուծական է յալքով և անլուծական 'ի զուտ եթեր։ Կ'ազդէ իբր զօրաւոր թթուուտ մը. կը կարմըրացնէ լուսպեղի ներկը, կը տարրաբաշխէ կալաքա-

րային բնածխագովը, և կը վայրահոսէ մետաղական լուծմանց մեծամասնութիւնը։ Իւր կալաքարային աղերը լուծականք են. ամենքն ալ անկերպարան (amorphes), և բացօթեայ դիւրաւ այլայլելով՝ կը գունաւորին և կ'ըլլան թթխագոյն։

Աղաղի ջրային լուծումը մնալով բացօթեայ, կը ծծէ զթթուածին. այն ատեն կ'արձկէ թթուուտ բնածխական և յատակը կը հանգչեցնէ թթուուտ գղթորական։ Տաքցունելով 210 և 215 աց մէջ՝ կու տայ թթուուտ բնածխական, թթուուտ հրագղթորական (pyrogallique) և ուրիշ սեպագոյն նիւթ մը։



Զ²⁹.
Պատրաս-
տութիւն
պատրաստութեան պատագուցին, որ սեպագութիւն պատրաստութեան մէջ կը գործածուի։

Աղաղական թթուուտի լուծումը կու տայ երկաթական (ferriques) աղերով՝ վայրահոսում մի սեպագուցին, որ սեպագութիւն պատրաստութեան մէջ կը գործածուի։

154. Աղաղը գործածական է 'ի բժշկութեան իբր սեղմիչ (astringent)' այլ և այլ տեսակ հիւանդութեանց դէմ։ Եւ որովհետեւ բուսական կալաքարածե մորմինները կը վայրահոսէ 'ի վիճակի անլուծական բազակցութեանց, անոր համար այս տեսակ մարմոց իբր հակագեղ համարուած է, մանաւանդ ափիոնի։

Կան քանի մի տեսակ աղաղատք (tannates) որք նշանաւորք են, մանաւանդ բիսմութի, կապարոյ, զնկոյ աղաղատներն։

155. Լեղակ (Indigo). — Լեղակը խնկարեր բաղա-

Դրութեանց մէջ գասուած է՝ իւր յառաջ բերած բաղա-
դրութեանցը բնութեանն պատճառաւ։
Կը պատրաստեն զանազան բոյսերէ, և գլխաւորաբար
լեղակարեր (indigoferæ) և լեղակենի (indigotier) բուսոց



Զե 50. Լեղակենի

(Զե 50) ցողուններէն և տերևներէն։ Ասոնց մէջ ինքն յին-
քեան բոլորովին կազմուած չի գտնուիր, այլ կը ձևանայ՝
երբ խմբման ենթարկենք վերցիշեալ բուսոց ցողունքը

և թարմ տերևները. վասն զի կը կրկնաբաշխի այն ա-
տեն իրենց մէջ բովանդակւող լեղակակ (indican) ըսուած
անգոյն սկզբունքն, և կու տայ զլեղակ և զլեղակափաղ-
ցրիտ (indiglucine):

Այս նպատակաւ կը չորցունեն նախ լեղակաբեր բու-
սոց տերևները արևու առջև և կը ձգեն յետոյ ջրոյ մէջ։
Խմբման վրայ 12 կամ 15 ժամ անցնելէ վերջ կը բաժ-
նեն հեղուկը և բացօթեայ կը չարմեն. հեղուկը 'ի կա-
պոյտ կը գունաւորի և կը հանգչեցնէ զլեղակ. կը բաժ-
նեն զայն, կը լուսան քիչ մը եռացեալ ջրով, կը մզեն կը-
տաէ, կը ճմլեն, և քառակուսի կտրելէ վերջ կը չոր-
ցունեն։

Այսպէսով պատրաստուած լեղակը անզուտ է բոլորո-
վին և կը բովանդակէ իւր մէջ 50-60 առ 100 զուտ լե-
ղակ կամ լեղակիտ (indigotine):

Չուտ լեղակիտը կը պատրաստուի վերաբարձմամբ
(sublimation). է մանիշակագոյն, անհամ և անհոտ. ան-
լուծական 'ի ջուր, յալքոհ, յեթեր, պարարտ և խսկա-
կան (essentielle) իւղոց մէջ։ Ներկայութեամբ կալաբա-
րաց՝ ենթարկուելով աղդեցութեան վերածիչ հակաղդա-
կաց, կը փոխարկի 'ի սպիտակ լեղակ (indigo blanc).
որ կը լուծուի կալաբարացին հեղանութոյն մէջ։

$$2 \text{ (Բն}^8 \text{ Զ}^5 \text{ Բ} \text{ Թ)} + \text{ զ}^2 = \text{ Բն}^{16} \text{ Զ}^{12} \text{ Բ}^2 \text{ Թ}^2 \\ \text{լեղակիտ} \quad \text{ըրածիմ} \quad \text{սպիտակ} \\ \text{լեղակ}$$

Ազդեցութեամբ օդոյ սպիտակ լեղակը կը կապուտա-
կի։ Այս սկզբան վրայ հիմնեալ է կտաները ներկելու
արուեստն. հիմուածները կ'ընկլմեն սպիտակ լեղակի
լուծման մէջ և յետոյ կը թողուն բացօթեայ։ Սպիտակ
լեղակը թափանցելով հիւսուածոց մէջ կը վերաթթուուկի
և անլուծական կազոյտ լեղակը՝ սերտիւ կը միանայ հիւ-
սուածոց հետ։

Լեղակը լուծական է ծծմբական թթուուտի մէջ։
136. Քափուղք (Camphres). — Զանազան տեսակք
կան քափուրի, ինչպէս են Պունէօյինը Բն¹⁰ Զ¹⁸ Թ և Ճա-
քոնինը Բն¹⁰ Զ¹⁶ Թ։

Կը պատրաստեն զատոնք բախուրային սարդենիկ (laurelier camphrier) որ մեծ ծառ մ'է (Զւ 31): Այս նըպատակաւ ծառին ճիւղերը կը մանրեն, կ'եռացնեն զանոնք ջրով՝ երկաթեայ սանի մը մէջ, և քափուրը որ կը սկսի վերաբառնալ՝ կերթայ կը խտանայ սանին յարդալից և գմբեթաւոր խուփին մէջ, զոր կը ժողվեն և կրկին անգամ վերաբարձմամբ կը դուռ:

Ի սովորական բարեխառնութեան հաստատուն մարմին մ'է, սպիտակ, կիսաթափանց և բիւրեղեայ: Զօրա-




Զւ 31. Քափուրային սարդենիկ

ուր և ինկարեր հոտ մ'ունի, դառն և զովարար համ մը: Կը հալի ՚ի 1720ի և կեռայ ՚2040ի: Յնդական մարմին մ'է՝ և ՚ի սովորական բարեխառնութեան կը վերաբառնայ՝ նոյն իսկ փակ անօթոց մէջ:

Բախմամբ ուզելով փոշիացնել՝ կը կակղանայ սանդիտուան տակ և կը շեղակուտի. սակայն դիւրաւ ալ կը

փղի եթէ թանանք առաջուց քանի մի կաթիլ ալքոհոլիւ: Ջրոյ մէջ ամենաքիչ լուծական է, և եթէ ձգենք անոր եւ բառ փոքրիկ կտոր մը՝ կը սկսի դառնալ (Զւ 32): Դիւրաւ կը լուծուի յալքո՞լ, յեթեր, ՚ի թթուուտ քացախական, պարարտ և ցնդական իւղոց մէջ:

Երկար ատեն եռացնելով բարկ բորակական թթուուտի հետ՝ կը թթուուկի և իրեն կը ձգէ Յ հիւղեք թը-



Զւ 32. Պտոյս քափուրի ջրոյ վրայ


թուածնի, տալով երկաղկազմային թթուուտ մը, որ է րրուուտ բախուրական (camphorique) թե¹⁰ թ.⁴

457. Ի բժշկութեան յաճախ գործածող դեղերէն մինէ, տալով քիչ քանակութեամբ՝ կը ծառայէ իր մեղմիչ ցաւոց, կը բուժէ ջղաց ձգտումը, կը ծառայէ իրբե գըրգուիչ, քրանեցուցիչ և կակափուտ: Կը գործածուի նաև չփմանց մէջ յօդացաւութեան դէմ: Իւր հոտը մահաբեր է որդանց և միջատաց, անոր համար ալ կը գործածուի

պահպանելու բնական պատմութեան նիւթերը, մորթեցէնքն, ասուեղէնքն, և այլն:

158. Խոկութիւն բնեկնդ (Essence de térebenthine) = Բհմ¹⁰ ջ¹⁶. — Կան շատ մը բնածխուկք ջրածնի որոց բազգութիւնն է՝ Բհմ¹⁰ ջ¹⁶: Ասոնցմէ ոմանք բնական արդինքներ են որք կը կազմեն իրենց ամբողջութեամբն և կամ իրենց մի մասամբն խսկական իշրոց մեծամասնութիւնը: Խոկ այլք արուեստով կը ստացուին:

Առաջին տեսակէ են խոկութիւնք բնեկնդ, կիտրոնի (cedrat), կիտրի (citron), մեխակի, կաժպուտի (cajeput), պղպեղի, անանխոյ (menthe), թուրինչ խոտոյ (melisse), և այլն:



Ձև 55. Փլուենտեան ցի

Ասոնք հեղուկ մարմիններ են, ցնդականք, անուշահոտք, գիւրաբորբոք: Ոմանք խառն կը դտնուին թթուածնեալ հաստատուն մարմնոց հետ, որք բաւական ժամանակ անցնելէ վերջ անոնց յատակը կը հանդչին:

Կը պատրաստեն զասոնք՝ թորեցնելով ընդ ջրոյ նոյն հոտաւտ բոյսերը: Թէ և այս խոկութեանց եռացման կետը 150–200 աց մէջէ, սակայն ջրոյ հետ մէկտեղ եռալով՝ կ'անցնին անոր գոլորշեացը հետ և կ'երթան կը խտանան թորեալ ջրոյն երեսը՝ կազմելով իւղային խաւ մը:

Ասոնց պատրաստութեան սովորական եղանակն է, ենթարկել նոյն բոյսերը, մանաւանդ անոնց տերկեքն և ծա-

ղիկները՝ ջրեղէն դոլորշեաց հոսանքի մը ազդեցութեան: Ջրեղէն դոլորշին ասոնց վրայէն անցնելով՝ կ'առնու անոնց խսկական իւղերը և կը տանի կը խտացնէ փրաթետնան անօր ըսուած յատուկ ձեւ ունեցող չի մը մէջ (Ձև 55): Այս շին յատակէն կը բարձրանայ կորածեծորակ մը և կը հասնի գրեթէ նոյն շին փողը: Արդ, երբ հեղանիթը թորելով խսկական իւղայն հետ կու գայ և կը սկսի հաւաքի փլուենտեան անօթոյն մէջ, իւղը ըլրէն աւելի թեթև ըլլալով՝ շին մէջ կը մնայ: Խոկ ստորակայ ջուրը կողմնակի խողովակէն դուրս կը սկսի վազել:

Այս խսկական իւղերէն կարեորագոյնն է բնեկնդ խոկութիւնն Բհմ¹⁰ ջ¹⁶, զոր կը պատրաստեն՝ ջրոյ հետ թորեցնելով՝ ի վաճառս գործածւող բնեկնը (térebenthine):



Ձև 54, 55, 56. Կանթարիդ

Կը լուծէ իւր մէջ զլուսածին, զծումբ, զծուական իւծժ (caoutchouc), և այլ բազմաթիւ ռետիններ:

Բաց ՚ի իւր արուեստից մէջ ունեցած գործածները կործածական է նաև ՚ի բժշկութեան՝ թէ ներքուստ և թէ արտաքուստ:

159. Նամթարիդ (Cantharidine) = Բհմ¹⁰ ջ¹² թ. 4. — Կը պատրաստուի կանթար (cantharide) ըսուած միջատներէ (Ձև 54, 55, 56), և սաստիկ խարանիչ յատկութիւն ունի: Ապիտակ գոյացութիւն մ'է, անհոտ, և կը բիւրեղանայ տարանկիւնաձև թիթղանց կերպարանօք: Անլուծական է ՚ի չոր և ՚ի ծծմբուկ բնածխոյ: Լուծական է ՚ի գլորակերպ (chloroforme), յեթեր, յալքոհոլ, պարարտ և ցըն-

դական իւղոց մէջ: Կը հալի յ2100ի և ասղածեւ կը վերաբառնայ:

Զօրաւոր գեղ է և միանգամայն սաստիկ թոյն:

160. Նափթիո (Naphtaline) = Բհ¹⁰ ջ⁸. — Նաւթիտը կը պատրաստեն մեծ քանակութեամբ՝ թորեցնելով հանածխոյ ձիւթը. բարձրագոյն բարեխառնութեամբ անցած արդեանց մէջ կը գտնուի. գտելու համար կը վերաբառնան:

Նաւթիտը թեթև և փալիլուն թիթղունց կերպարանքն ունի. հալական է յ790ի, կ'եռայ յ2180ի, սակայն նուազ բարեխառնութեամբ կը վերաբառնայ և ջրոյ գոլորշեաց հետ կը թորէ: Անլուծական է 'ի ջուր, լուծական յալքոն և աւելի ևս լուծական յեթեր:

Գործածական է 'ի բժշկութեան:

161. Ածխայակ (Anthracene) = Բհ¹⁴ ջ⁸ թ⁴. — Կ'ելլէ թորեցնելով հանածխոյ ձիւթը բարձրագոյն բարեխառնութեամբ: Բիւրեղացեալ մարմին մ'է. կը հալի 2430ի և կ'եռայ 'ի վեր քան դ3600: Այս բնածխուկը մեծ կարեռութիւն մի սաացաւ երբ կրցան զայն փոխարկել 'ի կարմրիտ Բհ¹⁴ ջ⁸ թ⁴:

Այս նպատակաւ կը տաքցունեն ածխայակը ծծմբական թթուուտիւ, և կը թթուուկեցնեն զայն աւելցնելով վրան վերաթթուուկ մագնանի (peroxyde de manganèse): Ամալով թթուուտ լուծումը կը յագեցնեն կրով. յետոյ այս կրային լուծումը կը տաքցունեն նատրիւ և ջրով: Այն ատեն հեղուկը կը բովանդակէ կարմրիտ՝ նատրիւ մէջ լուծուած, զոր կը վայրահուեն քլորաջրածնական թթուուտիւ:

Կարմրիտը փալիլուն հատուածակողմեանց կերպարանքն ունի և է կարմրի գեղնագոյն. կը վերաբառնայ 245-2250աց մէջ: Եռացեալ ջրոյ մէջ քիչ կը լուծական է յալքոն, յեթեր և ի ծծմբուկն բնածխոյ. իւր լուծումները գեղնագոյն են: Կալաքարային լուծումները կ'ըլլան ծիրանեգոյն:

Կը ծառայէ գոնաւորելու պաստառները 'ի կարմրի և 'ի մանիչակագոյն:

Կարմրիտը կը փոխարկի 'ի ծիրանիտ (purpurine):

Երբ տաքցունենք զայն 450-160°աց մէջ, խառնըրդեամբ մը բարկ ծծմբական թթուուտի և երկթթուուկի մակնանոյ:

ԳԼՈՒԽ ԵՐԵՎՏԱՍԱՍՆԵՐՈՐԴ

ԲՆԱԿԱՆ ԿԱԼԱՔԱՐԱԶԵԽԻՔ. — ՀՐԱԲՐԱԿԱՆ ՇԱՐՔ

CÉRIE PYRIDIQYE

Հրաբթիտ. — Քիմքիթախւլիտ. — Հականիրիտ. — Դիակիտ. — Կալաքարածներ (eiguoë), ծիսախոտի, ափիոնի, քիմքիթաց, ատրոպի (belladone):

161. Բնական կալաքարածներ (Alcaloïdes naturels). — Բնական կալաքարածներ բորակածնեալ բաղադրութիւններ են որք 'ի բուսոց կը ստացուին, և աւշակի նման կրնան միանալ թթուուտներու հետ՝ տալով որոշեալ (défini) աղեր:

Երկու դաս կը բաժնուին, ըստ որում բաց 'ի բնածինէ, ջրածնէ և բորակածնէ կը բովանդակեն կամ չեն բովանդակեր իրենց մէջ թթուածին՝ ըստ թուոյ իրենց տարերաց: Թթուածին չըրվանդակող կալաքարածներ հեղուկ վիճակ մ'ունին, ցնդականք են, և իրենց արտաքին տեպովը կը մերձենան բաղադրեալ աւշակներու, ինչպէս անիիտը (aniline). այսպէս են ծխախոտիտ (nicotine) և խնդամուիտ (conicine):

Իսկ թթուածին բովանդակող կալաքարածներ՝ հաստատուն մարմիններ են, անգոյն, թալուն (fixe), բաց 'ի կինքոնիտէ (cinchonine) որ քիչ բարձր բարեխառնութեամբ կը ցնդի. օմանք անկերպարան են, իսկ այլք մեծ կանոնաւորութեամբ մը կը բիւրեղանան: Սովորաբար դառնահամեն՝ ինչպէս նաև իրենց աղերը. ջրոյ մէջ քիչ կը լուծուին և կամ բնաւ իսկ չեն լուծուիր. գիւրալոյծք են յալքոն: Իրենց լուծականութիւնը յեթեր և 'ի քլորակերպ՝ կը փոփոխի. կինքոնիտ, մորփիտ (morphine),

մորմիտ (strychnine), բրուկիտ (brucine), անլուծաշկանք են յեթեր, քինքինիտ (quinine), բրուկիտ, մորմիտ՝ առատութեամբ կը լուծուին քլորակերպի մէջ։ Դարձեալ լուծականք են կնդրըտի (benzine) մէջ քինքինիտ, մորմիտ, մորմիտ։

Բնական գործարանաւոր արմատները քիչ լուծականք են իւղերու մէջ, և որովհետև շատ անդամ գործածութեան համար պէտք կ'ըլլայ լուծել զանոնք պարարտ մարմնոց մէջ, անոր համար կը բաղակցեն զասոնք իւղական թթուուտի հետ, այն ատեն յառաջ եկած իւղատքն լուծականք են ամենայն համեմատութեամբ՝ պարարտ նիւթոց և ալքոհօլի մէջ։ Եւ որպէս զի կարենան ունենալ այս բաղակցութիւնները, կը փշրեն լաւ մը չորցած կալաբարածեն մարմինքն իւղական թթուուտի մէջ, և քիչ մը ժամանակ խառնուրդը մեղմ չերմութեան կ'ենթարկեն։

Թթուուտներէ կարմրացած լուսադեղի ներկին գոյնը կալաբարածեք կը վերադարձունեն, և մանիշակագոյն շարակեն՝ ի կանաչ կը փոխարկեն։

Կը վայրահուն իրենց լուծմանէն՝ կալիոնիւ, նատրոսիւ, աշշակաւ, կրով, կլոռունիւ, աղազով (tannin), և այլն. յետինս կալաբարածեն մարմնոց հետ կը կազմէ անլուծական աղազատներ (tannates)։

162. Կազմութիւն (Constitution). — Կալաբարածեն մարմնոց մեծամասնութիւնը զեւ պէտք է դասաւորել. վասն զի կան մարմիններ որք չեն գիտցուիր թէ ինչ բնած խուկէ յառաջ եկած են, և հետևաբար դասակարգութեան մէջ ալ մասնաւոր տեղիք մի չեն գրաւած. Եւ եթէ այսօրս առանձին դաս մի կազմած են բնական կալաբարածեն մարմինները, պատճառն յայտնի է. վասն զի չգիտնալով մարմնոց որ շարքին մէջ զանոնք դասաւորել, ըստ իրենց հիմնական յատկութեանց միայն միացուցած են զանոնք. և երթալով քանի որ լաւագոյն կերպով կը ճանչցուին, կը զետեղեն զանոնք իրաբանչւրին յատուկ դասին մէջ։

163. Հրաբիտ (Pyridine) = Բն³ Զ³ Բ. — Հրաբնիտը առաջին անդամ չէ զարացուցին՝ դոնդողտի (gélatine) չոր թորեցմանէն ելած արդիւնքներէն։ Անգոյն հեղա-

նիւթ մէջ, զօրաւոր և անախորժ հոտով, կ'եռայ ՚ի 146օի, և շատ լուծական է ջրոյ մէջ։ Կրնայ յառաջ գալ շատ մը բնական արմատներէ. ինչպէս եթէ ծխախոտի կալաբարածելը, որ է ծխախոտիտ (nicotine) Բն¹⁰ Զ¹⁴ Բ² թթուուտ կեցնելու ըլլանք երկրումատ կալով՝ կու տայ թթուուտ մը Բն⁷ Զ⁵ Բ թթ², այս է թթուուտ ծխախոտական (nicotianique). զոր եթէ թորեցնենք կրով՝ կը կրկնաբաշխի ՚ի թթուուտ բնածխական և ՚ի հրաբնիտ։

$$\text{Բն}^7 \text{ Զ}^5 \text{ Բ } \text{թ}^2 = \text{Բ} \cdot \text{թ}^2 + \text{Բն}^5 \text{ Զ}^5 \text{ Բ}$$

ծխախոտական
բամածխական
թթուուտ

Ինչպէս որ կնդրըկական թթուուտն ալ կը կրկնաբաշխի ՚ի թթուուտ բնածխական և ՚ի կնդրիտ։

$$\text{Բն}^7 \text{ Զ}^6 \text{ թ}^2 = \text{Բ} \cdot \text{թ}^2 + \text{Բն}^6 \text{ Զ}^6$$

կմդրկական
բամածխական
թթուուտ

164. Քինքիմալիպիտ (Quinoléine). — Երբ թորեցնելու ըլլանք քինքինիտը կամ կինոնիտը կալիոնիւ՝ կը կազմեն հեղուկ աղկազմմը, այս է քինքինախւրիտ Բն⁹ Զ⁷ Բ, որ կ'եռայ յ256օի, և թթուուկելով կրնայ յառաջ բերել հրաբիտ։

165. Հակահրիտ (Antipyrine) = Բն¹¹ Զ¹² Բ² Թ. — Հակահրիտը հաստատուն մարմին մէջ, փալիլուն թիթզանց կերպարանքն ունի, և կ'եռայ 143օի։ Զրայ մէջ շատ լուծական է, նոյնպէս նաև ալքոհօլի և կնդրըտի մէջ. իսկ եթերի մէջ քիչ կը լուծուի։ Ի թժկութեան շատ կը գործածուի։

166. Դիմակալ (Ptomaines). — Դասալացի Սէլմի տարրաբանը գտաւ զասոնք 1872ին՝ դիմակներու ստամոքսին մէջ և ընդհանուր անուամբ զասոնք դիմակիալ անուանեց։ Իւղային հեղանիւթք են, անգոյն, սաստիկ կալաբարային՝ թթուուկողք և անկայունք։ Կը վերածեն քրոմական թթուուտը, գլորուկ ոսկոյ և գլորուկ երկաթական։ Ծծմբական թթուուտի ազգեցութեամբ կը

գունաւորին՝ ՚ի կարմիր մանիշակագոյն . կալաքարաձև մարմոց ամենայն հակաղդակին զանոնք կը վայրահոսեն : Արտաքոյ կարգի թունաւոր մարմիններ են և խոյն մահ կը պատճառեն :

167. Պատրաստութիւն կամ եղանակ ստացման կալաքարաձև մարմոց . — կալաքարաձև կը գտնուին բուսոց մէջ՝ վիճակի բաղակցութեան՝ կամ խնձորական (malingue) թթուուտի հետ, կամ ընդ քացախականի, կամ քանի յասուկ թթուուտներու հետ, ինչպէս ընդ մեկոնական թթուուտի (acide méconique), ափիոնի, և կամ աղաղներու հետ :

Այս կալաքարաձև մարմինները գործարանաւոր արմատներէ պատրաստելու համար կան ընդհանուր եղանակներ՝ որք կը տարբերին ըստ որում նոյն արմատքն (base) ցնդականք են կամ թաղուն (flxe) :

Եթէ արմատը ցնդական է՝ այն ատեն կը թորեցնեն զրյուը նատրոնիւ . և յատուկ եղանակաւ մը զայն կը բաժնեն . իսկ եթէ թաղուն է՝ աղցել կու տան բուսոյն վրայ ջրախառն թթուուտ ծծմբական, և ապա կրոյ աղցեցութեամբ կը վայրահոսեցնեն լուծմանէն նոյն արմատը :

168. Խնդամոլիտ (Conicine կամ cicutine) = Բէ⁸ Զ¹⁷ Բ. — կը գտնուի մոլախնդի (ciquoë) ամենայն գործարանացը՝ մանաւանդ իւր պաղոյն մէջ . Անգոյն և իւղային հեղանիւթ մէ՛, ջրէ աւելի թեթև, ցնդական, սաստկահոտ և դառն : Կը թորէ յ210°ի . լրոյ մէջ քիչ լուծական է, իսկ յալքոհ՝ ամենայն համեմատութեամբ կը լուծուի . լուծական է նաև յեթեր :

Իւր լուծմունքը կալաքարային սաստիկ հակաղդեցութիւն մ'ունին : Զօրաւորագոյն թոյններէն մին է . մնալով բացօթեայ կ'այլայի, կը գունաւորի և ռետնային թանձրութիւն մի կ'առնու :

169. Ծխախոտիտ (Nicotine). Բէ¹⁰ Զ¹⁴ Բ². — Ոխախոտք ըստ իրենց ծագման՝ այլ և այլ քանակութեամբ կը բովանդակեն իրենց մէջ այս սկզբանքը : Ծխախոտիտը կը գտնուի ծխախոտի ծուխին մէջ, մանաւանդ այն սաստիկ դառնահամ և դարշահոտ հեղանիւթոյն մէջ որ ծխափող մէջ կը հաւաքի :

Անգոյն հեղանիւթ մ'է, իւղային, թափանցիկ և վազուկ . յրէն աւելի ծանր . բացօթեայ մնալով կը գեղնի, ապա կը սենայ և ապա հուսկ ուրեմն ծծելով զթթուածին կը թանձրանայ : Ջրոյ մէջ շատ լուծական է, նոյնպէս նաև յալքոհ, յեթեր և իսկական իւղերու մէջ . սաստիկ խոնաւաշափական (hygrométrique) ըլլալով կը ծծէ իսկոյն օդոյն խոնաւութիւնը, կ'եռայ յ250°ի . իւր գոլորշիքն սաստիկ զրգուիչ են, և եթէ տեղւոյ մի մէջ նոյն իսկ կաթիլ մ'ալ թափած ըլլայ՝ մարդուս շնչառութիւնը կը դժուարացնէ :

Կալաքարաձեւք ափիոնի

170. Խաշխաշի պատիճներուն թանձր ծուծը՝ որ է ափիոնն, խառնուրդ մէջ մեկոնական (méconique), կաթնական թթուուտներու, ռետնային նիւթոց, խիժերու, բուսական մնացորդաց, և գեռ ուրիշ շատ մը կալաքարաձև մարմոց :

Զգելով զասիկայ ջրոյ մէջ կը թողու իւր լուծական նիւթերէն 50 առ 100 : Ափիոնի կալաքարաձև մարմիններէն զլիսաւոր գործածականներն մորփիտ (morphiné), ափիոնիտ (codeïne) և նարկէիտ (narcéïne) :

171. Մորփիտ (Morphine) = Բէ¹⁷ Զ¹⁹ Բ թ⁵ + Զ² թ . — Պատրաստելու համար կը կտրեն ափիոնը շերտ շերտ և կը ձգեն լրոյ մէջ . յետոյ կը գոլորշիացնեն հեղուկը մինչեւ որ օշարակային թանձրութիւն մի առնու . ելածը՝ ի շերմ վիճակի՝ կը խառնեն փոշիացեալ բնածխատ նատրի հետ : Այսպէսով կ'ունենանք վայրահոսում մի որոյ վրայ աղցել տալով ջրախառն թթուուտ քացախական՝ կը լուծէ իւր մէջ զմորփիտ և ապատ կը թողու զնարկէիտ : Կը մզեն հեղանիւթը, լուծումը կ'անցունեն կենդանական ածխոյ վրայէն և աղաւ աւշակով կը վերայագեցնեն : Մորփիտը կը վայրահոսէ և ալքոհով մէջ բիւրեղանալով կը զտուի :

Մորփիտը կը բիւրեղանայ անգոյն հատուածակողմեան ձեւերով, որք թափանցիկ են, անհոտ և դառնահամ : Լուծական է եռացեալ և առատ ջրոյ մէջ, անլուծական յեթեր, 'ի քլորակերպ, և իսկական իւղոց (huiles essentielles)

tielles) $m\ddot{e}\ddot{l}$. կը լուծուի դարձեալ 13 մասն եռացեալ ալ-քռնի մէջ որ 0,82 խտութիւնն ունենայ, և նուազ լուծա-կան է՝ ի բարկ ալքոհօլ:

Կը բովանդակէ մասնիկ մի չուր բիւրեղացման՝ զոր կը կորսնցունէ՝ ի 1200ի:

172. Ավիտոնիտ (Codéine) = $\text{Բ} \text{հ}^{18} \text{ Զ}^{21} \text{ Բ} \text{ Թ}^5 + \text{Զ}^2 \text{ Թ} \cdot$ — Սիփոնիտը կը հանեն աւշակային մայր լրերէ՝ որք հանգեցուցին զմորփիտ: Այս նպատակաւ կը թանձրացունեն նոյն մայր լրերը և կ'աւելցնեն վրան կալիոն, որ կը վայրահոսեցունէ զափիոնիտ: Վայրահոսումը կը հաւաքեն, կը լուծեն քլորաջրածնական թթուուտի մէջ, կը գունատեն՝ անցունելով կենդանական ածխոյ վրայէն, և նորէն կը վայրահոսեցնեն ափիոնիտը՝ կալիոնիւ: Հուսկ ուրեմն կը լուծեն վայրահոսումը սովորական եթերի մէջ, ուսկից կը սկսի հանգչիլ խոշոր բիւրեղաց կերպարանօք:

Ասոնք հատուածակողմեան բիւրեղներ են և կը բովանդակեն իրենց մէջ մասնիկ մի չուր: Դիւրաւ կը լուծուի եթերի և ալքոհօլի մէջ, քիչ լուծական է՝ ի չուր:

173. Նարկէլիտ (Narcéine) = $\text{Բ} \text{հ}^{22} \text{ Զ}^{29} \text{ Բ} \text{ Թ}^9 \cdot$ — Նար-կէլալ կը պատրաստեն անթիւրեղանալի մայր լրերէն, որոցմէ հանգչած են քլորաջրածնատքն մորփիտի և ափիոնիտի: Այս մայր լրոց վրայ կ'աւելցնեն աւշակ, կը մզեն հեղանիւթը որ կը բովանդակէ իւր մէջ զնարկէիտ. կ'աւելցնեն վրան լուծում մի քայախատի կատարոյ՝ որ կը վայրահոսեցունէ գունաւորիչ նիւթերը: Դարձեալ կը մզեն հեղանիւթը, կը չէղոքացունեն աւշակաւ, և կ'ըսկը-սին տաքցունել մեղմ շերմութեամբ՝ մինչև որ հեղանիւթոյն երեսը նուրբ մաշկ մի կապէ: Հեղանիւթը պաղելով՝ նարկէլալ կը հանգչի. կը զտեն զասիկայ նոր բիւրեղացմամբ:

Մետաքսային սպիտակագոյն մարմին մ'է, և կը բաղկանայ երկայնածայր նուրբ ասեղներէ. պաղ լրոյ մէջ քիչ լուծական է, դիւրաւ կը լուծուի եռացեալ լրոյ և ալքոհօլ մէջ. անլուծական է յեթեր: Կը հալի 920ի, 4400 բարեխառնութեամբ կը դեղնի, և աւելի բարձր շերմութեամբ կը տարրաբաշխի:

Կալաքարաձեւք քինքինի

174. Քինքինները (quinquinas) կը բաղկանան շատ մը կալաքարաձեներէ. ասոնք են քինքինիտ (quinine) և իւր զուգամասունքն (isomères), քինքինիդիտ (qui-nidine) և քինքինիչիտ (quinicine), կինքոնիտ (cinchonidine) և իւր զուգամասունքն, կինքոնիդիտ (cinchonidine) և կինքոնիչիտ (cinchonicine), և այլն:

175. Քինքինիտ (Quinine) = $\text{Բ} \text{հ}^{20} \text{ Զ}^{24} \text{ Բ}^2 \text{ Թ}^2 \cdot$ — Քին-քինիտը չէղոքացուցին բէլութիէ և Քավանդու 1820ին: Քինքինէ (quinquinas) կը պատրաստեն հետևեալ եղանակաւ:

Կը փոշիացնեն քինքինան և կ'եռացնենեն լրով և քլորաջրածնական թթուուտիւ յետոյ կը մզեն, և ապա երկրորդ և երրորդ անգամ ևս կ'եռացնեն մացորդը՝ գեռ աւելի ջրախառն թթուուտ հեղանիւթներով: Այսպէսով կը բաժնուին կալաքարաձեկ՝ ի վիճակի լուծական քլորաջրածնատներու (chlorhydrates). որոց վրայ աւելցնելով կաթն կրոյ, կը վայրահոսեն՝ կազմելով անլուծական բաղակցութիւն մի կրոյ հետ միատեղ: Կը ժողվեն այս վայ-րահոսումը, կը թողուն որ կաթի, կը ճմիեն և կը չորցունեն: Զորնալէ վերջ կը ձգեն եռացեալ ալքոհօլի մէջ որ կը լուծէ կալաքարաձե մարմինները:

Ալքոհական լուծումը բարկցնելով թորեցմամբ՝ կը թողուն հանգչիլ կինքոնիտի (cinchonine) բիւրեղքն. իսկ մայր լրերը կը բովանդակեն իրենց մէջ քինքինիտ: Որպէս զի կարենան բաժնել յետինս՝ նախ և առաջ կը չէղոքացնեն ծծմբական թթուուտիւ, յետոյ կը մերկացունեն ալքոհօլէ: Պաղելով՝ քինքինիտի ծնմբատն կոյտ կոյտ կը հանգչի: Զոտելու համար նորէն կը լուծեն եռացեալ լրոյ մէջ ներկայութեամբ կենդանական ածխոյ:

Քինքինիտը անհոտ մարմին մ'է, դառնահամե՝ ի կապոյտ կը զարձունէ լուաղեղի կարմրացեալ թուղթը: Զրոյ մէջ շատ լուծական է, լուծական է նոյնպէս յեթեր, ի քլորակերպ, խկական և պարարտ իւղոյ մէջ:

176. Քինքինիտի ծծմբատը՝ ի բժշկութեան ամենէն աւելի զործածական զեղերէն մին համարուած է: Առվորաբար չերմի դէմշատ կը գործածուի. գործածական է

միանգամայն ջղային հիւանդութեանց մէջ և այլ զանազան տեսակ տկարութեանց:

Կալաքարածեւք մորմի (strychnos)

177. Բէլլըդիէ և Քավանդու՝ գտան որ մորմի ցեղին զանազան բոյսերը կը բովանդակեն իրենց մէջ երկու տեսակ կալաքարածե մարմիններ, որք են բրուկիտ (brucine) և մորմիտ (strychnine): Այս բոյսերէն են ործացուցիչ ընկոյզը (noix vomique), կեղեն ործացուցչի, բակլայն Սրբոցն իգնատիոնի (fève de Saint-Ignace), օձափայտն (bois de couleuvre), և այլն:

178. Մորմիտ (Strychnine) = Բէ՛տ Զ՛ ԲՌ ԹՌ. — Կան զանազան եղանակներ մորմիտի պատրաստութեան, զուրոնք գասազբիս համառոտութեանը պատճառաւ աւելորդ կը համարինք հոս մէկիկ մէկիկ բացատրել:

Կը բաղկանայ ութանիստ բիւրեղներէ, որք անգոյն են, անհոտ և սաստիկ դառնահամ: Լուծական է առատ ջրոյ մէջ անլուծական յեթեր և պարարտ իւղոց մէջ դիւրալոյժ յեռացեալ և ՚ի սովորական ալքոհոլ, ՚ի քլորակերպն և ցնդական իւղերու մէջ:

Կալաքարածեւք ատրոպի (belladone)

179. Ատրոպիտ (Atropine) = Բէ՛տ ԶՌ ԲՌ ԹՌ. — Ատրոպիտը հանեցին յատրոպէ: 1833ին:

Կը բիւրեղանայ մետաքսեայ ասեղաց կերպարանօք որք անհոտ են, անգոյն, լեզի և դառնահամ: Կը հալի 1430ի, և կը ցնդի ՚ի 1400ի՝ տարրաբաշխելով մեծաւ մասամբ: Ալքոհոլ մէջ շատ լուծական է, կը լուծուի նաև յեթեր և ՚ի ջուր:

ԳՈԼԻԽ ՉՈՐԵՔԾԱՍԱՆԵՐՈՐԴ

ԳՈՍՍԱԿՈՐՈՒԽԵԼԻՔ ՄԱՐՄԻՆՔ — ՍՊԻՏԱԿԵՐՊ ՆԻՒԹԵՐ

չակասերմիտ, մատմետմկիտ. — Սպիտակերպ միւթք. սպիտ, պամբիտ, մետրդիտ. — Սոսմծածիր միւթեր. ոսկըտ, դոմդողիտ:

180. չակասերմիտ (Santonine) = Բէ՛տ ԶՌ ԹՌ. — Զեղոք մարմին մ'է որ կը բիւրեղանայ անգոյն հատուածակողմեան ձևերով. անհամէ, քիչ լուծական ՚ի ջուր, լուծական յոյժ յալքոհոլ. կը հալի 1700ի և լուսոյ ազգեցութեամբ ՚ի կարմիր կը գունաւորի: Ծծմբական թթուուար կը լուծէ զայն գունաւորւելով ՚ի կարմիր:

Այս մարմինն շատ գործածական է իբր ձեհալած. և որովհետեւ անհամէ, այն պատճառաւ ալ միւս դեղերէ աւելի վերադաս կը համարուի տղայոց մատակարարելու համար:

181. Մասոնիտնիկիտ (Digitaline). — Կ'ելլէ մատնետնէկէ (digitale). անբիւրեղացեալ մանմին մ'է ձեան տարափոյ նման սպիտակ, լուծական ՚ի ջուր և յալքոհոլ, անհոտ և սաստիկ գառնահամ: Զօրաւոր թոյներեն մինէ, գործածական է ՚ի բժշկութեան՝ սրտի հիւանդութեանց դէմ:

182. Սպիտակերպ միւթք (Matières albuminoides). — Այս անուան տակ հաւաքուած են խումբ մը բորակածնեալ նիւթերու՝ որք կը բովանդակիտն բնածուկի, զրածին, թթուածին, բորակածին և ծծումբ. ամէնքն ալ հասարակաց յատկութիւններ ունին, իրենց հարբորդական բաղադրութիւնքն գրեթէ նոյն են, կը մերձենան սպիտի՝ իրենց բնաբանա-տարրաբանական և բնախօսական (physiologique) յատկութեամբ:

Սպիտակերպ հիւթք հասաւատուն և անկերպարան մարմիններ են, բաց ՚ի արենագնդակիտէ (hémoglobiné) որ բիւրեղացեալ է. անհոտ են և տկար մահ մ'ունին: Անլուծականք են յալքոհոլ, յեթեր և գործարանաւոր ծագումն ունեցող ամենայն չշղոք հեղանիւթոց մէջ: Զրոյ մէջ լուծականութիւննին փոփոխական է:

Զերմութեամբ կ'ուռին և տարրաբաշխելով կու տանշատ մը արդիւնքներ՝ այսպէս թթուռուտ բնածխական, աշակ, բաղադրեալ աւշակներ, ջրաբնածխուկը, թթուռածնեալ արդիւնքներ, և կը մնայ զանգուած մի ածխոյ՝ որ կը բովանդակէ առատ բորակածին։

Լուծականք են՝ ի ցրութեան այրեցական կալոյ մէջ։ Կը տարրաբաշխին՝ բարկ և եռացեալ կալաբարային լուծամանց ազդեցութեամբ՝ տալով իբր գլխաւոր արդիւնքներ՝ թթուռուտ մրջնական, թթուռուտ բնածխական, քաղցրասինձ (glycocolle), լոնիտ (leucine), կալաբարային ծծմբուկ մը, և այլն։

Փլորաջրածնական թթուռուտը կը լուծէ զանոնք և կը գունաւորէ՝ ի կապոյտ կամ՝ ի մանիշակագոյն։ Բորակականն թթուռուտը կը գունաւորէ՝ ի դեղին՝ որ ազդեցութեամբ աւշակի կ'ըլլայ նարնջագոյն։

Սպիտակերպ նիւթերը խմորմամբ կը նեխին և կ'եղծանին։

183. Սոլիլ (Albumine). — Սպիտը երկու վիճակով մեզ կը ներկայանայ. մին՝ ի վիճակի լուծման, ինչահէս հաւկթի ճերմկուցին մէջ, միւսը մակարդած՝ չերմութեան ազդեցութեամբ։ Կը գտնուի՝ ի գործարանս եղող գրեթէ ամենայն հիւթոց մէջ ինչպէս յաւին,՝ ի մամաց (chyle), յարենաշին, և այլն. սակայն այս հիւթոց մէջ սպիտը խառըն է ընդ կալաբարաց կամ հանքային աղերու հետ։

Կայ դարձեալ՝ լուծական և անլուծական սպիտ։ Լուծական սպիտը թափանցիկ կոյտ մ'է, անկերպարան, անհոտ և անգոյն. իւր լուծումը կը սուտորի՝ ի 60°ի և կը մակարդի 75°ի։ Բարկ ալքոհօլ, անիխտ, մասպահ (creosote), հանքային բարկ թթուռուտներ զայն կը մակարդեն։

Մակարդած սպիտը անլուծական է ջրոյ մէջ, սակայն քլորաջրածնական թթուռուտը զայն կը լուծէ՝ փոխարկելով նոր գոյացութեան մը։ Կալաբարաց հետ կը բաղակցի, և մանաւառնդ կշռունիկ (baryte), կիր, ստրոնտիան (strontiane) միանալով ասոր հետ կը կազմեն անլուծական բաղակցութիւններ՝ որք մնալով բացօթեայ իսկոյն կը պնդանան. այս պատճառաւ գործատանց մէջ կը պա-

տրաստեն խառնուրդ մը կրոյ և հաւկթի ճերմկուցի՝ որք միանալով կու տան կարծր և դիմացկուն ծեփ մը։

184. Պամրիտ (Caséine). — Կաթի մէջ լուծուած կը գտնուի. ազդեցութեամբ զանազան ազդակաց՝ կը բաժնեն անկից՝ ի հաստատուն վիճակի։

Բաղակցութիւն մի է սպիտի և կալաբարի. ոչ հոտ ունի և ոչ համ. սպիտակ և անկերպարան մարմին մ'է, լուծական յոյժ կալաբարաց մէջ,՝ ի կալաբարային բնածխատու,՝ ի քլորաջրածնատն աւշակի, և այլն։

Ուեղիստը (Légitmine) որ բուսոց մէջ կը գտնուի՝ պանրիտի հակաղդեցութիւնքն ունի. այս պատճառաւ կ'ըստի միանգամայն բուսական պանրիտ։

185. Սոլիլ (Peptone). — Սպիտակերպ նիւթերը ընդերահոյզի (suc gastrique) լուծիչ ազդեցութիւնը կրելէ վերջ կը փոխարկին՝ պեպտոն։ Սպիտակ և անկերպարան մարմին մ'է, լուծական՝ ի ջուր, անլուծական բարկ ալքոհոլ մէջ։ Զերմութեամբ չի տարրաբաշխիր, ազդեցութեամբ բարկ ալքոլի՝ ճեան տարրափներու նման կը վայրահոսէ, և այս վայրահոսումը վերստին դիւրաւ կը լուծուի ջրոյ մէջ։

186. Նեարղիտ (Fibrine). — Սրիւնը երակներէ ելաշը վերջ կը մակարդի և գրեթէ գոնդողային զանգուածոյ կերպարանք մի կ'առնու. մզելով արենաշինը՝ կը կծկի, և կը բաղկանայ առածգական թելերու խուրձէ մը։ Սրեան մակարդելու պատճառն այս թելերն են որք նեարղիտ կ'ըստին։ Եթէ փոքրիկ և նուրբ գաւաղանիկներով ծեծենք արիւնը, նեարդիտի թելերը գաւաղանաց կը յարին և արիւնը չի մակարդիր։

Գորացնելով նեարդիտը կը պնդանայ և կը կարծրանայ. ջրոյ մէջ ձգելով չոր նեարդիտը՝ նորէն իւր առաջի տեսքը և կշիռն կ'առնու. Անլուծական է՝ ի ջուր, լուծական է այրեցական կալաբարներու և աւշակի մէջ, և այլն։

Նեարդիտի կարեսոր յատկութիւններէն մին է իւր ունեցած ազդեցութիւնը թթուածնեալ ջրոյ վրայ, զոր կը տարրաբաշինէ մի միայն ներկայութեամբն. սակայն տաքցունելով 720° բարեխառնուութեամբ՝ կը կորսնցունէ իւր ունեցած այս յատկութիւնը,

187. Ոսկըլիտ (Osséine). — Ոսկըլիտը կը փոխարկի

'ի գոնդողիտ՝ եռացնելով ջրոյ հետ։ Կը պատրաստեն՝ աղցել տալով ոսկերաց վրայ թթուուտ քլորաջրածնական։ Կակուղ, առաձգական գոյացութիւն մ'է՝ որ ոսկեր ձեւ կը պահէ։ Թողլով լնքն իրեն՝ շուտով կը նեխի, սակայն բաղացելով աղաղի (tannin) կամ ուրիշ քանի մի մետաղական աղերու հետ՝ կը մնայ անփուտ, Այս սկզբան վրայ հիմուած է խաղախորդութեան (tannage) արեւեստ։

188. Դոմոլոյիտ (Gélatine). — Այն ամենայն նիւթեր որը կը բովանդակեն իրենց մէջ ոսկրիտ, եթէ երկար ատեն ջրով եռալու ըլլամն՝ կու տան լուծում մի որ պաղելով կը սառի. այս է գոնդողիտ։

Չոր գոնդողիտը անգոյն է կամ գեղնագոյն, թափանցիկ, ապակենման, կարծր, անհոտ, յստակ, անյլայլ օգոյ առջև, որ պաղ ջրոյ մէջ կ'ուսուի և չերմ ջրոյ մէջ կը լուծուի։ Ջրոյ հետ երկար ատեն եռալով կ'այլափոխի և պաղելով չի սառիր։

Սրուեստից մէջ այս նիւթէս սահմա կը պատրաստեն. ասով կը շինեն սոսինձը (colle forte), Ամենէն աւելի զրու գոնդողիտը՝ ձկան սոսինձն է (colle de poisson)։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԿԵՆԴԱԿԱԾԱ ԿԱԶՄՈՒԱԾՈՑ ՄԷՋ ԳՏԱՌՈՂ, ՀԵՎՈՒԿԱՆԵՐՆ

Տողուկ. — Ստամոքահոյզ. — Մսահոյզ. — Մաղճ, մաղծիտ. — Արիմ. — Մէջ. — Կաթ։

189. Տողուկ (Salive). — Տողուկը՝ բերանային խոռոչն թացող հեղուկն է. զանազան տեսակ յատկութիւնք ունեցող տողկաց իրարու հետ խառնուելէն կը ձևանայ։

Խառն տողուկը անգոյն հեղանիւթ մ'է, դիւրաւ կը փրփրայ, թեթև կալաքարային հակազդեցութիւն մ'ու-

նի. իւր մէջ 5-6 մասն առ 100 կը բովանդակէ հաստատուն մարմիններ, որք կազմուած են զլիսաւորաբար քլորուկ կալիէ և նառիէ և գործարանաւոր նիւթերէ, որոց մէջ կը գտնուի միանգամայն խուխիտ (ptyaline) կամ տողկային տիտաղ (diastase)։

Խուխիտը լուծական խմոր մ'է նման տիտաղի, անկերպարան մարմին մ'է, անլուծական յալքոհլ, և իւր ջրային լուծումը կը փոխարիէ խոկոյն զօսլան (amidon) ՚ի քաղցրանիւթ (glucose)։ Ծասքման ժամանակ օսլայացեալ (amylacé) նիւթերը կը շաղուին տողկաւ, և խուխիտի աղցեցութեամբ կը սկսի օսլայի մարսողութիւնը՝ որ կը փոխարիէ ՚ի քաղցրանիւթ։ Շունը որ մասկեր կենդանի մ'է և օսլայացեալ նիւթերով չի սնանիր, իւր տողուկն ևս խուխիտ չի բովանդակեր։

Տողկաց մէջ կը գտնուի միանգամայն քիչ քանակութեամբ միզիտ (urée) և ծծմբախաժուկ կալոյ (sulfocyanure de potassium)։

190. Ստամոքահոյզ (Suc gastrique). — Ստամոքահոյզ հոյզը՝ ստամոքային մարսողութեան զլիսաւոր աղդակին է. ստամոքսի լորձնաթաղանթին վրայ գտնուող փոքրիկ գեղձերէ (glandes) կը բաժնուի։

Ստամոքահոյզը վաղուկ հեղուկ մ'է, գրեթէ անգոյն և թթուահամ. սաստիկ թթուուտ հակազդեցութիւն մ'ունի. իւր թթուուտութեան պատճառը՝ քլորաջրածնական թթուուտն է. մարսողութեան միջոց կը ձևանայ միանգամայն կաթնական թթուուտ։

Ասոնցմէ զատ, ստամոքահոյզը կը բովանդակէ միանգամայն լուծական խմոր (ferment) մլ. այս է պեպտիտ (pepsine)՝ զլիսաւոր աղդակն ստամոքային մարսողութեան. Սոյն աղդակին աղցեցութեամբն՝ սպիտակերպ նիւթերը կը լուծուին և կը փոխարիէն ՚ի պեպտոն (peptone). սակայն այս փոխակերպութիւնը տկար թթուուտներու ներկայութեամբն միայն կը կատարուի. ՚ի չշղոք լուծման՝ բնաւ աղցեցութիւն մի չունենար։

Պեպտիտը ջրոյ մէջ լուծական և ալքոհոլի մէջ անլուծական խմոր մ'է, և անկերպարան վիճակ մ'ունի։ Ստամոքահոյզէն կրնայ պատրաստուիլ. ներկայութեամբ ներդիտի և ամենաքիչ քանակութեամբ քլորաջրածնա-

կամ թթուուտ բովանդակող ջրոյ՝ կը լուծէ դիւրութեամբ զնեարդիտ և կը փոխարկէ ՚ի պեպտոն. արուեստական մարսողութիւն ըստածնին այս կերպով կատարել կու տան:

191. Մասհոյց (Suc pancréatique). — Մասնը (pancréas) բովայնի մէջ զետեղուած խոշոր գեղձ մ'է որ ան լատելով հիւթ մը՝ կը հեղու ընդերաց մէջ և մարսողութեան մեծապէս կ'օգնէ: Մասհոյզը շարունակեալ կերպով չի ժորեր. կը սկսի կերպակրէ վերջ և երթալով կամաց կամաց կ'աճի, յետոյ կը նուազի և հուսկ ուրեմն կը դադրի:

Անդոյն հեղանիւթ մ'է, թանձր, կաթիլ կաթիլ վազող, և կալաքարային հակազդեցութեամբ: Կը բովանդակէ իւր մէջ զանազան խորիներ:

Մարսողութեան մեծապէս ծառայող հակազդակաց մինէ. վասն զի կ'ազդէ ամենայն տեսակ կերպակրոց վրայ, ինչպէս՝ պարարտ մարմոց, օսլայացեալ (amylace) և սպիտակերպ (albuminoïde) նիւթոց:

Սուան և իւր համասեռքն (congénère) ազդեցութեամբ տողկային հիւթոյ և մասհոյզի՝ կը փոխարկին ՚ի քաղցրանիւթ (glucose). պարարտ նիւթերն ազդեցութեամբ մասհոյզի կը փոխարկին պարարտ թթուուտներու և քաղցրիտ (glycérine). հուսկ ուրեմն սպիտակերպ նիւթք՝ ազդեցութեամբ ստամոքահոյզի և մասհոյզի կ'ըւլւան պեպտոնք:

Այս զանազան նիւթերը արիսնէն կ'ելլեն և կը վերանորեգեն մէր հիւսուածները, և իրենց թթուուլկացմամբն գործարանաց մէջ՝ չերմութիւն կը պատճառեն որ աղբիւրէ զօրութեան և կենաց: Թթուուլկացման արգիւնքներն են թթուուտ բնածխական, հաստատոն նիւթեր, միզական թթուուտ և մանաւանդ միզիտ (urée) որ միզէն կ'ելլէ: Կան դեռ ուրիշ արդիւնքներ ալ որք անիւրացմամբ (désassimilation) կը մնան մկանց և քսնի մի գեղձերու մէջ, ինչպէս լսնիտ (léucine), և այլն, և որ կամաց կամաց կը ձգուին ամբողջապէս միզէ կամ կղկղանքներէ:

192. Մաղղ (Bile). — Մաղձը լեարդէն կ'անջատի. կը հաւաքի մաղձընկալ փամփշտին (vésicule biliaire) մէջ և անկից կը ծորէ ընդերաց մէջ: Յատուկ և թխա-

գոյն հեղուկ մ'է, սաստիկ դառնահամե մարսողութեան մեծապէս կ'օգնէ: Կը բաղկանայ շատ մը թթուուտներէ, պարարտ նիւթերէ, քիչ մը միզիտէ (urée), հանքային աղերէ, և բիւրեղանալի նիւթէ մը որ է մաղձիտ (cholestérine):

193. Մաղղիտ (Cholestérine) = $\beta\text{C}^{26}\text{O}^4\text{H} + \text{O}^2\text{H}$. Այս գոյացութիւնը որ մաղձային մրուրին (calculs biliaires) մեծամասնութիւնը կը կազմէ՝ կը գտնուի մաղձին մէջ, յուղեղն, յարենաշիճն և արեան գնդակներու մէջ:

Կը պատրաստեն զայն մաղձային մրուրներէ՝ փոխացնելով և թողլով եռացեալ ալքոհոլի մէջ. մաղձիւը կը բաժնուի փալիլուն թիթղանց կերպարանօք որք անգոյն են, անհոտ և հալականք 137°ի: Զրէ աւելի թեթև է և անլուծական անոր մէջ:

194. Արիւմ. — Արիւնը չնչերակաց և երակաց մէջ շրջան ընող հեղուկն է: Կարմրագոյն է յողնաւորս (vêterbré), գիմահար, աղային թեթև համ մ'ունի և կալաքարային հակազդեցութիւն մը:

Կը բաղկանայ փոքրիկ գնդակներէ որք ցրուած են արենազոր (plasma) ըսուած անգոյն հեղանիւթոյ մի մէջ: Արենազնակը երկու տեսակը են. ոմանք կարմրագոյն, այլք սպիտակ: Կարմրագոյնք կը գտնուին ՚ի մարգս և բոլոր ստնաւոր (mammifère) կենդանեաց մէջ, րոլորաձեն, բազմաթիւ զրեթէ 500 000 չափ հազարորդամեդր խորանարդ մը արեան մէջ:

Երակներէ ելած արիւնը կը թանձրանայ և երկու մասն կը բաժնուի. մին կ'ըսուի մակարդ արեան (caillot) որ իւր մէջ կը բովանդակէ նեարդիտ, և թանձրանալով իրեն կը ձգէ արեան մէջ գտնուող կարմիր և սպիտակ գնդակներն. միւսն է արենաշիճ (serum), անգոյն հեղուկ մը որոյ մէջն է արենաշրոյն (plasma) զրեթէ ամենայն տարերքն:

195. Կաթն. — Կաթը որ կ'ելլէ ստնաւոր կենդանաց (mammifère) է գերուն ստնարեր գեղձերէն, և կը ծառայէ կենդանացն սննդեան իւր կենացը նախակին տարիներուն մէջ:

Սպիտակ հեղանիւթոյ մը տեսքն ունի, գիմահար է, շաքարահամե ջրէ աւելի խիտ:

Կը բաղկանայ պանրիտը (caséine), սպիտէ, կաթնանիթէ (lactose), և հանքային աղերէ որք կը բովանդակեն իրենց մէջ առ կախ կեցած պարարտ նիւթոյ մի գընդակներն, և երբ կաթը ծեծելու ըլլանք՝ սառնք կը միանան և կը կազմեն զկորագ:

Ոչխարի կաթը միւս կենդանեաց կաթերէն ամենէն աւելի առատ պանրիտ և կարագ իւր մէջ կը բովանդակէ:

Երբ թողունք կաթը զով տեղոյ մի մէջ երկու կարգ կը բաժնուի. մին աւելի թեթև է, գեղնագոյն, իւղային որ կ'ըսուի սեր. իսկ ստորինը սպիտակ կապտագոյն հեղուկ մ'է, և առջինէն աւելի խիտ:

Ինչափ որ ընտիր տեսակ ըլլայ կաթը այնչափ ալ առատ սեր կ'ունենայ. այս սերը կը բաղկանայ պարարտ նիթէն՝ խառն ընդ պանրըտի (caséine) և ջրոյ:

Անջուր կարագը կը բաղկանայ 77 առ 100 պարարտ նիթերէ. մասցորդը է կաթնաշիճ և պանրիտ՝ որք թէ և ախորժելի համ մի կու տան կարագին սակայն աւելի շուտ ալ զայն կը ծթուեցնեն: Անոր համար որպէս զի կարագն կարենայ դիմանալ՝ կամ կը հալեցնեն զայն և կամ լաւ մը կ'աղեն:

Կաթէն կարագը բաժնելէ վերջ կը մնայ դիմաւորաբար պանրիտը. զանիկայ ևս կը բաժնեն խախացով: Անցածը կաթնաշիճն (sérum) է՝ ուսկից կը հանեն կաթնանիթ (lactose) կամ շաքար կաթին ըսուածը:

Տաքունելով կաթը՝ իւր երեսին վրայ անլուծական մաշկ մի կը կապէ պանրըտի: Բայտ բարեխառնութեան մնալով բացօթեայ քիչ մը ժամանակ՝ կը մակարդի. պատճառը՝ շուքարի կաթին կաթնական խմորման երթարկուին է, և մի և նոյն ժամանակ կաթնական թթուուտ ձեւանալը՝ որ պատճառ կ'ըլլայ պանրըտի բաժնուելուն:


Կաթը ենթակայ ըլլալով գիւրաւ այլայլելու յամառնային չերմութեան՝ իւր պահպանութիւնն ալ դժուարին է. անոր համար կամ չոյն և կամ սառի մէջ կը պահն:

Երկրնածխատ նատրին (bicarbonate de soude) իւր այս այլայլութիւն կ'արգելու՝ զէզոքացնելով ձեւացած

կաթնական թթուուտը: Սակայն այս միջոցս ալ ունի իւր անպատեհութիւնքն՝ երբ նոյն կաթը տղայոց սնընդեան ծառայելու սահմանուած է:

Հուսկ ուրեմն իւր փոխադրութիւնը դիւրացնելու համար զայն կը խտացնեն և սերոս զանգուածի մը կը փոխարկեն: Գործածելու համար բաւական է լուծել անկից ջրոյ մէջ և խմել:

ՎԵՐՋ



ՑՈՒՑԱԿ Բ. ՀԱՏՈՐՈՅ

ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ

Գործարանաւոր բաղադրութիւնք	էջ	5
Հետէականութիւն		6
Համաբնութիւն		10
Վերլուծութիւն գործարանաւոր		11
Որոշումն մասնիկան		17
Զուգամասնութիւն		18

ԳԼՈՒԽ Ա.

ԱՆՈՒՄԱՆՈՉՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԱՐԱԿԱՆՈՒԹ ՏԱՐՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ	
Ալքոհոլ	19
Միազկազմ թթուուոք	"
Պարզ եթերք	20
Բաղադրեալ եթերք	"
Ալքոհօք	"
Բաղադրեալ աւշակք կամաւշակուոք	"

ԳԼՈՒԽ Բ.

ՏԱԳԵԱԼ, ԶՐԱԲՆՍԴԻՈՒԿՔ . — ՄԵԴԻԼԱԾՆԱԿԱՆ ԱԼՔՈՀ, ԵՒ ԻՐՄԵ ՑԱՌԱՋ ԵԿԱԾ ՄԱՐՄԻՆԹՔ	
Յագեալ ջրաբնածխուկք	21
Քարիւղ	22
Զրածնուկ մեղիլածնի կամ մօրից կալ	25
Մեղիլածնական ալքոհօլ	27

Յոթուուկ մեղիլածնի	27
Քլորակերպ	"

ԳԼՈՒԽ Գ.

Եթեալանական ԱԼՔՈՀ, ԱԹԵԱԼ	
Զրածնուկ եթիլածնի	29
Ալքոհօլ	"
Խմորեալ ըմպելիք . — Գինի	35
Օլիք	36
Գարեչուր	"
Ալքոհօլաչափութիւն	37

ԳԼՈՒԽ Դ.

ԱԹԵԱԼԱՆԱԿԱՆ ԵԹԵԹԲ. — ԱԼՔՈՀ. — ԳՈՐԾԱՐԱՆԱՄԵՏԱՆ
ԳԱԿԱՆ ԱՐՄԱՏՔ

Սովորական եթեր	38
Մանշուկ եթիլածնի	42
Ալքոհօլ	"
Ալքոհօլամիլածնական կամ ջրասա ամիլածնի	43
Եկղելածնական ալքոհօլ	"
Եփթիլածնական	"
Կիտածնական ալքոհօլ կամ եթալ	44
Ոպիտակուց կիտի	"
Մոլք	45
Գործարանամետազական բաղադրութիւնք	47

ԳԼՈՒԽ Ե.

ՄԻԱՀԻԿԵԱԿԱՆ ԱԼՔՈՀԱՆԵՐՈՒ ԹԹՈՒՈՒԿԱՑՄԱՆ ՑԱՌԱՋ
ԵԿԱԾ ՄԱՐՄԻՆՔ . — ՄԻԱՀԻԱԶՄԱՆ ԹԹՈՒՈՒՏՔ

Քլորակ	48
Քացախսն	49
Միազկազմային թթուուոք	"
Մընական թթուուուտ	50
Քացախսկան թթուուուտ	52

Քացախ	52
Քացախատք.	54
Եթեր քացախական կամ քացախատ եթիլածնի	55
Պարարտ թթուուուտք	"
Ցուցակ պարարտ թթուուուտից	56
Կոդեկան թթուուուտ	57
Մըուանական	»	"
Այժմենական	»	"
Ասրդիական	»	"
Աշկական	»	"
Արմառական	»	"
Մարդարական	»	"
Ճարպական	»	"

ԳԼՈՒԽ Զ.

ՊԱՐՄԱՐՏ ԹԹՈՒՈՒՏՆԵՐԸ ՅԱՌԱՋ ՆԿՈՂ ՄԱՐՄԻՆՔ
Պարարտ թթուուուտներէ յառաջ եկող ամիդեալ մարմինք	58
Քաղցրասինձ	60
Զիամիզական թթուուուտ	"
Մաեղինիս	"
Համարունիք քաղցրասինձի	"
Ալանիս	61
Լանիս	62
Ամիդք	"

ԳԼՈՒԽ Է.

ԲԱԴԱԴՐՈՒԹԻՒՆՔ ԽԱԺԱՌԻ

Խաժածին	63
Խաժաջրածնական կամ բրուսական թթուուուտ	65
Մետաղական խաժուկք	66
Խաժուկ մնդկի	67
Երկաթախաժուկք	"
Երկաթախաժուկ կալոյ կամ բրուսատ կալոյ	"
Երկաթախաժուկք երկաթական	68

Երկաթիխաժուկք.	68
Երկաթիխաժուկ կալոյ	69
Շանթակատք	70

ԳԼՈՒԽ Ը.

ԵՐԿԴԻԽԵԱԿԱՆ ԶՐԱԲՐԱՄԹԻՈՒՆՔ. — ԱԼՔԱԴՐԻՏՏՔ
Ջրաբնածիուկք	72
Եթիլածնակ	74
Կազ լուսաւորութեան	"
Համարունիք եթիլածնակի	75
Ալքաղցրիտք	"

ԳԼՈՒԽ Թ.

ԱԼՔԱԴՐԻՏՏՔ ՏՆԵՐԸ ՅԱՌԱՋ ԵԿՈՂ ԹԹՈՒՈՒՏՔ
Թթուուուտ բնածիական	77
Թթուուուկ բնածիոյ	79
Ծծմբուկ բնածիոյ	80
Միջիա	81
Մսիս	82
Կաթնական թթուուուտք	83
Սոլորական կաթնական թթուուուտ	"
Եթիլածնակաթնական թթուուուտ	84
Երկաղկաղմային թթուուուտք	"
Թրթնչական թթուուուտ	85
Ամժական թթուուուտ	87

ԳԼՈՒԽ Ժ.

ԵՐԿԴԻԽԵԱԿԱՆ ԱԼՔՈՀԼԻՔ. — ՔԱՂՑԲԻՏՔ. — ԲԱԶԱՄԴ
ԿԱԶՄԱՑԻՆ ԹԹՈՒՈՒՏՔ
Քաղցրիս	88
Օճառք	89
Ճարպական մունք	90
Եթերք քաղցրըսի	91
Պարարտ մարմինք	93

Բորակաբաղբիտ	94
Խւզական թթուուուտ	95
Խնձորական »	»
Գինեմրբական »	»
Գինեմրբատք	96
Ործացուցիչք	»
Կլարական թթուուուտ	97
Միզական թթուուուտ	»
Սրճիտ	98

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՎԵՑՀԻՒԵԱԿԱՆ ԱԼՔՈՆԴԻՔ . — ԶՐԱՏՔ ԲՆՈՎՈՈՑ

Վեցհիւէական ալքոնդիք	98
Գաղպէնիտ	99
Բաղցրանիւթ	»
Սովորական քաղցրանիւթ	100
Շաքարանիւթք	102
Շաքար եղեգան կամ ճակնդեղաց	»
Կաթնանիւթ կամ շաքար կաթին	104
Օսլայացէալնիւթք	105
Օսլայ	»
Աջիտ	107
Խորշանիւթ	»

ԳԼՈՒԽ ԺԲ.

ԽՆԿԱԲԵՐ ԲԱՂԱՌՈՒԹԻՒՆՔ

Խնկաբէր բաղարդրութիւնք	109
Կնդրիտ	»
Բորակաբաղբիտ	110
Անդիտ	»
Կազմակերպութիւն կնդրըտի	112
Փենական թթուուուտ կամ փենուլ	113
Լեզական թթուուուտ	114
Թոլուակ	115

Ալքոնդիտ կնդրըտկան կամ ջրածնուկ կնդրըտկածնի	116
Կնդրըտկան թթուուուտ	117
Ուռենական »	118
Ուռենիտ	119
Գլթորական թթուուուտ	»
Ալզալ	120
Լեզակ	121
Փափուըք	123
Խակութիւն բեւելինոյ	126
Կանթարիտ	127
Նաւթիտ	128
Ածխացակ)

ԳԼՈՒԽ ԺԳ.

ԲՆԱԿԱՆ ԿԱԼԱԲՐՈՒՋԵՒԻՔ . — ՀՐԱԲՈՒԱԿԱՆ ՇԱՐՔ

Բնական կալաբրաձեք	129
Կալմութիւն կալաբրաձեւ մարմնոյ	130
Հրաբնիտ)
Հակահրիտ	131
Դիսկիտ)
Պատրաստութիւն կամ եղանակ ստացման կալաբրաձեւ մարմնոյ	132
Խնդամնլիտ)
Ծխախոսիտ)

ԿԱԼԱԲՐՈՒՋԵՒԻՔ ԱՓԵՐՆԻ

Մորմիտ	133
Ափիոնիտ	134
Նարկէիտ)

ԿԱԼԱԲՐՈՒՋԵՒԻՔ ԲԲՆՔԻՆԻ

Քինքինիտ	135
--------------------	-----

Գլուխ ԺԴ.

ԳԱՅՈՒՄԻՈՐՈՒԽԵԼԻՔ ՄԱՐՄԻՆՅ. — ՍՊԻՏԱԿԵՐՊ ՆԻՒԹԻՔ

Հակասերմիս	137
Մասնեանկիս	»
Սպիտակերպ նիւթք	»
Սպիս	138
Պանդիս	139
Պեղառն	»
Նեարդիս	»
Ոսկիս	»
Դոնդողիս	140

ԳԼՈՒԽ ԺԵ.

ԿԵՆԴԱԿԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄՆՈՑ ՄԵԶ ԳՏՆՈՒՈՂ, ՀԵՂՈՒԿՆԵՐՆ

Տողուկ	140
Ստամբահոյզ	141
Մասհոյզ	142
Մաղձ	»
Մաղձիս	143
Արին	»
Կաթն.	»

ՑՈՒՑԱԿ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՈՈՒՑ


ՊԱԿԱՍԵԼՈՑ ԴԱՍԱԳՐՈՑՍ Ա. ՀԱՏՈՐՈՑՆ

ԱՌԱՋԻՆ	ՄԱՍԻՆ	ՄԱՍԻՆ
Ածխաքար	Anthracite	
Ական	Agate	
Ամացում	Décantation	
Անգործարանաւոր	Inorganique	
Անկերպարսն	Amorphe	
Անուանակոչութիւն	Nomenclature	
Անջուր լուսածնական	Anhydride phosphorique	
Արքայաջուր	Eau régale	
Արևակն	Opale	
Աւշակ	Ammoniac	
Աւշակածին	Ammonium	
Բաղաբրութիւն	Composition	
Բարսկցութիւն	Combinaison	
Բատուեան արտասառք	Larmes bataviques	
Բիւեղացում	Cristallisation	
Բնաբանական երևոյ Դ	Phénomène physique	
Գայլսաղ	Silice	
« հրահան	Pierre à fusil	
Գաւարպ	Quartz	
« ամեղեսիկ	améthyste	
« մրաներկ	enfumé	
Գոլորչիացում	Evaporation	
Գործարանաւոր	Organique	
Դեռ անլոյժ մարմինք	Corps indécomposés	
Դրութիւն տարածոչափական	Méthode volumétrique	
Ենթաբորակատ բիսմութի	Sous-azotate de bismuth	

Երդարան տարրաբանական	Harmonica chimique
Երկթթուռկի բորակածնի	Bioxyde d'azote
Զինկ - էղիլ	Zinc-éthyle
Թթուռեալ ջուր	Eau oxygénée
Թթուռեկաջրածնական եղեց	Chalumeau à gas oxy-hydrique
Թռուտ բնաժիշտական	Acide carbonique
» բորակական	„ azotique
» գայլիստաղական	„ silicique
» երկաղղաղմային	„ bibasique
» զառիկական	„ arsénique
» զառիկային	„ arsénieux
» ժահնաջրածնական	„ bromhydrique
» լուսածնական	„ phosphorique
» ծծմբական	„ sulfurique
» ծծմբաջրածնական	„ sulfhydrique
» ծծմբական ծխաշունչ	„ sulfurique fumant
» ծորինաջրածնական	„ fluorhydrique
» մանիչաջրածնական	„ iodhydrique
» մեղղաղմային	„ monobasique
» ոսկեբորական	„ borique
» բլորաջրածնական	„ chlorhydrhique
Թորեցումն	Distillation
Խոկոթին լեղի նշոյ	Essence d'amandes amères
Լուծումն	Solution
Լուսածնեալ ջրածին	Hydrogène phosphoré
Խառնուրդ	Mélange
Ծարիբեալ ջրածին	Hydrogène arsénié
Ծորնուկ գայլիստաղնի	Fluorure de silicium
Կալաբրային օդ	Air alcalin
Կակուլ ծծուրի	Soufré mou
Կայդերաքար	Geysérite
Կենդանական ածուխ	Carbon animal
Կիզումն	Combustion
Կողբառ	Benzine
Կըլու հիւլէական	Poids atomiques
» մասնիկական	„ moléculaires
Կողի ժարդոյ	Beurre d'antimoine
Կոսիք	Grès
Հալումն	Fusion

Համազօր	Equivalent
Համեմատական մասնակամթիւք	Nombres proportionn les
Համաժուռի	Houille
Հիւլէ	Atome
Հիւլէական ահառթիւն	Théorie atomique
Հրակիզումն	Calcination
Ջիւթ	Goudron
Մասնիկ	Molécule
Մհամադ	Métal
» երկհիւլէական	„ biatomique
» միահիւլէական	„ monoatomique
Մետաղակերպ	Métalloïde
Մդումն	Filtration
Միսպիկէլ	Mispikel
Մուր	Noir de fumée
Յարակցութիւն	Affinité
Յարամերձութիւն	Cohérence
Նախաթթուռեկ բորակածնի	Protoxyde d'azote
Նշնացցց	Formule
» բաղադրութեան	„ de composition
» կաղմակերպութեան	„ de constitution
Նարացարութիւն	Synthèse
Պարզաչափ	Eudiomètre
Պալաքար ստորին	Stalagmite
» վերին	Stalactite
Ուռն	Ozone
Որդան հանքային	Kermès minéral
Ուրուաքար	Graphite
Ջուր երկաթախառն	Eau ferrugineuse
» թթւռուտացեալ	„ acidule
» ժահնուկեալ	„ iodurée
» ծծմբային	„ sulfureuse
» ծծմբառեալ	„ sulfatée
» կալաբրային	„ alkaline
» բլորուկեալ	„ chlorurée
Ջրատ նամարի	Hydrate de sodium
Ջրափայլ	Hydrophane
Սեաւ յամնաքար	Ambre noir
Սալիքին	Stibine

Վայրահոսութիւն	Précipitation
Վերաբարձութիւն	Sublimation
Տարր	Elément
Տարրաբանական և բարդիլ	Phénomène chimique
Տարրաբանութիւն	Chimie
Տարրաբաշխութիւն	Décomposition
Տարրալուծութիւն	Analyse
Փայտաքար	Lignite
Փուխացութիւն	Pulvérisation
Քաղկեդոնիկ	Calcédoine
Քլորուկ բորակածնի	Chlorure d'azote
Օձապտոյս	Serpentine
Օրենք որոշեալ ամեմատութեանց	Loi des proportions définies
» բաղմապատիկ	» multiples
» տեսակաբար չերմութեանց	» chaleurs spécifiques



184
5-~~181~~



ՀՀ Ազգային գրադարան

NL0685834

